	<p><b>3.3 % Decision making positions (executive, legislative and judicial) occupied by women at national and local levels increased.</b></p> <p><b>BASELINE:</b> [2013]</p> <p>Legislative: 11</p> <p>Judicial: 24</p> <p>Executive: 14</p> <p>Community heads: 1.9</p> <p>Council members: 8.6</p> <p><b>TARGET:</b></p> <p>14</p> <p>30</p> <p>18</p> <p>3</p> <p>15</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Police reports on the number of cases</li> <li>- NGO reports</li> </ul>			
	<p><b>3.4 Availability of an improved, operational system for legal protection of victims of domestic violence</b></p> <p><b>BASELINE:</b> N</p> <p><b>TARGET:</b> Y</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Global Gender Gap report and index, World Economic Forum</li> </ul>			
	<p><b>3.5 Global Gender Gap index scores</b></p> <p><b>BASELINE:</b> [2014]</p> <p>Total 0.662</p> <p>Economic Participation: 0.648</p> <p>Political Empowerment: 0.068</p> <p>Health &amp; Survival: 0.933</p> <p><b>TARGET:</b> [2020]</p> <p>0.666</p> <p>0.660</p> <p>0.072</p> <p>0.946</p>	<ul style="list-style-type: none"> <li>- GoA statistics</li> </ul>			
	<p><b>3.6 Sex ratio at birth</b></p> <p><b>BASELINE:</b> 113</p> <p><b>TARGET:</b> 110</p>				



UNDAF Armenia Results Matrix 2016-2020

Outcomes	Indicators, Baselines, Targets	Means of Verification	Assumptions and Risks	Contributing UN Agencies and Partners	Indicative Resources 2016-2020 (USD)
<p><b>Outcome 4.</b> By 2020, migration, border, and asylum management systems are strengthened to promote and protect the rights of migrants and displaced people, especially women and girls.</p>	<p><b>4.1 No. of legislative amendments serving improved migration and asylum laws that are in line with international and regional standards</b></p> <p><b>BASELINE:</b> 0 <b>TARGET:</b> 4</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Official Guide on legislation</li> <li>- SMS reports</li> <li>- IOM and UNHCR reports</li> <li>- EU reports</li> </ul>	<p><b>Assumptions:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Modernization of government system at all levels is high on government's agenda</li> <li>- Adequate budget allocation for border management and asylum services<sup>1</sup></li> <li>- Receptive approach towards displaced persons is maintained</li> </ul> <p><b>Risks:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Changes in the political and socio-economic situation</li> <li>- Conflict in the wider region resulting in displacement</li> <li>- Insufficient level of donor coordination</li> </ul>	<p><b>UN Agencies contributing to Output:</b> UNHCR, IOM, UNDP</p> <p><b>Key government partners:</b> RA National Assembly, Ministries of Foreign Affairs, Justice, Diaspora, Health, Territorial Administration and Emergency Situations, Labor and Social Affairs and Diaspora</p> <p><b>Other partners:</b> State Employment Agency, National Statistical Service, State Migration Service, RA Police, the National Security Service, Office of the Prosecutor General, Justice Academy, School of Advocates, Chamber of Advocates, trade unions, Union of Entrepreneurs, Regional and Local Authorities, NGOs and think tanks.</p>	<p><b>Regular Resources:</b> \$ 600,000</p> <p><b>Other Resources:</b> \$ 100,000</p> <p><b>Resources to be mobilized:</b> \$ 17,000,000</p> <p><b>Total:</b> <b>\$ 17,700,000</b></p>
	<p><b>4.2 Availability of quality mechanisms to secure effective referral to available services</b></p> <p><b>BASELINE:</b> N <b>TARGET:</b> Y</p>	<ul style="list-style-type: none"> <li>- GoA reports</li> <li>- EU MS reports on implementation of readmission agreement/implementation of voluntary return</li> <li>- Feedback from returning migrants and asylum seekers</li> </ul>			
	<p><b>4.3 Availability of an Integration strategy and action plan</b></p> <p><b>BASELINE:</b> N <b>TARGET:</b> Y</p>	<ul style="list-style-type: none"> <li>- GoA reports</li> <li>- UNHCR reports</li> </ul>			
	<p><b>4.4 No. of displaced persons receiving refugee status, other forms of residence status and/or get naturalised (to be gender and age disaggregated)</b></p> <p><b>BASELINE:</b> 0 <b>TARGET:</b> 10,000</p>	<ul style="list-style-type: none"> <li>- SMS statistical reports</li> <li>- Police statistical reports</li> <li>- IOM and UNHCR reports</li> </ul>			
	<p><b>4.5 Presence of an integrated and modernized border management system at 3 Border Crossing Points, in line with international IBM standards<sup>*</sup></b></p> <p><b>BASELINE:</b> N <b>TARGET:</b> Y</p>	<ul style="list-style-type: none"> <li>- GoA reports</li> <li>- Programme reports</li> </ul>			
	<p><b>4.6 Comprehensive and streamlined Counter-trafficking Assessment Tool is available for the government and non-government stakeholders in Armenia</b></p> <p><b>BASELINE:</b> N <b>TARGET:</b> Y</p>	<ul style="list-style-type: none"> <li>- GoA reports</li> <li>- IOM reports</li> </ul>			

<sup>\*</sup> Standards relate to: Veterinary-Phytosanitary and Sanitary-Quarantine control equipment and IT infrastructure

## UNDAF Armenia Results Matrix 2016-2020

### Pillar III. Social services and inclusion

**National development goals:** Improvement of social protection systems<sup>5</sup> – Activities aimed at improvement of the social protection system will be geared at improvement of the effectiveness of current systems (including improvement of the targeting) and creation of the basis for financial stability in the long-term, ensuring provision of comprehensive social guarantees, essential reduction of social risks and reduction of poverty.

**SDGs:** 4. Ensure inclusive and equitable quality education and promote life-long learning opportunities for all; 4.1 by 2030, ensure that all girls and boys complete free, equitable and quality primary and secondary education leading to relevant and effective learning outcomes; 4.8 build and upgrade education facilities that are child, disability and gender sensitive and provide safe, non-violent, inclusive and effective learning environments for all.

Outcomes	Indicators, Baselines, Targets	Means of Verification	Assumptions and Risks	Contributing UN Agencies and Partners	Indicative Resources 2016-2020 (USD)
<p><b>Outcome 5.</b> By 2020, vulnerable groups* have improved access to basic education and social protection services and participate in their communities.</p> <p>* Vulnerable groups most relevant for this outcome are: children with special needs, children of school age, users of social services</p>	<p><b>5.1 % of schools delivering quality life-skills education adequately trained teachers and sufficient financial resources</b></p> <p><b>BASELINE:</b> [2015] 45 <b>TARGET:</b> [2020] 90</p>	<ul style="list-style-type: none"> <li>- MoE reports</li> <li>- Programme reports</li> <li>- Surveys/assessments</li> </ul>	<p><b>Assumptions:</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Law on Education is enforced with a special provision on inclusive education</li> <li>2. Adequate budget allocation, policy guidance to integrate social services delivery in all regions/districts, per Law on Social Assistance</li> </ol> <p><b>Risks</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Increased discrimination and stigma towards persons with disabilities</li> <li>2. Global downturn of economy</li> <li>3. Vulnerable groups of population avoid use of social services due to perceived barriers</li> </ol>	<p><b>UN Agencies contributing to Output:</b> UNICEF, UNFPA, UNESCO, WFP, ILO, UNHCR, UNESCO, UNAIDS, UNDP</p> <p><b>Key government partners:</b> Ministries of Health, Culture, Education, Labour and Social Affairs</p> <p><b>Other partners:</b> Local health authorities and civil society organizations.</p>	<p><b>Regular Resources:</b> \$ 7,100,000</p> <p><b>Other Resources:</b> \$ 150,000</p> <p><b>Resources to be mobilized:</b> \$ 14,900,000</p> <p><b>Total:</b> <b>\$ 22,150,000</b></p>

<sup>5</sup> Armenia Prospective Development Strategy for 2014-2025 (2014), Priority 3, pg. 15.

**UNDAF Armenia Results Matrix 2016-2020**

Outcomes	Indicators, Baselines, Targets	Means of Verification	Assumptions and Risks	Contributing UN Agencies and Partners	Indicative Resources 2016-2020 (USD)
	<b>5.2 % of children with disabilities using rehabilitation services</b>	- MoH reports			
	<u>BASELINE: [2012]</u> 23				
	<u>TARGET: [2020]</u> 40				
	<b>5.3 % of children with disabilities not attending school</b>	- "Pyunik" database - School Management System			
	<u>BASELINE: [2012]</u> 18				
	<u>TARGET: [2020]</u> 10				
	Rural: 23 Regional urban: 18 Yerevan: 13				
	<b>5.4 % of primary-grade schools covered under the National school feeding programme</b>	- MoE reports - Programme reports - Assessments - Education statistics portal reports			
<u>BASELINE: [2014]</u> 12					
<u>TARGET: [2020]</u> 85					
<b>5.5 Availability of a Government mechanism to identify needs and services of vulnerable adolescents and young people</b>	- MOE, MOH, MOLSI reports - Needs assessment - Surveys/research				
<u>BASELINE: [2015]</u> N					
<u>TARGET: [2020]</u> Y					
<b>5.6 N° of children with special education needs enrolled in inclusive schools</b>	- MoE reports - Programme reports				
<u>BASELINE: [2014]</u> 3,000					
<u>TARGET: [2020]</u> 6,000					
<b>5.7 % of extremely poor families reached by family benefits</b>	- NSS reports, based on MoLSI data - Programme reports				
<u>BASELINE: [2013]</u> 66					
<u>TARGET: [2020]</u> 85					
<b>5.8 Availability of a data collection and monitoring system to track access to social protection services for vulnerable groups</b>	- Government report Assessment				
<u>BASELINE: [2015]</u> N					
<u>TARGET: [2020]</u> Y					

UNDAF Armenia Results Matrix 2016-2020					
Outcomes	Indicators, Baselines, Targets	Means of Verification	Assumptions and Risks	Contributing UN Agencies and Partners	Indicative Resources 2016-2020 (USD)
<p><b>Outcome 6.</b> By 2020, quality health services are accessible to all, including especially vulnerable groups*.</p> <p><i>*Vulnerable groups most relevant for this outcome are: poor and extremely poor families; children aged 0-5; children with disabilities; women of reproductive age; displaced populations.</i></p>	<p><b>6.1 Private household out-of-pocket expenditure as a proportion of total health expenditure</b></p> <p>BASELINE: [2013] 53%      TARGET: [2020] 43%</p>	<ul style="list-style-type: none"> <li>- MoH reports, based on MoLSI data</li> <li>- Programme reports</li> </ul>	<p><b>Assumptions:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- GoA is committed to further advance gender equality in Armenia</li> <li>- Adequate budget allocation for law and policy implementation</li> </ul> <p><b>Risks:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Varying level of initial capacities of different state institutions concerned</li> <li>- Strong negative attitude towards gender-related issues from certain groups of the population</li> </ul>	<p><b>UN Agencies contributing to Output:</b> UNICEF, UNFPA, UNESCO, WHO, UNAIDS</p> <p><b>Key government partners:</b> Ministry of Health and local health authorities</p> <p><b>Other partners: Institute of Perinatology and Obstetrics and Gynecology, National Statistical Service, State Medical University, National AIDS Center, National Institute of Health, National Center for Disease Control and Prevention SNCO, and NGOs</b></p>	<p><b>Regular Resources:</b> \$ 1,480,000</p> <p><b>Other Resources:</b> \$ 200,000</p> <p><b>Resources to be mobilized:</b> \$ 2,000,000</p> <p><b>Total: \$ 3,680,000</b></p>
	<p><b>6.2 Infant mortality rate per 1,000</b></p> <p>BASELINE: [2012] 10.8      TARGET: [2020] below 10 sustained</p>	<ul style="list-style-type: none"> <li>- MoH report</li> <li>- [Health 2020 indicator 5]</li> </ul>			
	<p><b>6.3 % of children under 1 fully immunized</b></p> <p>BASELINE: [2014] 93      TARGET: [2020] 95</p>	<ul style="list-style-type: none"> <li>- MoH reports</li> <li>- DHS 2010, 2015, 2020</li> <li>- NSS reports (ILCS)</li> </ul>			
	<p><b>6.4 Stunting level in girls and boys under five</b></p> <p>BASELINE: [2010] 19      TARGET: [2020] 11</p> <p>Boys: 20 Girls: 18</p>	<ul style="list-style-type: none"> <li>- MoH reports</li> <li>- Programme reports</li> <li>- DHS</li> </ul>			
	<p><b>6.5 Prevalence of modern contraceptive methods among women (15-49)</b></p> <p>BASELINE: Total: 27%      TARGET: [2020] 32%</p> <p>Poorest 20% quintile of population</p> <p>BASELINE: to be set in 2015      TARGET: 15% increase</p>	<ul style="list-style-type: none"> <li>- MoH reports</li> <li>- Programme reports</li> <li>- DHS</li> </ul>			
	<p><b>6.6 Mortality per 100,000 population due to cardiovascular diseases</b></p> <p>BASELINE: [2012] Total: 441      TARGET: [2020] 419</p>	<ul style="list-style-type: none"> <li>- MoH reports</li> <li>- Programme reports</li> <li>- Health System Performance - Assessment</li> <li>- NSS data</li> </ul>			
	<p><b>6.7 N° of new HIV cases among children</b></p> <p>BASELINE: [2013] 5      TARGET: [2020] 0</p>	<ul style="list-style-type: none"> <li>- MoH reports</li> <li>- National AIDS center reports</li> <li>- UNAIDS report</li> </ul>			
	<p><b>6.8 HIV prevalence among migrants</b></p> <p>BASELINE: [2014] 0.4      TARGET: [2020] 0.4</p>	<ul style="list-style-type: none"> <li>- BBS</li> <li>- National AIDS center reports</li> </ul>			

## UNDAF Armenia Results Matrix 2016-2020

### Pillar IV. Environmental sustainability and resilience-building

**National development goals:** Protection of balanced environment through a resource efficient economy<sup>6</sup> – Activities aimed at protection of the balanced environment will include improvement of the legislative and development of the normative frameworks of environmental policy, promotion of the introduction of environmentally friendly and resource saving technologies, development of incentive mechanisms for environmentally friendly operations, energy and resource preserving incentives, gradual increase of environmental protection and nature use fees (revision of nature use charges), promotion of energy efficiency in all sectors, transition to ‘green economy’. Improvement of quality indicators of the existing forests and founding new forests, implementation measures of international complementation of International Convention principles including climate change, land degradation and biodiversity.

**Emergency prevention<sup>7</sup>** – Activities aimed at emergency prevention will be geared towards comprehensive identification and assessment of risks and development of the disaster early warning system, reduction of risk factors, development and implementation of scientific, technical and targeted programs.

**SDGs:** 13. Take urgent action to combat climate change and its impacts; 13.1 strengthen resilience and adaptive capacity to climate related hazards and natural disasters in all countries; 13.2 integrate climate change measures into national policies, strategies, and planning; 13.b Promote mechanisms for raising capacities for effective climate change related planning and management, including focusing on women, youth, local and marginalized communities.

Outcomes	Indicators, Baselines, Targets	Means of Verification	Assumptions and Risks	Contributing UN Agencies and Partners	Indicative Resources 2016-2020 (USD)
<p><b>Outcome 7.</b></p> <p>By 2020 Sustainable Development principles and good practices for environmental sustainability resilience building, climate change adaptation and mitigation, and green economy are introduced and applied.</p>	<p><b>7.1 Number of innovative tools/approaches introduced to promote environmental sustainability and resilience principles</b></p> <p><b>BASELINE:</b> 0</p> <p><b>TARGET:</b> 20</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Official government website <a href="http://www.arlis.am/">http://www.arlis.am/</a></li> <li>- Official reports. UN web sites.</li> </ul>	<p><b>Assumptions:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Continued GoA and society support for environmental sustainability, green economy, and development, and GhG reductions</li> <li>- Continued GoA commitment to meeting agreements in ratified MEAs</li> <li>- Adequate State budget allocations, esp. for national and regional DRR and CC investments, and for municipal and community initiatives</li> </ul>	<p><b>UN Agencies contributing to Output:</b> UNDP, FAO, UNIDO, UNICEF, OCHA, WFP, UNECE</p> <p><b>Key government partners:</b> Ministries of Nature Protection, Energy and Natural Resources, Economy, Agriculture, Territorial Administration and Emergency Situations, Urban Development; Regional and Local Authorities</p> <p><b>Other partners:</b> National Statistical Service, State Committee on Real Estate Cadastre, DRR National Platform, SME DNC, Armenian Development Foundation, business associations, financial institutions, international and local NGOs.</p>	<p><b>Regular Resources:</b> \$ 2,725,000</p> <p><b>Other Resources:</b> \$ 13,110,000</p> <p><b>Resources to be mobilized:</b> \$ 12,400,000</p> <p><b>Total: \$28,235,000</b></p>

<sup>6</sup> Armenia Prospective Development Strategy for 2014-2025 (2014), pg. 129.

<sup>7</sup> Government of Armenia Program 2014-2017, Section 2.5.5, pg. 72. DRR National Strategy, Chapter 5, Para 36.

## UNDAF Armenia Results Matrix 2016-2020

Outcomes	Indicators, Baselines, Targets	Means of Verification	Assumptions and Risks	Contributing UN Agencies and Partners	Indicative Resources 2016-2020 (USD)
	<p><b>7.2 Number of communities benefiting from innovative disaster risk reduction/resilience measures and practices</b></p> <p><b>BASELINE:</b> 0</p> <p><b>TARGET:</b> 500</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Official website of the Ministry of Territorial Administration and Emergency Situations: <a href="http://www.mta.gov.am/en/">http://www.mta.gov.am/en/</a></li> <li>- National Platform on DRR website <a href="http://www.arnap.am/">http://www.arnap.am/</a></li> <li>- National official reports.</li> </ul>	<p><b>Risks:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Change in the internal and external political priorities</li> <li>- Global downturn of economy</li> <li>- Regional conflict</li> </ul>		
	<p><b>7.3 Number of hectares of rehabilitated landscapes and areas demonstrating sustainable use practices</b></p> <p><b>BASELINE:</b> 0</p> <p><b>TARGET:</b> 20,000 ha</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Official government web site <a href="http://www.mta.gov.am/en/">http://www.mta.gov.am/en/</a></li> <li>- Official reports. UN web sites.</li> </ul>			
	<p><b>7.4 Number of policy documents/legal acts for, and CO2 equivalent emission reduction from application of climate change adaptation and mitigation.</b></p> <p><b>BASELINE:</b> 0</p> <p><b>TARGET:</b> 10 policy documents/legal acts 90 kton CO<sub>2</sub> equivalent</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Official government web site <a href="http://www.arlis.am/">http://www.arlis.am/</a></li> <li>- <a href="http://www.nature-ic.am">www.nature-ic.am</a></li> <li>- National official reports. UN web sites.</li> </ul>			
	<p><b>7.5 Number of people and enterprises benefiting from application of green technologies and green jobs</b></p> <p><b>BASELINE:</b> 0 0</p> <p><b>TARGET:</b> 80 people 550 enterprises</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Official reports, articles, websites</li> <li>- <a href="http://www.unido.org/">www.unido.org/</a> <a href="http://www.am.undp.org">www.am.undp.org</a></li> <li>- Small grants programme web site <a href="http://www.sgp.am/">http://www.sgp.am/</a></li> </ul>			

**ՀԱՅԱՍՏԱՆ-ՄԱԿ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳԻՐ  
2016-2020**



Երևան, 31 հուլիսի, 2015թ.

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

2015 թվականի հուլիսի 31-ին Հայաստանի Հանրապետության կառավարության (ՀՀ կառավարություն) և Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) միջև համաձայնեցված սույն Զարգացման աջակցության ծրագիրն իրենից ներկայացնում է ռազմավարական ծրագրային շրջանակ, որը 2016 թվականից մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում որպես ուղեցույց է ծառայելու ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի միջև իրականացվելիք համագործակցության համար: Սույն ծրագրով ընդգծվում է Հայաստանի տեսլականը և երկրի բնակչության կենսամակարդակը բարձրացնելու պատրաստակամությունը՝ միաժամանակ հաշվի առնելով այն իրողություններն ու հնարավորությունները, որոնք պայմանավորված են Հայաստանի՝ որպես միջինից ցածր եկամուտ ունեցող երկրի զբաղեցրած դիրքով: Ծրագիրը հիմնված է լինելու ստեղծագործ ու նորարարական մոտեցումների վրա և ներգրավելու է զարգացման ոլորտի ոչ ավանդական գործընկերներին և դոնորներին:

ՀՀ կառավարությունը և ՄԱԿ-ը միասին փոխադարձ պատասխանատվություն են կրում և հաշվետու են նախատեսված արդյունքների կատարման համար: Որպես հիմք ընդունելով իր համեմատական առավելությունները՝ ՄԱԿ-ն իր աջակցությունը կապահովի միջազգային չափանիշներին և լավագույն գործելակերպերին համապատասխան քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և այնպիսի նախաձեռնություններ իրականացնելու միջոցով, որոնք նպատակաուղղված կլինեն ազգային և տեղական կարողությունների զարգացմանը ու ինստիտուցիոնալացմանը՝ ապահովելով առկա ազգային ռազմավարությունների, քաղաքականությունների և ծրագրերի իրագործումն ու մոնիտորինգը: ՄԱԿ-ը, գործելով իր գործակալություններից յուրաքանչյուրի կանոններին և ընթացակարգերին համահունչ, կորդեգրի համատեղ աշխատանքների իրականացման ընդհանուր, պարզեցված և ներդաշնակ գործելակերպեր: Այն կապահովի թափանցիկությունը և հաշվետվողականությունը՝ բարձրացնելով զարգացման արդյունքների կատարման ուղղությամբ ձեռնարկվող գործողությունների արդյունավետությունը: Հնարավորության սահմաններում՝ ՄԱԿ-ը կորդեգրի «գործողությունների միասնականության» սկզբունքները:

ՄԱԿԶԱԾ-ի միջոցով հզորացվում է ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի միջև հաստատված ամուր գործընկերությունը: Ակնկալվող արդյունքները, առաջընթացի գնահատման ցուցանիշները և ռազմավարությունները ձևավորում են փոխադարձ հաշվետվողականության միջավայր՝ սահմանելով ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի կողմից զարգացման արդյունքների ապահովման եղանակները: Դրանք ներառում են՝ համատեղ իրականացվող համակարգման և իրագործման միջոցառումները, միջոցների համատեղ հավաքագրումը, ինչպես նաև առաջընթացի արդյունավետ մոնիտորինգը հաշվետվությունների ներկայացումն ու գնահատումը:

Զարգացման ոլորտում համագործակցության ակնկալվող յոթ հիմնական արգասիքները, որոնք կոչվում են «արդյունքներ», միասնաբար սահմանվել են ՀՀ կառավարության, ՄԱԿ-ի հայաստանյան թիմի և քաղաքացիական հասարակության կողմից: Այդ արդյունքները համապատասխանեցված են ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում<sup>1</sup> ամրագրված առաջնահերթություններին և Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ-ներ)<sup>2</sup>: Նշված արդյունքները ձևավորվել են ՄԱԿ-ի հայաստանյան թիմի համեմատական առավելությունների հիման վրա և կոչված են աջակցելու «Հետ-2015» Օրակարգի իրականացմանը, քանի որ 2016 թվականից սկսած՝ ԿԶՆ-ները կլինեն երկրի մակարդակով ՄԱԿ-ի գործունեության առանցքային հիմքը: ՄԱԿԶԱԾ-ի հիմքում ընկած են նաև հետևյալ հինգ ծրագրային սկզբունքները՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում, գենդերային հավասարություն, շրջակա միջավայրի կայունություն, արդյունքներին միտված կառավարում և կարողությունների զարգացում<sup>3</sup>:

<sup>1</sup> ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (2014թ.):

<sup>2</sup> Կայուն զարգացման նպատակներ և թիրախներ, <http://sustainabledevelopment.un.org/focussdgs.html>, 2014թ. սեպտեմբեր:

<sup>3</sup> ՄԱԿ-ի Զարգացման խմբի Ուղեցույց-նշում՝ «Ծրագրման սկզբունքների կիրառումը ՄԱԿԶԱԾ-ում» <https://undg.org/wp-content/uploads/2014/12/GuidanceNote-Application-Programming-Principles-UNDAF-2010.pdf> (2010թ.):



Արդյունքների կիզակետում դրված են՝ արդարացի տնտեսական աճի խթանումը, շրջակա միջավայրի կառավարման բարելավումը, հաշվետվողականության ամրապնդումը և որակյալ սոցիալական ծառայությունների մատուցումը: Յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված ռազմավարությունների ընդհանուր խնդիրներն են խոցելի խմբերին ծրագրում ընդգրկելը և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման հարցում վերջինիս աջակցելը: ՄԱԿԶԱԾ-ի արդյունքները խմբավորված են հետևյալ չորս սյուների ներքո՝

**1. Արդարացի, կայուն տնտեսական զարգացում և աղքատության կրճատում**

Արդյունք 1. Մինչև 2020 թվականը Հայաստանի մրցունակությունը բարելավվել է, իսկ կայուն տնտեսական հնարավորությունները առավել հասանելի են դարձել մարդկանց՝ հատկապես խոցելի խմբերի համար:

**2. Ժողովրդավարական կառավարում**

Արդյունք 2. Մինչև 2020 թվականը մարդիկ օգտվում են ժողովրդավարական կառավարման բարելավված համակարգերից և մարդու իրավունքների ամրապնդված պաշտպանությունից:

Արդյունք 3. Մինչև 2020 թվականը Հայաստանն արձանագրել է ավելի մեծ առաջընթաց գենդերային անհավասարության նվազեցման առումով և կանայք ավելի լայն հնարավորություններ ունեն ու քիչ հավանական է, որ ենթարկվեն ընտանեկան բռնության:

Արդյունք 4. Մինչև 2020 թվականը միգրացիայի, սահմանների և ապաստանի կառավարման համակարգերն ամրապնդվել են՝ միգրանտների և տեղահանված անձանց, հատկապես՝ կանանց ու աղքատների իրավունքները խթանելու և պաշտպանելու նպատակով:

**3. Սոցիալական ծառայություններ և ներառում**

Արդյունք 5. Մինչև 2020 թվականը խոցելի խմբերն ունեն տարրական կրթությունից և սոցիալական պաշտպանության ծառայություններից օգտվելու ավելի մեծ հնարավորություններ և մասնակցում են իրենց համայնքների կյանքին:

Արդյունք 6. Մինչև 2020 թվականը որակյալ առողջապահական ծառայությունները հասանելի են դարձել բոլորի, այդ թվում՝ առանձնապես խոցելի խմբերի համար:

**4. Շրջակա միջավայրի կայունություն և դիմակայունության ձևավորում**

Արդյունք 7. Մինչև 2020 թվականը ներդրվել և կիրառվում են կայուն զարգացման սկզբունքները, շրջակա միջավայրի կայունության, դիմակայունության ձևավորման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, ինչպես նաև կանաչ տնտեսության լավագույն գործելակերպերը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր .....	48
Հապավումների ցանկ.....	51
Հանձնառությունների հռչակագիր.....	53
Ստորագրություններ .....	54
1. Ներածություն .....	55
1.1 Գործընկերության սկզբունքները.....	56
1.2 ՄԱԿԶԱԾ-ի մշակման գործընթացը .....	57
1.3 Իրավիճակի վերլուծություն .....	58
1.4 ՄԱԿԶԱԾ-ի գնահատման (2010-2015թթ.) եզրակացությունները և առաջարկությունները .....	61
2. Արդյունքներ և ռազմավարություններ.....	64
2.1 Սյուներ .....	64
Աղյուսակ. Սյուների և արդյունքների համառոտ նկարագրություն .....	65
2.2 Ծրագրային ռազմավարություններ .....	66
2.3 Արդյունքներ .....	68
1-ին սյուն. Արդարացի, կայուն տնտեսական զարգացում և աղքատության կրճատում .....	68
2-րդ սյուն. Ժողովրդավարական կառավարում .....	71
3-րդ սյուն. Սոցիալական ծառայություններ և ներառում .....	78
4-րդ սյուն. Շրջակա միջավայրի կայունություն և դիմակայունության ձևավորում .....	86
3. Պահանջվող միջոցներ և միջոցների հավաքագրում.....	90
Պահանջվող միջոցներ.....	90
Միջոցների հավաքագրում.....	90
Աղյուսակ. Պահանջվող միջոցները՝ ըստ ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների (2016-2020թթ.) .....	91
4. Համակարգում և իրագործում .....	92
ՄԱԿԶԱԾ-ի համակարգող խորհուրդ .....	93
Արդյունքի խմբեր .....	93
Գործառնությունների կառավարման թիմ.....	95
Հաղորդակցության խումբ .....	96
5. Մոնիտորինգ, հաշվետվությունների ներկայացում և գնահատում ....	96
ՄԱԿԶԱԾ-ի տարեկան վերանայում.....	97
ՄԱԿԶԱԾ-ի գնահատում .....	97
Ռիսկեր և ենթադրություններ .....	98
ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Հայաստանի 2016-2020 թթ. ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների աղյուսակ .....	99

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԽ	Արդյունքի խմբեր
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՌԿ	Աղետների ռիսկի կառավարում
ԱՌԽ	Աղետների ռիսկի նվազեցում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲԱԱՊԿ	Բնությանը անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա
ԲԲՀ	Բազմակողմ բնապահպանական համաձայնագիր
ԳԿԹ	Գործառնությունների կառավարման թիմ
ԳՐԵԿՈ	Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի
ԵԻԿ	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
ԽԴԿ	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿՆԻՎԿ	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
ԿՌԿ	Կլիմայական ռիսկերի կառավարում
ՀԱԻԿ	Հաշմանդանություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակ
ՀԽ	Համակարգող խորհուրդ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՊԴ	Հանրնդհանուր պարբերական դիտարկում
ՀՏՖ	Համաշխարհային տնտեսական ֆորում
ՀՈՒԱ	Հաշմանդանություն ունեցող անձինք
ՄԱԱԶԽ	ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման խորհրդաժողով
ՄԱԱԶԿ	ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԹՀՊԳ	ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ
ՄԱԿ ԱԽՏԱՀ	ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան հարցերով տնտեսական և սոցիալական հանձնաժողով
ՄԱԿ ԵՏՀ	ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով

ՄԱԿ ԶԽ	ՄԱԿ-ի Զարգացման խումբ
ՄԱԿ ԿՓՇԿ	ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիա
ՄԱԿ ՄՀ	ՄԱԿ-ի մշտական համակարգող
ՄԱԿ ՓԳՀ	ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
ՄԱԿԱԿԴՏԿ	ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայում կանխարգելիչ դիվանագիտության տարածաշրջանային կենտրոն
ՄԱԿԳՄԿ	ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
ՄԱԿԶԱԾ	Հայաստան-ՄԱԿ Զարգացման աջակցության ծրագիր
ՄԱԿ-Կանայք	ՄԱԿ-ի Գենդերային հավասարության ու կանանց հնարավորությունների ընդլայնման կառույց
ՄԱԶԻԱՀ	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագիր
ՄԱՄԿ	Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիա
ՄԱՄՀ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՄԱՆՌԳ	ՄԱԿ-ի Աղետների նվազեցման ռազմավարության գրասենյակ
ՄԱՇՄԾ	ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄԳՀԳ	Մարդասիրական գործերի համակարգման գրասենյակ
ՄԵԿ	Միջին եկամուտ ունեցող երկիր
ՄԻԳՀԳ	ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ
ՄԻՊԳԱԾ	Մարդու իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագիր
ՄՀԹ	ՄԱԿ-ի հայաստանյան թիմ
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՊԳԿ	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
ՊՀԾ	Պարենի համաշխարհային ծրագիր
ԶԳ	Զերմոցային գազ
ՌԽՎԿ	Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՍՄԻՄԴ	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր



# ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՌ-ՉԱԿԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (ՀՀ կառավարություն) և Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան թիմը<sup>1</sup> (ՄԱԿ-ի հայաստանյան թիմ) պատրաստական են աշխատել միասին և Հայաստանի ժողովրդի հետ՝ նպատակ ունենալով ապահովել երկրի զարգացման առաջնահերթությունների կատարումը և օգնել Հայաստանի բնակչությանը ապրելու առավել երկար, առողջ և բարգավաճ կյանքով:

Հայաստան-ՄԱԿ Զարգացման աջակցության ծրագիրն իրենից ներկայացնում է ռազմավարական ծրագրային շրջանակ, 2016 թվականից 2020 թվականն ընկած ժամանակահատվածում որպես ուղեցույց է ծառայելու զարգացման ոլորտում իրականացվելիք համագործակցության համար: Սույն ծրագրի միջոցով հզորացվում են ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի միջև հաստատված ամուր հարաբերությունները՝ հնարավորությունն ընձեռելով սերտորեն համագործակցել ազգային զարգացման առաջնահերթությունների, «Հետ-2015» Օրակարգի, Կայուն զարգացման նպատակների իրականացմանն և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում երկրի ստանձնած պարտավորությունների, ինչպես նաև միջազգային մակարդակով համաձայնեցված զարգացման նպատակների և պայմանագրային պարտավորությունների կատարման ուղղությամբ: Այս գործընկերության շրջանակներում ակնկալվող յոթ (7) հիմնական արգասիքները, որոնք կոչվում են «արդյունքներ», միասնաբար սահմանվել են ՄԱԿ-ի, ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության գործընկերների կողմից: Նշված արդյունքները համապատասխանեցված են ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում ամրագրված գերակայություններին և Կայուն զարգացման նպատակներին<sup>2</sup>: ՄԱԿ-ԶԱԾ-ի արդյունքները խմբավորված են չորս ռազմավարական սյունների ներքո.

1. Արդարացի, կայուն տնտեսական զարգացում և աղքատության կրճատում,
2. Ժողովրդավարական կառավարում,
3. Սոցիալական ծառայություններ և ներառում,
4. Շրջակա միջավայրի կայունություն և դիմակայունության ձևավորում:

Համագործակցության նախորդ փորձից քաղված դասերի հիման վրա սահմանված յոթ արդյունքներն իրագործելի են, ունեն էական նշանակություն և դրանք հնարավոր է գնահատել: Արդյունքների կատարմանը զուգահեռ կգործեն համատեղ ղեկավարման ու համակարգման, արդյունքների մոնիտորինգի և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմներ:

ՄԱԿ-ԶԱԾ-ն իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի միջև փոխադարձ հաշվետվողականության միջավայր, որը կոչված է՝ ապահովելու Հայաստանի ժողովրդի հետ համագործակցության ոգով նրանց համատեղ աշխատանքը: Սույն ծրագրի իրագործումից ակնկալվող արդյունքների միջոցով կընդլայնվեն ՀՀ կառավարության և Հայաստանի ժողովրդի կարողությունները, հնարավորությունները և ընտրության տարբերակները՝ խթանելով նրանց մարդկային զարգացումը և իրավունքները:

ՀՀ կառավարություն

ՄԱԿ-ի հայաստանյան թիմ

Ն. Գ. արն. Հովիկ Աբրահամյան  
ՀՀ վարչապետ

արն. Բրեդլի Բուզետտո  
ՄԱԿ-ի մշտական համակարգող

31 հուլիսի, 2015թ.  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

<sup>1</sup> «ՄԱԿ-ի հայաստանյան թիմ» հասկացությունն ընդգրկում է ՄԱԿ-ի Հայաստանում իրականացրած ամբողջ գործունեությունն իր՝ երկրում մշտական ներկայացուցչություն ունեցող և չունեցող գործակալությունների, հիմնադրամների և ծրագրերի շրջանակներում:

<sup>2</sup> Կայուն զարգացման նպատակներ և թիրախներ, <http://sustainabledevelopment.un.org/focussdgs.html>, 2014թ. սեպտեմբեր:



## Ստորագրություններ

Ստորև դրված իրենց ստորագրություններով Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան թիմի անդամները հաստատում են Հայաստանի-ՄԱԿ Զարգացման աջակցության ծրագիրը (2016-2020թթ.) և ընդգծում են դրանում ամրագրված նպատակների ուղղությամբ աշխատելու իրենց համատեղ պատրաստակամությունը:

	Անուն, Ազգանուն	Գործակալություն <sup>3</sup>	Ստորագրություն
1	պրն Բրեդլի Բուզետտո	ՄԱԿ-ի մշտական համակարգող ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ ՄԱԲՀ-ի ներկայացուցիչ	
2	տկն Հենրիետ Արենս	ՄԱՄՀ-ի ներկայացուցիչ	
3	պրն Քրիստոֆ Բիերվիրթ	ՄԱԿՓՀԳ-ի ներկայացուցիչ	
4	տկն Պասկալ Միշո	ՊՀԾ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն և ներկայացուցիչ	
5	տկն Ժուլիաննա Յակար	Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տնօրեն	
6	տկն Օլգա Մեմեդովիչ	ՄԱԱԶԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բյուրոյի ղեկավար	
7	պրն Թոնի Ալոնզի	ՊԳԿ-ի տարածաշրջանային ներկայացուցչի տեղակալ և Հայաստանում ՊԳԿ-ի ներկայացուցիչ	
8	տկն Դիմիտրինա Դիմիտրովա	ԱՄԿ-ի Արժանապատիվ աշխատանքի թիմի և Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի երկրների գրասենյակի տնօրեն	
9	պրն Տիգրան Եպոյան	Մոսկվայում ՄԱԿԳՄԿ-ի գրասենյակի պատասխանատու	
10	պրն Վինսենտ Պատրիկ Սալդանա	ՄԱԶԻԱՀ-ի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային աջակցության խմբի տնօրեն	
11	տկն Զամիրա Էշամբետովա	ՄԱԿ ԵՏՀ-ի Ծրագրի կառավարման գրասենյակի տնօրեն	
12	պրն Յոհակիմ Ռեյթեր	ՄԱԱԶԽ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ	

<sup>3</sup> Թեև ՄՄԿ-ն չի հանդիսանում ՄԱԿ-ի կառույց, այն ՄԱԿ-ի և ՄԱԿ-ի Զարգացման խմբի անմիջական գործընկերն է և մասնակցելու է ՄԱԿԶԱԾ-ի իրագործմանը՝ որպես համագործակցող և իրականացնող գործընկեր, այդ թվում՝ ՄԱԿԶԱԾ-ի շրջանակներում համատեղ ծրագրերի և յուրաքանչյուր գործակալության համար մշակված ծրագրերի միջոցով՝ առաջնորդվելով ՄՄԿ-ի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի միջև կնքված Փոխընթերցման Հուշագրով և ՄԱԿ-ի Զարգացման խմբի՝ գործունեության և աշխատանքի մեխանիզմներով:

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՄԱԿԶԱԾ-ի նպատակը

2016-2020թթ. Հայաստան-ՄԱԿ Զարգացման աջակցության ծրագիրն (ՄԱԿԶԱԾ) իրենից ներկայացնում է ռազմավարական ծրագրային շրջանակ, որը նախատեսված է ազգային զարգացման նպատակների իրականացմանը նպաստող արդյունքների ապահովման համար: Այն ներառում է յոթ հիմնական արգասիքներ, որոնք կոչվում են «արդյունքներ» և որոնք սահմանվել են ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի հետ համատեղ՝ արդյունքների շրջանակի նախնական մշակման գործընթացում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ: Ծրագրում նկարագրվում են նաև ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի կողմից իրենց ստանձնած պարտավորությունների, այդ թվում՝ համատեղ հանձնառությամբ իրականացվող համակարգման և իրագործման միջոցառումների, գործընկերությունների, ռեսուրսների համակարգված հավաքագրման, ինչպես նաև առաջընթացի արդյունավետ մոնիտորինգի, հաշվետվությունների ներկայացման և գնահատման իրականացման եղանակները:

Միջին եկամուտ ունեցող երկրի համար՝ ինչպես Հայաստանն է (միջինից ցածր եկամուտ ունեցող կատեգորիա), զարգացման ոլորտում համագործակցության համար անհրաժեշտ արտաքին աղբյուրներից ստացված ռեսուրսները նվազում են: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը և ՄԱԿ-ը պետք է ձգտեն այնպիսի արդյունքների ապահովմանը, որոնք կառնչվեն բոլոր գործընկերներին և իրենց բնույթով կլինեն ռազմավարական, որոշակի և որոնք հնարավոր կլինի գնահատել: ՄԱԿԶԱԾ-ի շրջանակներում նախատեսված արդյունքներին հասնելու առաջնային պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը դրված է ՀՀ կառավարության վրա: Որպես հիմք ընդունելով իր համեմատական առավելությունները՝ ՄԱԿ-ն իր աջակցությունն ապահովելիս հիմնական շեշտադրումը կդնի միջազգային նորմերին, չափանիշներին և լավագույն գործելակերպերին համապատասխան քաղաքականությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև այնպիսի ջանքերի գործադրման վրա, որոնք

նպատակաուղղված կլինեն ազգային և տեղական նախաձեռնությունները սատարելուն՝ ամրապնդելով առկա ազգային ռազմավարությունների, քաղաքականությունների և ծրագրերի իրագործումն ու մոնիտորինգը:

Սույն ՄԱԿԶԱԾ-ում ամրագրված ռազմավարությունների և ակնկալվող արդյունքների կատարումը հնարավոր կլինի ապահովել միայն ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի միջև փոխադարձ հանձնառությունների ստանձնման պարագայում: Կառավարմանն առնչվող միջոցառումների միջոցով կապահովվի արդյունքների կատարման ուղղությամբ ՀՀ կառավարության, ՄԱԿ-ի և այլ գործընկերների կողմից աջակցության համաձայնեցված և հետևողական տրամադրումը, ինչը կնպաստի համատեղ ծրագրերի մշակմանը, կրճատի գործողությունների կրկնակի իրականացումը, իսկ թիրախային ոլորտներում և խոցելի խմբերի համար կապահովվի համակցված աջակցություն<sup>4</sup>:

## ՄԱԿԶԱԾ-ի կառուցվածքը

- ▶ 1-ին բաժնում շարունակվում է ՄԱԿԶԱԾ-ի կարևորագույն սկզբունքների և դրա նախապատրաստման գործընթացի նկարագրությունը, ինչպես նաև ներկայացվում է զարգացման ներկայիս համատեքստի ամփոփ պատկերը:
- ▶ 2-րդ բաժինն իրենից ներկայացնում է փաստաթղթի հիմնական մասը: Դրանում նկարագրվում են ՀՀ կառավարություն և ՄԱԿ-ի միջև զարգացման ոլորտում համագործակցության սյուները և ակնկալվող 7 արդյունքները:
- ▶ 3-րդ բաժնում նկարագրվում են ֆինանսական և մարդկային ռեսուրսների հետ կապված՝ ՄԱԿ-ի հայաստանյան թիմի ստանձնած այն հանձնառու-

<sup>4</sup> Սույն փաստաթղթի շրջանակներում «խոցելիությունը» ընկալվում է՝ որպես որոշ ռիսկերի մեծապես ենթարկվելու վիճակ, որը զուգորդվում է ինքն իրեն այդ ռիսկերից պաշտպանելու կամ դրանց դիմագրավելու և դրանց բացասական հետևանքները հաղթահարելու համար առավել նվազ կարողությամբ: Այս սահմանման հիման վրա՝ ՄԱԿ-ի գործակալությունների կողմից յուրաքանչյուր արդյունքի համար որպես թիրախ են ընտրվել հատուկ խոցելի խմբեր:

թյունները, որոնք նպատակաուղղված են ՄԱԿԶԱԾ-ի իրագործմանն աջակցելուն, ինչպես նաև ռեսուրսների համատեղ հավաքագրման հարցում որդեգրված մոտեցումները:

- ▶ 4-րդ բաժնում նկարագրվում են համատեղ համակարգման և իրագործման մեխանիզմներն ու գործընթացները:
- ▶ 5-րդ բաժնում համառոտ շարադրվում են ակնկալվող արդյունքների մոնիտորինգի, հաշվետվությունների ներկայացման և գնահատման միջոցառումները, որոնք հիմնված են արդյունքների աղյուսակի և ՄԱԿ-ի աջակցող գործակալությունների և դրանց գործընկերների աշխատանքային ծրագրերի վրա:

**Արդյունքների աղյուսակն** ամբողջությամբ՝ ներառյալ ցուցանիշները, ելակետերը և թիրախները ներկայացվում են **Հավելված Ա-ում**:

## 1.1 Գործընկերության սկզբունքները

ՄԱԿԶԱԾ-ի միջոցով հզորացվում են ՀՀ կառավարություն, քաղաքացիական հասարակության և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի միջև հաստատված ամուր հարաբերությունները՝ հնարավորություն ընձեռելով սերտորեն համագործակցել ազգային զարգացման առաջնահերթությունների, Կայուն զարգացման նպատակների, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում երկրի ստանձնած պարտավորությունների, ինչպես նաև միջազգային մակարդակով համաձայնեցված զարգացման նպատակների և պայմանագրային պարտավորությունների կատարման ուղղությամբ:

Որպես ռազմավարական ծրագրային փաստաթուղթ՝ ՄԱԿԶԱԾ-ն կարևորում է թափանցիկության, գործընկերության և հաշվետվողականության սկզբունքները: Ծրագրում ներկայացվում է ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի՝ համակարգված, համաձայնեցված և հետևողական աշխատանք իրականացնելու հանձնառությունը: Այս գործընկերությունից ակնկալվող

կոնկրետ արդյունքները, ինչպես նաև ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի միջև համաձայնեցված ռազմավարությունները նպաստելու են արդարացի տնտեսական աճին, նվազեցնելու են անհավասարության դրսևորումները և խոցելի երևույթները, ապահովելու են մարդու իրավունքների լիարժեք իրացումը՝ ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների վերաբերյալ կոնվենցիաներով և Հայաստանի սահմանադրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, ամրապնդելու են հաշվետվողականության համակարգերը և սատարելու են որակյալ և ներառական սոցիալական ծառայությունների մատուցմանը: Բացի այդ, կոնկրետ արդյունքների և ռազմավարությունների կիզակետում դրված է խոցելի խմբերի ընդգրկման և նրանց իրավունքների իրացումն ապահովելու խնդիրը:

ՄԱԿԶԱԾ-ի դրույթները մեկնաբանվելու և իրագործվելու են Միավորված ազգերի կազմակերպության համակարգում ընդգրկված գործակալությունների և ՀՀ կառավարության միջև կնքված հիմնական համաձայնագրերի դրույթներին համապատասխան:

Գործընկերների դերակատարումները և պարտականությունները, ստորև նկարագրվածի համաձայն, պետք է համահունչ լինեն ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների կատարման ամբողջ ընթացքում, իսկ յուրաքանչյուր արդյունքի կատարման համար նշված է գործընկերների սահմանված շրջանակը:

- **Պետական կազմակերպությունները** ստանձնելու են ՄԱԿԶԱԾ-ի իրականացման ամբողջական պատասխանատվությունը և համատեղ կերպով ղեկավարելու են ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների կատարմանն ուղղված՝ համակարգման, դյուրացման և վերահսկողական աշխատանքների իրականացումը:
- **Զարգացման և մարդասիրական աջակցության ոլորտում գործող միջազգային գործընկերները** ներգրավվելու են իրենց համապատասխան մանդատների և գործընկերության համաձայնագրերի շրջանակներում, որոնցով սահմանվում են տեխնիկական աջակցություն տրամադրելու, մասնագիտական գիտելիքներ և (կամ) համաֆինանսավորում ապահովելու՝ նրանց դերակատարումները:



- **Քաղաքացիական հասարակությունն** իր աջակցությունն է տրամադրելու՝ ներկայացնելով իր տեսլականը, համապատասխան մասնագիտական գիտելիքները, դյուրացնելով հանրային մասնակցությունը, քարոզչության իրականացումը, տեղեկատվության մատչելիությունը և բարձրացնելով իրազեկվածության մակարդակը: Նրանց ներգրավվածությունն ապահովվելու է պարբերաբար անցկացվող խորհրդակցությունների միջոցով, գործընկերության համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև ծառայությունների տրամադրման նպատակով ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով:
- **Մասնավոր հատվածն** իր աջակցությունն ապահովելու է տեխնիկական աջակցության տրամադրման և համաֆինանսավորման միջոցով: Նրանց ներգրավվածությունն ապահովվելու է հանրային-մասնավոր մեխանիզմի կամ գործընկերության առանձին պայմանագրերի շրջանակներում:

## 1.2 ՄԱԿԶԱԾ-ի մշակման գործընթացը

2014 թվականի ապրիլին տեղի ունեցած ՄԱԿ-ի հայաստանյան թիմի գործնական հանդիպման շրջանակներում սահմանվեցին Հայաստանում 2016-2020 թվականներին ՄԱԿ-ի համագործակցության առանցքային թեմաները: Հանդիպմանը հաջորդած ամիսների ընթացքում այդ թեմաները մասնավորապես ներկայացվել են ազգային գործընկերների հետ և ավարտուն տեսքի են բերվել՝ որպես ՄԱԿԶԱԾ-ի հիմնական սյուներ: ՄԱԿԶԱԾ-ի մշակման ամբողջ ընթացքում ՄԱԿ-ի հայաստանյան թիմն ու իր գործընկերներն առաջնորդվել են համապատասխան ճանապարհային քարտեզով:

ՄԱԿԶԱԾ-ի մշակման գործընթացի շրջանակներում որպես իրազեկման աղբյուր է ծառայել 2010-2015թթ. ՄԱԿԶԱԾ-ի անկախ գնահատումը: Հետագա փուլերում ՄԱԿԶԱԾ-ի աշխատանքային խմբերում ներգրավված ՄԱԿ-ի գործակալությունների, պետական և հասարակական կազմակերպությունների գործընկերների համար ան-

ցկացվել են ՄԱԿ-ի ծրագրային սկզբունքների վերաբերյալ աշխատաժողովներ, որոնց ընթացքում հատուկ շեշտադրում է կատարվել արդյունքներին միտված կառավարման և մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման վրա: Բացի այդ, ՄԱԿԶԱԾ-ի մշակման ընթացքում որպես տեղեկատվության լրացուցիչ աղբյուր են հանդիսացել ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացված «Հետ-2015» Զարգացման օրակարգի շուրջ ազգային խորհրդակցությունների արդյունքներն ու առաջարկությունները: Համայնքային քննարկումների ձևաչափով անցկացված լայնամասշտաբ և բազմաթիվ շահառուների ներգրավմամբ խորհրդակցությունների արդյունքում սահմանվեցին հետևյալ առաջնահերթությունները՝ ա) աճ և զբաղվածություն, բ) առողջություն, գ) անհավասարություն, դ) շրջակա միջավայր, ե) խաղաղ և ներառական հասարակություն և զ) պարենային ապահովություն<sup>5</sup>: Կիրառելով հանրային կարծիքի վերհանման նույն մոտեցումը՝ ՄԱԶԾ-ի նորարարական լաբորատորիայի կողմից մշակվեց կանխատեսումների մասին հարցումը, և դրա շնորհիվ ապահովվեց լրացուցիչ օժանդակություն՝ երկրի զարգացման միտումների վերաբերյալ անմիջապես քաղաքացիներից ստացված տեղեկությունների միջոցով:

Բոլոր արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել են 2014 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած Ռազմավարական առաջնահերթությունների որոշման գործնական հանդիպման (ՌԱՈԳՀ) շրջանակներում, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի և ՀՀ կառավարություն համատեղ ուժերով և անցկացվել էր նախարարությունների, երկրում մշտական ներկայացուցչություն ունեցող և չունեցող ՄԱԿ-ի գործակալությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության բազմաթիվ կազմակերպությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ: ՌԱՈԳՀ-ի շրջանակներում մշակվեց արդյունքների նախնական ցանկը, որը հետագայում կատարելագործվեց և ընդգրկվեց 4 սյուների ներքո խմբավորված՝ սույն ՄԱԿ-

<sup>5</sup> «Հետ-2015» Զարգացման օրակարգ. «Ապագան, որ ուզում ենք», ազգային խորհրդակցություններ, Հայաստան, ՄԱԿ, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն և Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2013թ. <<http://un.am/up/file/Armenia%20Post%202015%20National%20Consultation%20-%20English.pdf>>, «Տեղայնացնելով «Հետ-2015»-ի Օրակարգը - Հայաստան», 2014թ. <http://un.am/up/file/Post-2015%20Localization%20report%20-eBook-v5.pdf>:

ԶԱԾ-ում նկարագրված 7 վերջնական արդյունքներում: Ազգային գործընկերների հետ խորհրդակցությունների հաջորդական փուլերի ընթացքում, համատեղ հանձնառության ոգով, փաստաթուղթն ավարտուն տեսքի բերվեց: Փաստաթղթի կենսագործումը մեկնարկելու է 2016 թվականի հունվարից:

### 1.3 Իրավիճակի վերլուծություն

Հայաստանն ամբողջովին ցամաքով շրջապատված, միջինից ցածր եկամուտ ունեցող երկիր է՝ երեք միլիոն բնակչությամբ: Մարդկային զարգացման համաթվի (ՄԶՀ) արժեքը 2014 թվականին կազմել է 0.730<sup>6</sup>, ըստ որի երկիրը դասվում է մարդկային զարգացման բարձր կատեգորիային և 187 երկրների ու տարածքների շարքում զբաղեցնում է 87-րդ տեղը: 2002 թվականից 2007 թվականն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է ՀՆԱ-ի սրընթաց աճ՝ միջինում տարեկան կազմելով 13%<sup>7</sup>, սակայն 2009 թվականին համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով այն կտրուկ նվազեց: Մինչև 2012 թվականը տնտեսությունը կրկին թևակոխեց աճման փուլ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, արտադրության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտի ծառայությունների ավելի մեծ շեշտադրմամբ: Հայաստանի զարգացումը սերտորեն կապված է եղել հմուտ աշխատուժի ներգրավմամբ՝ գիտելիքի վրա հիմնված տնտեսությանն անցում կատարելու հետ և զգալի առաջընթաց է արձանագրվել ինովացիոն ազգային համակարգի ձևավորման ուղղությամբ<sup>8</sup>: Հայաստանի տնտեսական աճը դանդաղեց 2013 թվականին (2012 թվականին արձանագրված 7.2%-ից իջնելով մինչև 3.5%), արձանագրվեց գնաճ, այդ թվում՝ բարձրացան էլեկտրաէներգիայի և ներկրվող գազի գները<sup>9</sup>: ՀՆԱ-ի աճի այս դանդաղումը շարունակվեց՝ 2014 թվականին հասնելով 3.4%-ի և ուղեկցվեց դրամի արժեզրկմամբ: Այս երևույթը մա-

սամբ պայմանավորված էր տարածաշրջանում վատթարացող տնտեսական իրավիճակով և մասնավորապես՝ Ռուսաստանում տիրող իրադրությամբ, որը Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերն է և հանդիսանում է միգրանտ աշխատողներից ստացվող դրամական փոխանցումների հիմնական աղբյուրը<sup>10</sup>: Հայաստանի Կենտրոնական բանկը 2015 թվականի համար կանխատեսում է 0.4-2% տնտեսական աճ<sup>11</sup>, մինչդեռ միջազգային ֆինանսական հաստատությունները (ԱՄՀ, ՎԶԵԲ) կանխատեսել են պայմանների հնարավոր վատթարացում:

ՀՀ կառավարության կողմից ներկայացված առաջընթացի վերջին (2012 թվականի) զեկույցը փաստեց այն մասին, որ Հայաստանը ճիշտ ուղով է ընթանում՝ մինչև 2015 թվականը ՀԶՆ-ներով սահմանված մի շարք թիրախների իրականացման, այդ թվում՝ նորածնային և մայրական մահացության ցուցանիշների զգալի կրճատման, տարրական կրթության համակարգում ընդգրկվածության բարձր մակարդակի ապահովման և բնակչության էլ ավելի մեծ հատվածի համար անվտանգ խմելու ջրի հասանելիության ապահովման ուղղությամբ: Այդուհանդերձ, քիչ հավանական է, որ Հայաստանն իրականացնի ազգային ՀԶՆ-ներով սահմանված թիրախները՝ ծայրահեղ աղքատության վերացման, գենդերային հավասարության խթանման, ինչպես նաև շրջակա միջավայրի կայունության առումներով<sup>12</sup>:

Աղքատության մակարդակը շարունակում է մնալ բարձր և կազմում է 32%<sup>13</sup> (մանկական աղքատության մակարդակը՝ 37%), և դեռևս բավականին բարձր է այն մակարդակից, որը պաշտոնապես արձանագրվել էր մինչև 2009 թվականի ճգնաժամը: Տարածաշրջանների միջև առկա անհավասարություններ արտացոլված են եկամուտների անհավասարության մեջ, որն, ըստ Զինիի գործակցի, կազմում է 0.37<sup>14</sup>, ընդ որում քաղաքային

<sup>6</sup> Մարդկային զարգացման 2014թ. զեկույց, Հայաստան. Բացատրական նշում:  
<sup>7</sup> "Freedom House" կազմակերպության "Freedom of the Net 2014" զեկույց:  
<sup>8</sup> ՄԱԿ ԵՏՀ, «Հայաստանի ինովացիոն զարգացման զեկույց», 2014թ.:  
<sup>9</sup> Ասիական զարգացման բանկ՝ Հեռանկար-2014: <http://www.adb.org/sites/default/files/publication/31241/ado2014-armenia.pdf>:

<sup>10</sup> Ռուսաստանի հետ պաշտոնական արտաքին առևտուրը կազմում է շուրջ 23%, մինչդեռ Ռուսաստանի աշխատող միգրանտներից ստացված դրամական փոխանցումները կազմում են Հայաստանի ՀՆԱ-ի շուրջ 17%: Տե՛ս [https://www.cba.am/EN/periodicals/tex\\_09\\_14\\_eng.pdf](https://www.cba.am/EN/periodicals/tex_09_14_eng.pdf):  
<sup>11</sup> ՀՀ կենտրոնական բանկի «Գնաճի հաշվետվություն», 2015թ. փետրվար:  
<sup>12</sup> ՀՀ հետ Համաշխարհային բանկի 2014-2017թթ. երկրի գործընկերության ռազմավարություն, 2013թ. հոկտեմբեր:  
<sup>13</sup> Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում, Ազգային վիճակագրական ծառայություն, 2014թ. զեկույց: [http://armstat.am/file/article/5/poverty\\_2014e\\_2.pdf](http://armstat.am/file/article/5/poverty_2014e_2.pdf):  
<sup>14</sup> Աղքատության մակարդակը Վայոց Ձորում կազմում է 21%, Շիրակում արձանագրվել է ամենաբարձր ցուցանիշը՝ 46%, իսկ Տավուշում 2008-2013թթ. ընթացքում գրանցվել է աղքատության մակարդակի ամենամեծ աճը: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Ազգային վիճակագրական ծառայություն, 2014թ., էջ 37:

և գյուղական շրջանների միջև դիտվում է եկամուտների լայնացող ճեղքվածք: Աղքատությանը նպաստող կարևորագույն գործոններից մեկը գործազրկությունն է: Գործազրկության մակարդակը կազմում է մոտ 17%, ընդ որում այն առանձնապես բարձր է մայրաքաղաքից դուրս գտնվող վայրերում՝ երիտասարդության (36%) և կանանց շրջանում (18.1%)<sup>15</sup>: Սոցիալական պաշտպանության համակարգերում պահանջվում են լայնածավալ և արմատական բարեփոխումներ, քանզի նպաստները ճիշտ և սոցիալապես արդար եղանակով չեն հասցեագրվում: Թեպետև ընդունվել են Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների և դրա իրականացման գործողությունների ծրագիրը, սակայն դիտարկվում է տարեց մարդկանց համար նախատեսված ծառայությունների պակաս, ինչն արտացոլված է 2013 թվականի Ծերացման համաշխարհային ցուցիչում, որի համաձայն՝ 91 երկրների թվում Հայաստանը զբաղեցնում 51-րդ տեղը: Հայաստանում զգալի առաջընթաց է արձանագրվել ներառական կրթության ոլորտում, այդ թվում՝ դպրոցական համակարգում ներառական մոտեցումների կիրառման համար օրենսդրական դաշտի ձևավորման և ֆինանսավորման ապահովման ուղղությամբ<sup>16</sup>: չնայած այն հանգամանքին, որ հաշմանդանություն ունեցող երեխաները դասվում են առավել մեկուսացված խմբերի շարքին: Աղքատությունը, գործազրկությունը և սոցիալական ներառման պակասը մեծապես խթանում են արտագնա միգրացիան: Ըստ գնահատականների՝ 2007 թվականից 2013 թվականն ընկած ժամանակահատվածում տարեկան արտագաղթել է միջինում 35,000 մարդ (որոնցից 82%-ը եղել են 20-ից 54 տարեկան տղամարդիկ)<sup>17</sup>: Միևնույն ժամանակ, երկիրը ներկայումս ապաստանում է շուրջ 15,000 անձանց, մեծամասամբ հայկական ծագումով, ովքեր տեղահանվել են Սիրիայում ընթացող հակամարտության հետևանքով և պաշտպանություն են հայցում Հայաստանում:

Ընդունվել են կայուն զարգացման սկզբունքների վրա հիմնված մի շարք քաղաքականություններ և կանոնակարգեր, որոնց նպա-

տակն է եղել աշխատատեղերի ստեղծման միջոցով խթանել կայուն աճը, զարգացնել գործարար միջավայրը և բարելավել շրջակա միջավայրի կառավարումը: Միևնույն ժամանակ, մեծ ռեսուրսներ պահանջող ոլորտների և արդյունաբերության տարբեր ճյուղերի ակտիվ զարգացման միջոցով հնարավոր եղավ մեղմել ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը՝ այդուհանդերձ, չլուծված թողնելով կրած փաստացի բնապահպանական և սոցիալական վնասների հետ կապված խնդիրները: Հայաստանի տնտեսության համար բնութագրական են բարձր էներգատարությունը և էներգիայի սպառման մեծ ծավալները: Երկիրը մեծ կախվածություն ունի ածխաջրածինների<sup>18</sup>, այդ թվում՝ տրանսպորտային փոխադրամիջոցների համար օգտագործվող վառելիքի, ինչպես նաև կոմունալ-կենցաղային և արդյունաբերական նպատակներով օգտագործվող բնական գազի ներմուծումից, ընդ որում՝ ներմուծված ածխաջրածիններից է արտադրվում երկրի էլեկտրաէներգիայի մեկ երրորդը: Բնական պաշարների օգտագործման հարցում դրսևորած ոչ կայուն գործելակերպը, այդ թվում՝ անտառահատումները, հանքարդյունաբերական ոչ պատշաճ մեթոդները, հողօգտագործման և գյուղատնտեսության ոլորտներում կիրառվող սխալ գործելակերպերը հանգեցնում են հողերի էրոզիային, ինչպես նաև բնական միջավայրերի և կենսաբանական տեսակների ոչնչացմանը:

Հաշվի առնելով տնտեսական անկման հետևանքով ի հայտ եկած նոր իրողությունները՝ 2014 թվականին ՀՀ կառավարությունը վերանայել է իր նախորդ «Կայուն զարգացման ծրագիրը» և ընդունել է «**ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը**»: Այս ռազմավարական ծրագիրը հիմնված է չորս հիմնական գերակայությունների վրա, որոնք են՝ զբաղվածության ընդլայնումը, մարդկային կապիտալի զարգացումը, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը և պետական վարչարարության ու կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումը<sup>19</sup>: Այս գերակայություններն արտացոլված են ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների աղյուսակում և ուղեկցվում են կայուն զարգացման նպատակների նոր խմ-

<sup>15</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Ազգային վիճակագրական ծառայություն, 2014թ.:  
<sup>16</sup> 2014 թվականի դրությամբ՝ 1,400 դպրոցներից 139-ն առաջարկում են ներառական կրթություն:  
<sup>17</sup> «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին զեկոյոց», ՄՄԿ և Ազգային վիճակագրական ծառայություն, 2014թ.:

<sup>18</sup> ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (2014թ.):  
<sup>19</sup> ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (2014թ.):

բազրությամբ, որը 2014 թվականին առաջարկվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Բաց աշխատանքային խմբի կողմից՝ 2015 թվականից հետո միջազգային զարգացման շրջանակն ընդլայնելու նպատակով:

Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի (ԵԽ)՝ մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերի մեծ մասը և ընդունել է ռազմավարական ծրագրեր, այդ թվում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը» և «Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող՝ 2014-2017 թվականների միջոցառումների ծրագիրը»: Առաջին Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ)<sup>20</sup> շրջափուլի ընթացքում Հայաստանն ամենաշատ հանձնարարականներ ընդունած պետությունների թվում էր, ինչին հաջորդեցին օրենսդրական բարեփոխումները: Մոնիտորինգի արդյունավետ մեխանիզմի կիրառման հետ միասին անհրաժեշտ է էլ ավելի ամրապնդել կենսագործման և իրագործման մեխանիզմները: Մշտապես առկա խնդիրներից հատկապես նշվել են դատական համակարգի անկախության և արդարադատության անաչառության հետ կապված խնդիրները<sup>21</sup>: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նշել է, որ դատարանները և իրավապահ մարմինները հանդիսանում են երկրում մարդու իրավունքների ոտնահարման աղբյուրները<sup>22</sup>: Մեկ այլ մարտահրավեր է գենդերային հավասարություն համակողմանի երաշխավորումը, հատկապես՝ տնտեսական և քաղաքական ոլորտներում կանանց ներգրավվածության, ինչպես նաև գենդերային հիմքով բռնության և խտրականության հետ կապված հարցերի լուծման առումներով:

ՀՀ նախագահը նախաձեռնել է սահմանադրական բարեփոխումներ, որոնք քննարկվում են հանրության, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության կողմից: Հայաստանում իրագործվում են ազգային ռազմավարական ծրագրեր հանրային կառավարման, այդ թվում՝ քաղաքացիական

ծառայության զարգացման, հանրային ֆինանսների կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում: 2011 թվականին Հայաստանը միացել է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությանը և հանրային տեղեկությունների և տվյալների բաց հասանելիության համակարգերին: 2014 թվականին Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳԲԵԿՈ)՝ Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցում նշված եզրակացության համաձայն՝ Հայաստանի կողմից Գնահատման երրորդ փուլի զեկույցում ներառված բոլոր տասնինը հանձնարարականների կատարումը, որոնք առնչվում են քրեականացման և կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության թեմաներին, գնահատվել է գոհացուցիչ<sup>23</sup>: Հարկ է նշել նաև, որ 2014 թվականին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգ», որի հիման վրա մշակվել է ներկայումս վերջնական քննարկման փուլում գտնվող «ՀՀ 2015-2018 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը»: Մինչև ժամանակ, 2014 թվականի Կոռուպցիայի ընկալման համաթվով 100-ից 37 միավորի վարկանիշը դեռևս ցածր է, իսկ կոռուպցիայի խնդիրը նշվում է որպես զարգացմանը խոչընդոտող էական արգելք<sup>24</sup>:

Կայունության վրա իր ազդեցությունն է ունենում տարածաշրջանի անկայուն աշխարհաքաղաքական համատեքստը և Լեռնային Ղարաբաղի չկարգավորված հակամարտությունը<sup>25</sup>, որը զգալիորեն սրվել է 2014 թվականին: Թուրքիայի հետ սահմանը մնում է փակ՝ ավելի բարդացնելով դեպի ծով ելք չունեցող երկրի առջև ծառայած մարտահրավերները և խոչընդոտելով տնտեսական զարգացումը: Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը (1993 թվականից ի վեր) բացասական ազդեցություն

<sup>20</sup> Հայաստանի ՀՊԴ՝ <http://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMSession8.aspx>:  
<sup>21</sup> Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՎ) ԵԽ անդամ-պետությունների ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների կատարումն ապահովող հանձնաժողով (Մոնիտորինգի հանձնաժողով), 2014թ.: <http://www.assembly.coe.int/CommitteeDocs/2014/amondoc19-2014.pdf>:  
<sup>22</sup> ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2015թ. տարեկան զեկույց. [http://ombuds.am/storage/files/library/pdf\\_2806687388\\_arm\\_report.pdf](http://ombuds.am/storage/files/library/pdf_2806687388_arm_report.pdf):

<sup>23</sup> [http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoRC3%282014%2926\\_Second\\_Armenia\\_EN.pdf](http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoRC3%282014%2926_Second_Armenia_EN.pdf)  
<sup>24</sup> <http://www.transparency.org/country#ARM>. Կոռուպցիայի ընկալման համաթիվը ներկայացվում է 0-100 սանդղակում, որտեղ 0-ն նշանակում է «բացարձակ կոռումպցված», իսկ 100-ը՝ «բացարձակ մաքուր»:  
<sup>25</sup> Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացն ընթանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջազգայնորեն համաձայնեցված ձևաչափով՝ Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի համանախագահությամբ՝ միջազգային իրավունքի հետևյալ սկզբունքների հիման վրա՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում, ազգերի ինքնորոշման իրավունք ու իրավահավասարություն և տարածքային ամբողջականություն:

ունի ՀՀ բնակչության կենսամակարդակի՝ հատկապես նրա բնակչության խոցելի խմբերի վրա, ինչպես նաև նրանց սոցիալական և տնտեսական իրավունքների իրականացման վրա<sup>26</sup>: 2015 թվականի հունվարին Հայաստանը պաշտոնապես դարձավ նորաստեղծ Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) չորրորդ անդամը և ԵՏՄ-ի նորմերի հետ ներդաշնակեցնելու համար սկսեց հանապատասխանեցնել անհրաժեշտ նորմատիվ-իրավական դաշտը: Միննույն ժամանակ, Հայաստանը շարունակում է իր համագործակցությունը Եվրոպական Միության (ԵՄ) հետ, որի լայն շրջանակն ընդգրկում է մի շարք ոլորտներ, այդ թվում՝ քաղաքական երկխոսությունից մինչև մարդու իրավունքներ, արդարադատություն, շարժունակությանը և միգրացիային առնչող հարցեր, ինստիտուցիոնալ բարեփոխումներ և կարողությունների հզորացում: Հայաստանը շարունակում է օգտվել ԵՄ Արտոնությունների ընդհանուր համակարգի (GSP+) ռեժիմից՝ երկրի համար ապահովելով արտոնյալ հասանելիություն ԵՄ շուկային, մնալով մեկ շնչի հաշվարկով Արևելյան գործընկերության (ԱԳ) շրջանակներում ԵՄ միջոցների երկրորդ խոշոր շահառուն:

Հայաստանում մեծ է մի շարք տարբեր բնական աղետների առաջացման հավանականությունը, ինչը երկրի բնակչության 80%-ի համար ստեղծում է աղետալի իրադարձությունների ենթարկվելու բարձր վտանգ<sup>27</sup>: Ըստ գնահատականների՝ հիդրո-դերևութաբանական երևույթների պատճառով հասցված տարեկան վնասը կազմում է 120 միլիոն ԱՄՆ դոլար<sup>28</sup> կամ 2013 թվականի բյուջեի շուրջ 5%-ը: Սողանքները, սելավները և ջրհեղեղները վտանգ են ներկայացնում երկրի տարածքի կեսի համար, ընդ որում՝ այդ վտանգն էլ ավելի է սրվում բնական ռեսուրսների ոչ կայուն օգտագործման և կլիմայի փոփոխության պատճառով<sup>29</sup>:

### 1.4 ՄԱԿԶԱԾ-ի գնահատման (2010-2015թթ.) եզրակացությունները և առաջարկությունները

Գնահատման արդյունքում պարզ դարձավ, որ ՄԱԿ-ի զբաղեցրած ամուր դիրքերը նպաստավոր են զարգացման ազգային օրակարգի իրականացումը սատարելու համար՝ ՀՀ կառավարության «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին», «Կայուն զարգացման ծրագրին» և ՀԶՆ-երի համընդգրկուն նպատակներին համահունչ: Դրանում նշվում է, որ ՄԱԿ-ԶԱԾ-ի ռազմավարական նպատակները մշակվել և իրագործվել են Կառավարության հետ սերտ համագործակցության պայմաններում և նպաստել են Հայաստանի ժողովրդի բարեկեցությանը: Որպես վստահելի և հուսալի գործընկեր՝ ՄԱԿ-ն իր մասնագիտական գիտելիքները դրսևորել է այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են՝ ժողովրդավարական կառավարումը, սոցիալական պաշտպանությունը, տնտեսական հավասարությունը, շրջակա միջավայրի կայունությունը և աղետների ռիսկի նվազեցումը: Իր ուրույն տեղը զբաղեցնելով որպես միջազգային նորմերի և չափանիշների պահպանման ջատագով, ինչպես նաև հանդես գալով որպես կապող օղակ կառավարության և քաղաքացիական հասարակության միջև՝ ՄԱԿ-ը նպաստել է մարդու իրավունքների պաշտպանությանը և գենդերային հավասարության ապահովմանը: 2014 թվականի տարեվերջի դրությամբ՝ բյուջեի կատարման ընդհանուր գործակիցն արդեն գերազանցել էր 2010-2015 թվականների համար նախատեսված ՄԱԿԶԱԾ-ի ընդհանուր բյուջեն, որը ՄԱԿԶԱԾ-ի շրջափուլից մեկ տարի առաջ կազմել է շուրջ 127%:

Գնահատման ռազմավարական առաջարկություններում ընդգծվել է, որ ՄԱԿ-ը պետք է՝ ավելի մեծ ջանքեր գործադրի՝ հավաքական ազդեցություն ապահովող միասնական գործընկերոջ իր դիրքերն ամրապնդելու համար, ավելի շատ ներդրումներ կատարի համաձայնեցված ու հետևողական, ինչպես նաև արդյունավետ գործելակերպն ապահովելու ուղղությամբ, մոնիտորինգի և գնահատման նպատակով ստեղծված համապատասխան մեխանիզմի միջոցով առավել արդյունավետ կերպով հետագծի ՄԱԿԶԱԾ-ի իրականաց-

<sup>26</sup> Ըստ 2014թ. Հայաստանի ազգային ՀՊԻ գեկոյցի:  
<sup>27</sup> ՄԱԿ-ի Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության գրասենյակ, «Աղետների ռիսկի նվազեցման մասին գլոբալ գնահատման գեկոյց», 2009թ.:  
<sup>28</sup> Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ մեխանիզմ, «Հայաստան՝ աղետների նվազեցման և վերականգնման ինստիտուցիոնալ միջոցառումներ», 2009թ.:  
<sup>29</sup> Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի երրորդ ազգային հաղորդագրություն, ՀՀ բնակահպանության նախարարություն, 2010թ.:

մանն ընթացքը, ընդլայնի համատեղ պլանավորման ծավալները՝ համաձայնեցված և հետևողական պլանավորման, ինչպես նաև միջոցների համատեղ հավաքագրմանը զուգընթաց: Խորհուրդ է տրվում նաև ամրապնդել ներկայիս կարգավիճակը՝ ռազմավարական քաղաքականությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման և քարոզարշավի իրականացման համատեղ ջանքերի միջոցով՝ աջակցելով երկրի զարգացման առաջնահերթությունների կատարմանը՝ միաժամանակ ավելի շատ հենվելով ազգային մեխանիզմների վրա և զարգացնելով ազգային կարողությունները:

Հետագայում ևս ՄԱԿ-ի հայաստանյան թիմը շարունակելու է ավելի լայն ծավալով աշխատանքների իրականացումը՝ հենվելով իր ունեցած համեմատական առավելությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի առանձին գործակալությունների մանդատների ուժեղ կողմերի ու փոխլրացման սկզբունքների վրա՝ դրական արդյունքներն ամրապնդելու, ինչպես նաև գնահատման մեջ նշված առաջարկությունները կատարելու նպատակով: ՄԱԿ-ի հայաստանյան թիմը, մասնավորապես, հետամուտ է լինելու մոնիտորինգի և գնահատման համակարգի հզորացմանը՝ վերականգնելով ինտերնետային տեխնոլոգիաների վրա հիմնված՝ մոնիտորինգի և գնահատման ներքին մեխանիզմը, որը հնարավորություն է տալիս հետագծել արդյունքները, ավելացնելու է ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության գործընկերների ներգրավվածությունը ՄԱԿԶԱԾ-ի արդյունքի խմբերի կողմից իրականացվող աշխատանքներում, ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ՝ մշակելու և իրականացնելու է միջոցների համատեղ հավաքագրման ռազմավարությունը, ընդունելու է ՄԱԿ-ի հայաստանյան թիմի Վարքագծի կանոնագիրը՝ առավել համաձայնեցված և հետևողական ներքին գործելակերպն ապահովելու նպատակով, խթանելու է պլանավորման համատեղ աշխատանքների իրականացումը, ինչպես նաև որդեգրելու է առավել միասնական մոտեցում՝ երկրի զարգացման հիմնական առաջնահերթությունների իրականացմանն ուղղված ջանքերում:

ՄԱԿ-ը Հայաստանում շարունակելու է աջակցել ազգային զարգացման օրակարգի իրականացմանը ՄԱԿԶԱԾ-ի արդյունքներում ներկայացվածի համաձայն՝ 2016-2020

թվականների ՄԱԿԶԱԾ-ի իրականացման ամբողջ ընթացքում հենվելով հետևյալ կարևորագույն **համեմատական առավելությունների** վրա՝

- ՄԱԿ-ն ունի ՀՀ կառավարության և մասնավոր հատվածի միջև որպես կանոն հանդես գալու համեմատական առավելություն՝ ՓՄՁ-ների համար բարենպաստ հնարավորություններ ընձեռող միջավայր ստեղծելու, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցելու, արժեքի ստեղծման շղթաները զարգացնելու և արտադրողների խմբերն առավել ամրապնդելու, խոցելի խմբերի համար տնտեսական հնարավորություններ ստեղծելու, ինչպես նաև ոլորտային խորհրդատվություն տրամադրելու միջոցով աժի խթանումն ապահովելու համար: ՄԱԿ-ի մի քանի գործակալություններ ունեն «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի», «Գյուղատնտեսական դաշինքի» հետ աշխատելու զգալի հաջողված փորձ: (Արդյունք 1)
- Որպես միջազգային նորմերի և չափանիշների պահպանման ջատագով՝ ՄԱԿ-ն ունի համեմատական առավելություն՝ աջակցություն տրամադրելու Հայաստանի կառավարությանը՝ իր միջազգային պարտավորությունները կատարելու և ժողովրդավարական կառավարմանը և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված համակարգերի ամրապնդման հարցում: ՄԱԿ-ն արդեն դրսևորել է ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության միջև որպես չեզոք կանոն հանդես գալու իր կարողությունը՝ քաղաքացիների ներգրավման համար հարթակներ ստեղծելու, առավել բաց ու թափանցիկ կերպով աշխատելու հարցում Հայաստանի կառավարությանն աջակցելու, ինչպես նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմիններին հաշվետվություններ ներկայացնելու և ՀՊԴ-ի վերաբերյալ երկխոսությունը խթանելու միջոցով: ՄԱԿ-ը նաև տրամադրում է այս ոլորտում ունեցած իր բացառիկ մասնագիտական գիտելիքները՝ զարգացման ոլորտում գործող մյուս գոր-

ծրնկերների նախաձեռնություններին օժանդակելու նպատակով: (Արդյունք 2)

- Թե՛ ազգային և թե՛ տեղական մակարդակներում քաղաքականության մշակման, իրավական ոլորտի բարեփոխումների, կարողությունների զարգացման և հնարավորությունների ընդլայնման բնագավառում ՄԱԿ-ի կողմից կատարված աշխատանքները նրան տալիս են տեղական մակարդակում արձանագրված իրողությունները մշակվող քաղաքականություններում արտացոլելու համեմատական առավելություն: ՄԱԿ-ը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Գենդերային թեմատիկ խմբի հետ միասին, հանդես է գալիս որպես համանախագահ, ինչը Հայաստանի կառավարության, զարգացման ոլորտի գործընկերների և քաղաքացիական հասարակության շրջանում ավելի է ամրապնդում ՄԱԿ-ի՝ որպես գենդերային հավասարության հզոր պաշտպանի գործունեության նկատմամբ վստահությունը: ՄԱԿ-ի ուշադրության կենտրոնում կլինի նաև ՀՀ-ում տղամարդկանց և կանանց հավասարության հիմնահարցերով նորաստեղծ խորհուրդը՝ որպես երկրում գենդերային հավասարության ամրապնդման ինստիտուցիոնալ մեխանիզմ: (Արդյունք 3)
- Միգրացիայի և սահմանների կառավարումը, փախստականներին, ապաստան հայցողներին և վերադարձողներին աջակցության տրամադրումը եղել են ՄԱԿ-ի կողմից Հայաստանում իրականացվող գործունեության առանցքային հիմնահարցերից, ընդ որում՝ ՄԱԿ-ը համարվում է չափանիշներ սահմանող կառույց, տեխնիկական մասնագիտական գիտելիքների, ինչպես նաև քաղաքականության մշակման և միջազգային իրավունքի ոլորտում աջակցություն ստանալու աղբյուր: ՄԱԿ-ի գործակալությունները, միասնաբար, Հայաստանին աջակցություն են տրամադրել միջազգային համաձայնագրերի իրականացման, քաղաքականությանն ու կարողությունների զարգացմանն առնչվող հարցե-

րում: Հայաստանի կառավարությունը և մյուս ազգային գործընկերները ևս շահել են ՄԱԿ-ի գործակալությունների կողմից համատեղ ուժերով իրականացված գործողությունների արդյունքում, որոնք նպատակաուղղված էին Սիրիայում տեղի ունեցող հակամարտության հետևանքով առանձնակի մեծ թվով տեղահանված բնակչության բնակեցման հարցում օժանդակություն տրամադրելուն: (Արդյունք 4)

- ՄԱԿ-ի գործակալությունների մանդատը, տեխնիկական մասնագիտական գիտելիքները և փորձն այնպիսի որոշումներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, սոցիալական և երեխայի պաշտպանությունը, ՄԱԿ-ի համար ամուր դիրքեր են ապահովում՝ հնարավորություն տալով հաստատելու կապեր ոլորտների և դրանցում ներգրավված դերակատարների միջև՝ դրանով օժանդակելով ինտեգրված սոցիալական ծառայությունների կենսունակ համակարգի զարգացմանը թե՛ ազգային, և թե՛ տեղական մակարդակներում: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհրդի հետ սերտ համագործակցության շնորհիվ կապահովվի, որ սոցիալական ծառայությունների բարեփոխումների փորձական իրականացման արդյունքում քաղված դասերը և միջազգային լավագույն գործելակերպերը կիրառվեն երկրի մակարդակով բարեփոխումների իրականացման մեկնարկին զուգընթաց: (Արդյունք 5)
- Առողջապահությունն այն առանցքային ոլորտներից է, որը ներառված է ՄԱԿ-ի մի քանի գործակալությունների մանդատներում: ՄԱԿ-ի հասանելիության շրջանակն ընդգրկում է առողջապահության բնագավառում համաշխարհային մակարդակով առկա մասնագիտական գիտելիքները, ինչը համեմատական առավելություն է դառնում՝ հնարավորություն տալով Հայաստանի կառավարությանը տրամադրելու երկրին բնորոշ՝ հատուկ տեղայնացված խորհրդատվություն թե՛ քաղաքականության մշակման, և թե՛ գործառնական մակարդակներում,

ինչպես նաև քարոզարշավ իրականացնելու առողջության վրա անմիջական ազդեցություն ունեցող հարցերի վերաբերյալ: ՄԱԿ-ի գործակալությունները նաև ակտիվորեն ներգրավված են Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի միջոցառումները համակարգող հանձնաժողովի աշխատանքներում: (Արդյունք 6)

- ՄԱԿ-ի գործակալությունները ազգային գործընկերների կողմից բազմիցս ճանաչվել են՝ որպես ՀՀ կառավարության վստահելի և արդյունավետ գործընկերներ, որոնք ունեն այնպիսի առանցքային դերակատարներից, ինչպես օրինակ՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամն է, տեխնիկական մասնագիտական գիտելիքներ ու ռեսուրսներ հավաքագրելու կարողություն՝ շրջակա միջավայրի կայունության, կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման ոլորտներում քաղաքականության մշակման և ինստիտուցիոնալ հզորացման հարցերում աջակցություն տրամադրելու համար: Ավելին, ՄԱԿ-ը հայտնի է՝ որպես զարգացման ոլորտում գործող խոշորագույն կառույց, որը խթանում է բազմակողմ բնապահպանական համաձայնագրերին և համաշխարհային կոնվենցիաներին համապատասխան գործելակերպը, Հայաստանի կառավարությանն աջակցում է կլիմայի փոփոխությանը և աղետների ռիսկի նվազեցմանն առնչվող բանակցություններում, խթանում է էներգաարդյունավետության գաղափարը պետական, կոմունալ-կենցաղային և արդյունաբերական հատվածներում, կիրառում է միջճյուղային զարգացման նորարարական մոտեցումներ (այսինքն՝ էկոհամակարգային մոտեցում, աղքատության և շրջակա միջավայրի ինտեգրված դիտարկումներ), ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում իրականացնում է քարոզարշավ աղետների ռիսկի նվազեցման սկզբունքների վերաբերյալ: (Արդյունք 7)

## 2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2016-2020թթ. ՄԱԿԶԱԾ-ն իրենից ներկայացնում է ռազմավարական ծրագիր, որը նպատակաուղղված է արդյունքների կատարմանը: Այն արձագանքում է երկրի առաջնահերթություններին և նպաստելու է ազգային զարգացման նպատակների իրականացմանը: Այն ներառում է ակնկալվող յոթ հիմնական արգասիքները, որոնք կոչվում են «արդյունքներ» և որոնք միասնաբար սահմանվել են ՀՀ կառավարության, ՄԱԿ-ի և քաղաքացիական հասարակության գործընկերների կողմից: Այս բաժինն իրենից ներկայացնում է փաստաթղթի հիմնական մասը: Այստեղ նկարագրվում են ծրագրի սյունները, առանցքային ծրագրային ռազմավարությունները և ՄԱԿԶԱԾ-ի յոթ ակնկալվող արդյունքները: Արդյունքների ամբողջական աղյուսակը, այդ թվում՝ ցուցանիշները, ելակետերը, թիրախները, ստուգման միջոցները, ռիսկերն ու ենթադրությունները ներկայացվում են **Հավելված Ա-ում**:

### 2.1 Սյուններ

Յոթ արդյունքները խմբավորված են ըստ չորս սյունների, որոնք համապատասխանում են երկրի գերակայություններին և ԿԶՆ-ներին՝ միաժամանակ օգտագործելով ՄԱԿ-ի համեմատական առավելությունները:



## Աղյուսակ. Սյուների և արդյունքների համառոտ նկարագրություն

4 սյուներ	7 արդյունքներ
Արդարացի, կայուն տնտեսական զարգացում և աղքատության կրճատում	<p><b>Արդյունք 1</b> Մինչև 2020 թվականը Հայաստանի մրցունակությունը բարելավվել է, իսկ կայուն տնտեսական հնարավորությունները առավել հասանելի են դարձել մարդկանց, հատկապես՝ խոցելի խմբերի համար:</p>
Ժողովրդավարական կառավարում	<p><b>Արդյունք 2</b> Մինչև 2020 թվականը մարդիկ օգտվում են ժողովրդավարական կառավարման բարելավված համակարգերից և մարդու իրավունքների ամրապնդված պաշտպանությունից:</p> <p><b>Արդյունք 3</b> Մինչև 2020 թվականը Հայաստանն արձանագրել է ավելի մեծ առաջընթաց գեոդերային անհավասարության նվազեցման առումով և կանայք ավելի լայն հնարավորություններ ունեն ու քիչ հավանական է, որ ենթարկվեն ընտանեկան բռնության:</p> <p><b>Արդյունք 4</b> Մինչև 2020 թվականը միգրացիայի, սահմանների և ապաստանի կառավարման համակարգերն ամրապնդվել են՝ միգրանտների և տեղահանված անձանց, հատկապես՝ կանանց ու աղքիկների իրավունքները խթանելու և պաշտպանելու նպատակով:</p>
Սոցիալական ծառայություններ և ներառում	<p><b>Արդյունք 5</b> Մինչև 2020 թվականը խոցելի խմբերն ունեն տարրական կրթությունից և սոցիալական պաշտպանության ծառայություններից օգտվելու ավելի մեծ հնարավորություններ և մասնակցում են իրենց համայնքների կյանքին:</p> <p><b>Արդյունք 6</b> Մինչև 2020 թվականը որակյալ առողջապահական ծառայությունները հասանելի են դարձել բոլորի, այդ թվում՝ առանձնապես խոցելի խմբերի համար:</p>
Շրջակա միջավայրի կայունություն և դիմակայունության ձևավորում	<p><b>Արդյունք 7</b> Մինչև 2020 թվականը ներդրվել և կիրառվում են կայուն զարգացման սկզբունքները, շրջակա միջավայրի կայունության, դիմակայունության ձևավորման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, ինչպես նաև կանաչ տնտեսության լավագույն գործելակերպերը:</p>

## 2.2 Ծրագրային ռազմավարություններ

Արդյունքների կատարմանն աջակցելու նպատակով կկիրառվեն հետևյալ ծրագրային համընդգրկուն ռազմավարությունները: Յուրաքանչյուր արդյունքի համար ՀՀ կառավարությունը և ՄԱԿ-ը նախանշել են հատուկ ռազմավարություններ:

### 1. Մարդու հիմնարար իրավունքների խթանում

Զարգացման նպատակներն իրականացնելիս՝ կկիրառվի մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը (ՄԻՀՄ), որը կաջակցի առավել արդյունավետ, կայուն զարգացման արդյունքների կատարմանը՝ վերլուծելով և հաղթահարելով անհավասարության և խտրական գործելակերպի դրսևորումները: Երկրի մակարդակով, ՄԻՀՄ-ն բխում է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետության կողմից վավերացված կոնվենցիաներով ստանձնած պարտավորություններից: Այն կիրառվում է՝ նպատակ ունենալով ապահովել, որ զարգացման ոլորտում համագործակցության հիմքում ընկած լինեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանված չափանիշները և գործելակերպերը՝ կարևորելով «պարտավորություն կրողների», հատկապես՝ պետության մոտ իր կողմից ստանձնած պարտավորությունները կատարելուն և «իրավունքներ կրողների», հատկապես՝ խոցելի խմբերի մոտ իրենց իրավունքների մասին հայտարարմանն ուղղված կարողությունների զարգացումը:

ՄԱԿԶԱԾ-ի շրջանակներում միջամտությունները կմշակվեն դրանց կատարման համար բարենպաստ միջավայրի (օրենսդրություն, քաղաքականություններ, ինստիտուցիոնալ և համակարգային հարցեր) թույլ կողմերի և «պարտավորություն կրողների» կարողությունների հետ կապված բացերի վերլուծելիությունից հետո՝ նպատակ ունենալով աջակցել նրանց այս բացերը լրացնելու հարցում և ապահովել, որ «իրավունքներ կրողները» ունենան որակյալ ծառայություններից և հանրային բարիքներից հավասար օգտվելու հնարավորություն: Առանձին միջամտությունները մշակելիս ՄԱԿ-ի գործա-

կալությունները կպահպանեն ՄԻՀՄ-ն ապահովելու իրենց հանձնառությունը:

### 2. Գենդերային հավասարության ապահովում

Գենդերային հավասարության նպատակը և գենդերային հավասարության խնդրի նկատմամբ համալիր մոտեցում կիրառելու գործելակերպը միտված են ի ցույց դնելու, թե ինչպիսի տարբեր մոտեցումներ են դրսևորում տղամարդիկ և կանայք հասարակությունում իրենց առջև ծառայած խնդիրների նկատմամբ, և թե ինչպես են նրանք հարաբերվում միմյանց և առնչվում այն հասարակական գործոնների հետ, որոնք ձևավորում են ենթակայությամբ պայմանավորված հարաբերություններ: Դրա նպատակն է հայտնաբերել գենդերային անհավասարությանը նպաստող կամ գենդերային հավասարությունը խթանող հասարակական և պետական կառույցները՝ հաշվի առնելով ինստիտուցիոնալ և համակարգային ազդեցությունները:

Ծրագրային պլանավորման և իրագործման ժամանակ սույն ՄԱԿԶԱԾ-ի շրջանակներում բոլոր գերակա ոլորտներում կխթանվի գենդերային հավասարությունը և կամրապնդվի գենդերային հավասարության խնդրի նկատմամբ համալիր մոտեցումը, հատկապես՝ ծրագրի՝ արդյունքների վրա հիմնված մոտեցման շրջանակներում, ինչպես նաև գենդերային հավասարության խնդրի նկատմամբ համալիր մոտեցման մոնիտորինգի և գնահատման ժամանակ գենդերային վերլուծության, գենդերային հավասարության արդյունքների ձևակերպման և դրանց վերաբերյալ քարոզարշավ իրականացնելու միջոցով: ՄԱԿ-ի հայաստանյան թիմը, ՀՀ կառավարության հետ միասին, կշարունակի կիրառել Գենդերային թեմատիկ խմբի հարթակը՝ գենդերային հավասարության ապահովման ոլորտում գործող ազգային մեխանիզմների, օրենսդրության և քաղաքականության հետ կապված միջամտությունների իրականացմանն աջակցելու նպատակով՝ գենդերային հավասարության ոլորտում ազգային նպատակների, ՀԶՆ 3-ի և հետագա ԿԶՆ-ի թիրախներին համապատասխան: Գենդերային հավասարությունը կշարունակի մնալ ՄԱԿ-ի հայաստանյան թիմի համատեղ գործողու-

թյան շրջանակներում համալիր մոտեցում պահանջող առանցքային ոլորտներից մեկը:

**3. Շրջակա միջավայրի կայունության խթանում, տեղական մակարդակներում դիմակայունության ձևավորում**

Ազգային զարգացման գերակայությունների իրականացման համար կարևոր կլինի հասկանալի շրջակա միջավայրի և զարգացման միջև կապերը: ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի համատեղ աշխատանքի շնորհիվ կապահովվի ՄԱԿԶԱԾ-ի շրջանակներում միջամտությունների մշակումը և իրականացումը՝ շրջակա միջավայրի կայունությունը և դիմակայունությունը խթանելու նպատակով: ՄԱԿ-ը կարող է աջակցել Հայաստանին շրջակա միջավայրի պահպանության իր ազգային նպատակները, ՀԶՆ 7-ի և հետագա ԿԶՆ-ի թիրախների, ինչպես նաև վավերացված Բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի (ԲԲՀ-ներ), ինչպիսիք են, կլիմայի փոփոխությանն առնչվող, օրինակ՝ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիան (ՄԱԿ ԿՓՇԿ) և կենսաբազմազանությանն առնչվող, օրինակ՝ Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա, համաձայնագրերի նպատակները և թիրախներն իրականացնելու և դրանց առաջընթացը հետազոծելու հարցում: ՄԱԿ-ը կաջակցի նաև աղետների ռիսկի արդյունավետ գնահատման և կառավարման համար կարողությունների զարգացման հարցում:

**4. Երկրի կարողությունների զարգացում և միջոլորտային համակարգման ամրապնդում**

ՄԱԿԶԱԾ-ի բոլոր բաղադրիչներում կարողությունների զարգացման մոտեցումը կօգնի ապահովել, որ Հայաստանը կարողանա առաջնորդել, կառավարել, իրականացնել ազգային զարգացման գերակայությունները և պատասխանատվություն կրել դրանց համար: Դրանք հատկապես կօգնեն ՀԶՆ-ների, ԿԶՆ-ների և միջազգային մակարդակով համաձայնեցված զարգացման նպատակների հետ կապված գերակայությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի վավերացված կոնվենցիաներով և պայմանագրերով ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած պարտավորությունների կատարմանը: Իրենց հետագա համա-

գործակցության ընթացքում Հայաստանի կառավարությունը և ՄԱԿ-ը կձգտեն մշակել առավել ինտեգրված, ամբողջական մոտեցում: Հիմնական շեշտադրումը կդրվի առանցքային հաստատությունների, ինստիտուցիոնալ բացերի և կարողությունների հետ կապված կարիքների վրա: Համագործակցության շրջանակը կներառի ավելին, քան վերապատրաստումները և հմտությունների զարգացումը՝ ապահովելով լավագույն գործելակերպերի շարունակականությունը և զարգացումը: Ավելին, բոլոր սյուների և արդյունքների կատարման շրջանակներում կգործադրվեն ջանքեր՝ նպատակ ունենալով ամրապնդելու նախարարությունների միջև և միջգերատեսչական համակարգումը միջազգային չափանիշներին համապատասխան՝ պլանավորման, բյուջետավորման, ծառայությունների մատուցման և մոնիտորինգի գործընթացներում: ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի կողմից կձեռնարկվեն հատուկ միջոցներ՝ ուղղված միջոլորտային համագործակցության բնագավառում լավագույն գործելակերպերն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով փորձի փոխանակմանը և մոնիտորինգի և գնահատման համակարգերի ամրապնդմանը:

**5. Արդյունքի խմբերի կողմից արդյունքների արդյունավետ կառավարման, մոնիտորինգի և հաշվետվությունների ներկայացման ապահովում**

Արդյունքների վրա հիմնված կառավարումը ռազմավարություն է, որը պահանջում է արդյունքների կատարման վերաբերյալ հստակ սահմանված հաշվետվողականություն և արդյունքների կատարման առաջընթացի մոնիտորինգ և ինքնագնահատում, ինչպես նաև կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում: Ազգային և ՄԱԿ-ի համատեղ Արդյունքի խմբերի (ԱԽեր) միջոցով աջակցված կտրամադրվի ՄԱԿԶԱԾ-ի շրջանակներում ակնկալվող արդյունքների կատարման, կառավարման, մոնիտորինգի իրականացման և հաշվետվությունների ներկայացման հարցում: Դրանք են հանդիսանում այն առանցքային ռազմավարությունը, որը կապահովի զարգացման աջակցության ծրագրում բարձր ներգրավվածությունն ազգային մակարդակում և փոխադարձ հաշվետվողականություն՝ ակնկալվող արդյունքների կատարման գործընթացում:

### 2.3 Արդյունքներ

Սույն բաժնում նկարագրվում են ՄԱԿԶԱԾ-ի ակնկալվող արդյունքները՝ ներառյալ ծրագրային հիմնավորվածությունը, կիրառվելիք հիմնական ռազմավարությունները և այն առանցքային գործընկերները, որոնք պետք է ընդգրկվեն իրակագործման գործընթացում:

#### 1-ին սյուն. Արդարացի, կայուն տնտեսական զարգացում և աղքատության կրճատում

##### Արդյունք 1.

**Մինչև 2020 թվականը Հայաստանի մրցունակությունը բարելավվել է, իսկ կայուն տնտեսական հնարավորություններն առավել հասանելի են դարձել մարդկանց, հատկապես՝ խոցելի խմբերի համար:**

2013 թվականին Հայաստանում բնակչության գրեթե ամեն երրորդը (32%) եղել է աղքատ, տարածաշրջանների միջև անհավասարություններով՝ ինչպես արտագույլված է Զինիի գործակցում, ըստ որի այն կազմում է 0.372: Ընդհանուր, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի և Արարատի մարզերում աղքատության մակարդակները գերազանցել են երկրում գրանցված միջին ցուցանիշը<sup>30</sup>: Ըստ քաղաքային և գյուղական համայնքներում բնակչության կենսամակարդանի բաշխվածության՝ աղքատների մեծ մասը (63.8%) կազմում են քաղաքայինները: Գյուղերում աղքատ բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ, ինչն աշխատող բնակչության 36%-ն է և կազմում է ՀՆԱ-ի 19%-ը<sup>31</sup>: Գործազրկությունն աղքատությունը խթանող հիմնական գործոնն է: 2013 թվականին Հայաստանի բնակչության 16%-ը գործազուրկ է եղել: Գոր-

ծազրկության մակարդակն ավելի բարձր է կանանց շրջանում, քան տղամարդկանց, իսկ երիտասարդների (15-24 տարեկան) շրջանում գործազրկության մակարդակն երկու անգամ ավելի բարձր է, քան՝ ընդհանուր բնակչության շրջանում<sup>32</sup>: Զբաղվածների շուրջ երկու երրորդի նյութական վիճակը կախված է ցածր արտադրողականություն ունեցող՝ գյուղատնտեսության և առևտրի ոլորտներում առաջացող եկամուտներից<sup>33</sup>: Շուկայում պահանջարկ ունեցող հմտությունների և աշխատանք փնտրողների ունեցած հմտությունների միջև առկա տևական անհամապատասխանության հետևանքով նկատվել է թերզբաղվածության զգալի աճ: Բազմաթիվ երիտասարդներ ընտրում են մասնագիտական գործունեության այնպիսի բնագավառներ, որոնք չափազանց մեծ պահանջարկ ունեն, իսկ որակավորումները հաճախ չեն բավարարում գործատուի պահանջները: Երիտասարդների գործազրկությունը պայմանավորված է թերզբաղված աշխատանքի շուկայով, ոչ բավարար փորձառությանը և հմտություններով, ինչպես նաև այն հանգամանքով, որ գործատուները չեն ցանկանում աշխատանքի վերցնել աշխատանքային փորձ չունեցող երիտասարդների<sup>34</sup>: Աղքատությունը և գործազրկությունը մեծապես խթանում են արտագնա միգրացիան: Ըստ գնահատականների՝ 2007 թվականից մինչև 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում տարեկան արտագաղթել է միջինում 35,000 մարդ (որից 82%-ը 20-54 տարեկան տղամարդ են)<sup>35</sup>: Դրամական փոխանցումները կազմում են Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 17%-ը, որից 87%-ը գալիս է Ռուսաստանից<sup>36</sup>: Մեկ այլ առկա մարտահրավերը հիմնականում հայկական ծագում ունեցող՝ շուրջ 16,000 սիրիացիներն են, ովքեր պաշտպանություն են հայցում Հայաստանում: Տեղահանվածներից շատերն ունեն բարձրակարգ կրթության, մասնագիտական հմտություններ և հաճախ՝ ձեռնարկատիրա-

<sup>30</sup> Աղքատության մակարդակը Վայոց Ձորում կազմում է 21%, Ընդհանուր՝ 46%, իսկ Տավուշում 2008-2013թթ. ընթացքում գրանցվել է աղքատության մակարդակի ամենամեծ աճը: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Ազգային վիճակագրական ծառայություն, 2014թ. էջ 37:  
<sup>31</sup> Աղքատության մակարդակը Վայոց Ձորում կազմում է 21%, Ընդհանուր՝ 46%, իսկ Տավուշում 2008-2013թթ. ընթացքում գրանցվել է աղքատության մակարդակի ամենամեծ աճը: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Ազգային վիճակագրական ծառայություն, 2014թ. էջ 37:

<sup>32</sup> Արժանապատիվ աշխատանք, երկրի առանձնահատկությունները, Հայաստան, ԱՄԿ, 2012թ., էջ 5:  
<sup>33</sup> Ս. Կարապետյան և այլք, «Հայաստան. Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական մեկուսացումը», Եվրասիա համագործակցության հիմնադրամ/Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ, Երևան, 2011թ., էջ 9:  
<sup>34</sup> ԱՄԿ-ի «Երիտասարդների համար զբաղվածության գրքով միտումները՝ 2013թ.»:  
<sup>35</sup> «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին զեկույց», ՄՄԿ և Ազգային վիճակագրական ծառայություն, 2014թ.:  
<sup>36</sup> [https://www.cba.am/EN/ppublications/tex\\_09\\_14\\_eng.pdf](https://www.cba.am/EN/ppublications/tex_09_14_eng.pdf):

կան գործունեություն իրականացնելու մեծ փորձ, ուստի և կարող են նպաստել Հայաստանի տնտեսական զարգացմանը:

ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի միջև համագործակցության ջանքերն ուղղվելու են ներառական և կայուն տնտեսական աճի ապահովմանը՝

- ▶ ՓՄՁ-ները կարևոր դերակատարում ունեն արքատության կրճատման և աշխատատեղերի ստեղծման հարցում՝ ապահովելով երկրի աշխատուժի<sup>37</sup> գրեթե 25%-ի զբաղվածությունը և 2012 թվականին՝ ՀՆԱ-ի 27%-ը<sup>38</sup>: ՓՄՁ-ները կանգնած են բարձր արակվորում ունեցող աշխատողներ գտնելու, շուկայական ռիսկերի և ֆինանսավորման հետ կապված խնդիրների առջև<sup>39</sup>: Տեխնիկական աջակցությունը կտրամադրվի՝ արժանապատիվ աշխատանքի ապահովմանը նպաստելու և բիզնես միջավայրն ամրապնդելու նպատակով՝ շեշտը դնելով ՓՄՁ-ի զարգացման ռազմավարության վրա: Հատկապես կշեշտադրվի արտադրողների խմբերի ամրապնդումը և արժեքի ստեղծման շղթաների զարգացումը՝ առանձնահատուկ կերպով կարևորելով կանանց և երիտասարդների դերակատարումը: Կձեռնարկվեն քայլեր՝ աշխատանքի տեղավորման ծառայությունների որակը բարձրացնելու և որակյալ մասնագիտական կրթության ու վերապատրաստման հնարավորություններն ընդլայնելու ուղղությամբ՝ միաժամանակ հետ չմնալով արագ զարգացող տեխնոլոգիական նորարարությունից՝ նորարար և մրցունակ արդյունաբերության ճյուղերին աջակցելու նպատակով Հայաստանում հմտությունները զարգացնելու համար:
- ▶ Գործազրկությունը հաղթահարելու նպատակով՝ ռազմավարություններով կնախատեսվի աջակցության տրամադրում՝ ազգային զբաղվածության ռազմավարության մշակման համար, կբարելավվեն աշխատանքի շուկայի մասին օրենքները և քաղաքականությունը՝ երիտասարդների շրջանում

զբաղվածությունը խրախուսելու նպատակով: Առկա մարտահրավերները կարող են արդյունավետ կերպով հաղթահարվել համապարփակ ազգային զբաղվածության քաղաքականության շրջանակի մշակմամբ, որի հիմքում ընկած կլինեն մակրոտնտեսական քաղաքականության զբաղվածության արդյունքները: Քաղաքականություններում շեշտը պետք է դրված լինի թե՛ աշխատանքի առաջարկի, և թե՛ աշխատանքի պահանջարկի վրա:

- ▶ Ներառական և կայուն տնտեսական աճի ապահովմանն ուղղությամբ՝ աջակցության տրամադրում այնպիսի մակրոտնտեսական հարցերի լուծման համար, ինչպիսին է պարտքի կառավարումը, ինչպես նաև աջակցություն տրամադրում քաղաքականության վերաբերյալ թիրախային խորհրդատվության միջոցով՝ ուղղված առևտրի և ներդրումների մթնոլորտի բարելավմանը՝ ձեռնարկատիրության զարգացումը խթանելու և աշխատանքի տեղավորման բնագավառում հնարավորություններ ստեղծելու նպատակով:
- ▶ Աշխատուժի վերապատրաստման և զբաղվածության հնարավորությունների մասին տեղեկատվական հոսքի բարելավումը չափազանց կարևոր է: Անհրաժեշտ են նոր սխեմաներ՝ հմտությունների հարցում առկա բացերը գնահատելու և վերլուծելու, ինչպես նաև աշխատանք փնտրողներին արժանապատիվ աշխատանք գտնելու հարցում աջակցելու համար: Այս ջանքերը նպատակաուղղված կլինեն խոցելի խմբերին, մասնավորապես՝ ոչ բավարար հմտություններ ունեցող երիտասարդներին, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականներին և Սիրիայից տեղահանված անձանց:
- ▶ 2014 թվականին ներկայացված «Հայաստանի ինովացիոն զարգացման զեկոյցում»<sup>40</sup> հատուկ շեշտադրում է կատարվել երկրի կողմից ազգային ինովացիոն համակարգերի (ԱԻՀ) բնագավառում արձանագրած առաջընթացի վրա և ներկայացվել են մի

<sup>37</sup> ՓՄՁ-ները՝ թվերով, 2012թ., ՓՄՁ ԶԱԿ:  
<sup>38</sup> Համաշխարհային բանկ, «Երկրի ծրագրի համառոտ նկարագրությունը», 2014թ.:  
<sup>39</sup> Զարգացման արդյունքների գնահատում, 2014թ.:

<sup>40</sup> «Հայաստանի ինովացիոն զարգացման զեկոյց», ՄԱԿ ԵՏՀ, 2014թ.:

շարք առաջարկություններ և քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն, որոնք նպատակաուղղված են ազգային ինովացիոն համակարգի արդյունավետության բարձրացմանը, շահագրգիռ կողմերի ինովացիոն կարողությունների հզորացմանը, Հայաստանի շուկայի համար նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև ինովացիոն գործընթացների և ծառայությունների ներդրմանը: Սոցիալական ինովացիայի և կառավարման ոլորտում ինովացիայի կարևորությունը ևս համարվում է հետագա զարգացման թիրախային ոլորտներից մեկը:

- ▶ Գյուղատնտեսությունը զգալի ներդրում է կատարում տնտեսության մեջ և գյուղական վայրերում տնտեսական գործունեության իրականացման հիմնական աղբյուրն է: Այն կազմում է ՀՆԱ-ի 19 %-ը և ընդգրկում է զբաղված բնակչության մոտ 36%-ը: Այն հիմնականում բաղկացած է մասնատված հողակտորներ ունեցող փոքր տնտեսություններից, որոնք հիմնականում օգտագործվում են ինքնաբավ գյուղատնտեսության նպատակով: Շուկաների հետ կապերը քիչ են, ռեսուրսները սահմանափակ են, իսկ աճի ներուժը՝ աննշան: Գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական աջակցությունը կտրամադրվի՝ թե՛ արդյունավետությունը և թե՛ կայունությունը բարելավելու նպատակով: Ջանքերը կուղղվեն քաղաքականության բարելավմանը, գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների ավելի լավ կառավարմանը, գյուղատնտեսական համատարած հաշվառմանն ուղղված աջակցությանը, արտադրողների խմբերի և կոոպերատիվների հզորացմանը և արժեքի ստեղծման տարբեր շղթաներում նրանց ներգրավվածության մակարդակի բարձրացմանը: Գյուղական համայնքների զարգացման համապարփակ ծրագիրը կիրականացվի խոցելի սահմանամերձ շրջաններում՝ եկամուտ ստանալու հնարավորություններն ապահովելու և տարածաշրջանների միջև անհավասարությունները կրճատելու նպատակով: Ակնկալվում է, որ այս ջանքերը կնպաստեն գյուղական վայրերում

եկամտի մակարդակի բարձրացմանը:

- ▶ Հանրային-մասնավոր գործընկերությունները համարվելու են ենթակառուցվածքի բացերը լրացնելու միջոցներից մեկը: ՄԱԿ-ը կաջակցի դրանց կայացմանը՝ մշակելով և հարմարեցնելով ենթակառուցվածքի տարբեր ոլորտներում՝ ներառյալ խմելու ջրի մատակարարման, մաքրման և կոյուղաջրերի հեռացման, առողջապահության և կրթության ենթակառուցվածքում տրանսպորտի և էներգետիկայի ենթակառուցվածքում առկա չափանիշները և լավագույն գործելակերպերը:

Աջակցություն կտրամադրվի վիճակագրական արտադրության գործընթացների բարելավման ուղղությամբ՝ վերջնական նպատակ ունենալով ապահովել միջազգային չափանիշներին համապատասխանության ավելի բարձր մակարդակ:

- ▶ Ապրանքների առևտրի նորմատիվ-իրավական և ընթացակարգային խոչընդոտների գնահատում ձեռնարկելու միջոցով տարածաշրջանային ինտեգրմանն ուղղված նախաձեռնությունները կիրականացվեն Կառավարության խնդրանքով՝ կիրառելով ՄԱԿ ԵՏՀ-ի՝ հարցումների վրա հիմնված գնահատման մեթոդաբանությունը: Գնահատման արդյունքում կհայտնաբերվեն առևտրի նորմատիվ իրավական և ընթացակարգային խոչընդոտները և կներկայացվեն գործնական, կոնկրետ գործողությունների կատարմանը նպատակաուղղված առաջարկություններ դրանք հաղթահարելու վերաբերյալ:
- ▶ Աջակցություն կտրամադրվի փախստականներին՝ Հայաստանում նրանց տնտեսական ինտեգրումը խթանելու նպատակով, որը կներառի լեզվի և գործարարության ուսուցումը, արտոնյալ վարկերի և ֆինանսական ծառայությունների մատչելիության ապահովումը, ինչպես նաև ապրուստի միջոցների ստեղծմանն ուղղված այլ միջամտությունները:

ՄԱԿ-ի ծրագրերի շրջանակներում ակնկալվող հիմնական միջանկյալ արդյունքներն են՝

1. ենթակառուցվածքի բարելավում և խոցելի խմբերի և սահմանամերձ հա-

- մայնքների համար տնտեսական հնարավորությունների ստեղծում՝ ներառյալ մշակութային և ստեղծագործ արդյունաբերական ճյուղերի և մշակութային զբոսաշրջության զարգացման միջոցով.
2. աշխատանքի շուկայի գործուն ծրագրեր՝ ՓՄՁ-ի խթանման և աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև խոցելի խմբերի համար.
  3. ՓՄՁ-ների կարողությունների զարգացում՝ ապահովելով ավելի հարուստ գիտելիքների, բարելավված հմտությունների, շուկայավարման և արտահանման կարողությունների առկայություն.
  4. մոնիտորինգի և գնահատման նոր մեխանիզմներ՝ զբաղվածության ապահովման պետական միջոցառումների ընդգրկույթը և ազդեցությունը գնահատելու համար.
  5. վերաինտեգրման հետ կապված աջակցության տրամադրում վերադարձող միգրանտներին՝ աշխատանքի տեղավորման, սկսնակ գործարարության, ֆինանսական միջոցների մատչելիության բարելավման, դրամական փոխանցումների արդյունավետ օգտագործման հարցում.
  6. արժեքի ստեղծման շղթայի զարգացում, արտադրողների լրացուցիչ և ավելի արդյունավետ խմբերի ամրապնդում, գյուղերում եկամտի և զբաղվածության ավելի բարձր մակարդակի ապահովում, բարելավված պարենային ապահովություն, ինչպես նաև սպառողների միջոցներին համապատասխան՝ մատչելի, ավելի բարձրորակ սննդամթերքի ձեռքբերման ավելի մեծ հնարավորության ապահովում.
  7. գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների և պլանավորման գործընթացի բարելավում.
  8. քաղաքականության և մեխանիզմների բարելավում՝ «Գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման 2015-2025թթ. ռազմավարության և գործողությունների ծրագրի» իրականացման հարցում աջակցելու նպատակով.

9. արդյունաբերություն-գիտություն կապի բարելավում, ինչպես նաև նորարար ձեռնարակատերերի ֆինանսավորման հնարավորությունների բարելավում.
10. նոր ստեղծված ազատ տնտեսական գոտիների և տեխնոլոգիական պարկերի համար ինստիտուցիոնալ զարգացում:

## 2-րդ սյուն. Ժողովրդավարական կառավարում

### Արդյունք 2.

**Մինչև 2020 թվականը մարդիկ կօգտվեն ժողովրդավարական կառավարման բարելավված համակարգերից և մարդու իրավունքների ամրապնդված պաշտպանությունից:**

Այս արդյունքի շրջանակներում, ՄԱԿ-ը կիրականացնի քաղաքականության մշակում, ինստիտուցիոնալ զարգացում, կապահովի մասնակցությունը և իրավագործումը ազգային և տեղական մակարդակներում՝ մարդու իրավունքների պաշտպանության, արդարադատության մատչելիության, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման գերակա ոլորտներում:

Հայաստանն իրականացնում է պետական կառավարման ոլորտում բարեփոխումների ազգային ռազմավարություններ, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության կատարելագործման, հանրային ֆինանսների կառավարման, տեղական ինքնակառավարման և հակակոռուպցիոն նախաձեռնություններ: 2011 թվականին Հայաստանը միացել է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությանը և ներկայումս իրականացնում է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության՝ երկրորդ միջոցառումների ծրագիրը 2014-2016 թվականների համար: Պետական կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կառավարության նոր ռազմավարությունն ուղղված կլինի առանցքային ոլորտներում, այդ թվում՝ կրթության, առողջապահության, պե-

տական եկամուտների կառավարման ոլորտում և իրավապահ մարմիններում կոռուպցիայի խնդրի հաղթահարմանը, ինչպես նաև կկարևորի քաղաքացիների և քաղաքացիական հասարակության առավել ներգրավվածությունը:

Քաղաքացիական հասարակությունը Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումների գործընթացի առաջնային դերակատարներից է: Հետևաբար, բազմաթիվ ջանքեր են անհրաժեշտ՝ մարդկանց մասնակցությունը կառավարման գործընթացներում խրախուսելու, «քաղաքացի-փորձագետ» հասկացությունը խթանելու և զարգացմանն ուղղված այնպիսի արդյունավետ լուծումներ և հանրային ծառայություններ մշակելու համար, որոնք կպահովեն ցանկալի արդյունքներ: ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի համագործակցության շրջանակներում մեծ ուշադրություն կդարձվի հանրային ծառայությունների որակի և մատչելիության վրա՝ բարելավելով քաղաքացիների՝ Կառավարության հետ փոխգործակցությունը, ամրապնդելով պահանջելու, բանակցելու և երկխոսելու մշակույթը, ինչպես նաև աջակցելով Կառավարությանն առավել բաց և թափանցիկ աշխատելու գործում:

Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերի մեծ մասը և ընդունել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը» (2014 թվական): ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված աշխատանքային խումբը ջանքեր է գործադրում ստանձնած պարտավորությունների կատարման և համակարգմանն ուղղությամբ: Առկա է օրենսդրության կիրարկման և իրականացման գործընթացների ամրապնդման անհրաժեշտություն, քանի որ օրենսդրության առկայությունը ոչ միշտ է հանգեցրել գործնականում տեղի ունեցող դրական փոփոխությունների: Ավելին, քաղաքացիների շրջանում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրավագիտակցության մակարդակը ցածր է, ուստի շատերը չեն կարողանում պաշտպանել իրենց իրավունքները<sup>41</sup>: Մարդու իրավունքներ-

րի պաշպանության հետ կապված կարևորագույն խնդիրներն են՝ օրենքի գերակայությունը և արդարադատության մատչելիությունը, խոշտանգումը և վատ վերաբերմունքը, սոցիալական խտրականությունը խոցելի և փոքրամասնություն կազմող խմբերի նկատմամբ: «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը» անդրադառնում է մարդու իրավունքների պաշտպանության բոլոր ոլորտներին, այդ թվում՝ քաղաքացիական, քաղաքական, սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանությանը:

ՄԱԿ-ը կրնալայնի իր հաջողված աշխատանքը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում՝ աջակցելով Կառավարությանը իր «Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության և միջոցառումների ծրագրի» իրականացման և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմների կողմից ներկայացված առաջարկությունների իրականացման հարցում՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստեղծված աշխատանքային խմբի հետ սերտ համագործակցությամբ: ՄԱԿ-ը նաև կխթանի երկխոսությունը և հանդուրժողականության նկատմամբ հարգանքը՝ ընդլայնելով մարդու իրավունքների, այդ թվում՝ Ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ ուսուցումը:

ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի համագործակցության շրջանակներում մեծ ուշադրություն կդարձվի հանրային ծառայությունների որակի և մատչելիության վրա՝ բարելավելով քաղաքացիների՝ Կառավարության հետ փոխգործակցությունը՝ ամրապնդելով պահանջելու, բանակցելու և երկխոսելու մշակույթը, ինչպես նաև աջակցելով կառավարությանն առավել թափանցիկ և բաց աշխատելու գործում: ՄԱԿ-ը նաև կաջակցի տվյալների հավաքագրման և ապացույցների վրա հիմնված քաղաքականության մշակման համար վերլուծության իրականացման ազգային կարողությունների զարգացմանը:

- ▶ Քաղաքականության մշակման և ինստիտուցիոնալ մակարդակում անհարժեշտ է ջանքեր գործադրել՝ հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրեր մշակելու և իրականացնելու ուղղությամբ՝ ապահովելով քաղաքացիների առավել մեծ

<sup>41</sup> «Հայաստանում պետական երաշխավորված ազգային իրավական օգնության համակարգի կարողությունների գնահատում», ՄԱԶԾ, 2013թ.:



ներգրավվածությունը՝ ուժեղացնելով համապատասխան գերատեսչությունների, քաղաքացիական հասարակության և գիտահետազոտական կազմակերպությունների՝ ազդեցության գնահատումներ կատարելու կարողությունները, ինչպես նաև հակակոռուպցիոն միջոցառումները ներառելով տեղական զարգացման երաշխիքներում: Գերակայությունները կուղղվեն պաշտպանության բարելավմանը և կանդրադառնան արդարադատության մատչելիության, խտրականության դեմ պայքարի, խոշտանգումների և վատ վերաբերմունքի հետ կապված խնդիրների: ՄԱԿ-ը կաջակցի Հայաստանին իր միջազգային պարտավորությունների կատարման հարցում՝ զարգացնելով դատական իշխանության և իրավապահ մարմինների կարողությունները և աջակցելով համաձայնեցված առաջարկությունների իրականացմանը՝ նշվածի համաձայն:

- ▶ ՄԱԿ-ը կաջակցի անվճար իրավական օգնության համակարգի և այլընտրանքային իրավաբանական ծառայությունների ամրապնդմանը և կաշխատի հասարակությունում իրավունքների ոլորտում իրազեկման և իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ՝ շեշտը դնելով հատկապես խոցելի խմբերի վրա՝ «իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրին» համապատասխան: Զուգահեռաբար, այն կխթանի երկխոսությունը՝ նպատակ ունենալով էլ ավելի նվազեցնել և, վերջ ի վերջո, վերացնել հասարակությունում առկա խտրականության բոլոր ձևերը: Այն նաև կաջակցի Կառավարությանը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համեմատական ուսումնասիրությունների, գնահատման շրջանակների և օգնության համակարգման հարցում:

ՄԱԿ-ի ծրագրերի շրջանակներում ակնկալվող հիմնական միջանկյալ արդյունքներն են՝

1. մեխանիզմների համակարգման բարելավում՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի իրագործումը և միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու համար.

2. քաղաքացիական հասարակության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների մոնիտորինգի շրջանակի բարելավում և կառավարության կողմից հակակոռուպցիոն ռազմավարության իրականացում.
3. քաղաքացիների և Կառավարության միջև կանոնավոր հաղորդակցության նոր մեխանիզմների առկայություն, որոնք կնպաստեն քաղաքականության մշակման գործընթացում իրազեկվածության բարելավմանը.
4. իրավական պաշտպանության մեխանիզմների, այդ թվում՝ անվճար իրավաբանական օգնության մեխանիզմի բարելավում:

**Արդյունք 3.**  
**Մինչև 2020 թվականը Հայաստանն արձանագրել է ավելի մեծ առաջընթաց գենդերային անհավասարության նվազեցման առումով և կանայք ավելի լայն հնարավորություններ ունեն ու քիչ հավանական է, որ ենթարկվեն ընտանեկան բռնության:**

Հայաստանում առկա են գենդերային հավասարության հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ տնտեսական և քաղաքական ոլորտներում կանանց մասնակցությունը, գենդերային հիմքով բռնությունը և խտրականությունը: Չնայած կանանց մոտ կրթության բարձր մակարդակին՝ քաղաքական և տնտեսական կյանքին նրանց մասնակցության մակարդակը ցածր է<sup>42</sup>: 2014 թվականի դրությամբ կանանց 11%-ն էր զբաղեցնում նախարարի և փոխնախարարի պաշտոն, միայն 11%-ը՝ պատգամավորներ էին, և գրեթե 8%-ը՝ ներկայացված էր տեղական կառավարման մարմիններում: Այսպիսին էր իրավիճակը՝ չնայած ՀՀ Ընտրական

<sup>42</sup> Հազարամյակի զարգացման նպատակների ազգային առաջընթացի գեկույց, ՄԱԶԾ, Հայաստան, 2010թ.:

օրենսգրքում կատարված փոփոխության, որի համաձայն սահմանվում էր կուսակցական ցուցակներում կանանց ներգրավվածություն՝ 20%-ի չափով: Մարզպետների և քաղաքային համայնքների ղեկավարների շրջանում կանայք չկան: Հայաստանում կանանց միայն 11%-ն է զբաղվում միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ<sup>43</sup>: Նորածինների սեռերի հարաբերակցությունը շոշափելի աճ գրանցեց անկախության ձեռքբերումից անմիջապես հետո և այժմ էլ շարունակում է մնալ շատ բարձր մակարդակի վրա՝ կազմելով 114 նորածին տղա՝ յուրաքանչյուր 100 նորածին աղջկա հաշվով, ինչը հուշում է նախածննդյան շրջանում սեռով պայմանավորված ընտրության առկայության մասին: Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Գենդերային անհավասարության ցուցիչի՝ Հայաստանը 142 երկրների թվում զբաղեցրել է 103-րդ տեղը՝ վերջին հինգ տարիների ընթացքում փոքր ինչ վատթարացնելով իր դիրքերը՝ վարկանիշային ցանկում 2014 թվականին գրանցելով 0.662 միավոր (2010 թվականին գրանցած 0.667 միավորի համեմատ)<sup>44</sup>: Միայն կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների թվի՝ 2010 թվականից ի վեր գրանցված աճը հասել է մեկ երրորդի: Այս երևույթը կարող է պայմանավորված լինել տղամարդկանց շրջանում աշխատող միգրանտների բարձր ցուցանիշով, որը դիտարկվում է հատկապես երկրի գյուղական բնակավայրերում: Հաշվի առնելով կանանց տնտեսական հնարավորությունների սահմանափակումները՝ նշված տնային տնտեսությունները խոցելի են աղքատության տեսանկյունից<sup>45</sup>:

2010 թվականից ի վեր մշակվել են քաղաքականության մշակման մի շարք գործիքներ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ ՀԿ-ների և ՄԱԿ-ի գործակալությունների հետ համագործակցությամբ, սակայն դրանց արդյունավետ կիրառումը դեռևս խնդիր է: Հայաստանում գենդերային քաղաքականության հիմքում ընկած է Հայեցակարգը, որն ուղղված է գենդերային հավասարության ստեղծմանը, գենդերային հիմքերով խտրականու-

թյան վերացմանը, աշխատանքի շուկայում հավասար իրավունքների ապահովմանը և տնտեսական ռեսուրսների հավասար մատչելիությանը, հանդուրժողականության ժողովրդավարական քաղաքական մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև հասարակությունում գենդերային հարցերի շուրջ երկխոսությանը կյանքի բոլոր ոլորտներում գենդերային չափորոշիչի ներառման միջոցով: Հայեցակարգում սահմանված առանցքային խնդիրներին հետագայում անդրադարձ է կատարվել ՀՀ կառավարության կողմից նպատակային ռազմավարական գործողությունների ծրագրերի միջոցով, այդ թվում՝ «2011-2015 թվականների գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագրի», «Ընդդեմ գենդերային խտրականության 2011-2015 թվականների ռազմավարական միջոցառումների ծրագրի» և հարակից՝ գենդերային քաղաքականության տարեկան միջոցառումների ծրագրերի միջոցով: Միջոցներ են ձեռնարկվել ներմուծելու գենդերային բաղադրիչը քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում ազգային և տարածաշրջանային մակարդակներում սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրթական, առողջապահության, մշակութային և հանրային տեղեկատվության ոլորտներում: ՀՀ վարչապետին առընթեր՝ Տղամարդկանց և կանանց հավասարության հիմնահարցերով խորհուրդը<sup>46</sup> պետական քաղաքականության բոլոր ոլորտներում գենդերային ռազմավարության իրականացման համակարգող մեխանիզմն է: Ինստիտուցիոնալ մեխանիզմներն ուժեղացնելու և բարելավելու նպատակով՝ 2011 թվականին մարզպետարաններում, Երևանի քաղաքապետարանում և մայրաքաղաքի 12 վարչական շրջաններում ստեղծվեցին գենդերային հարցերով մշտական հանձնաժողովներ ՀՀ մարզպետների և Երևանի քաղաքապետի հրամանով<sup>47</sup>:

2013 թվականի մայիսին ընդունվեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը: «Գենդեր» եզրույթն օրենքում սխալ էր

<sup>43</sup> Կանանց ձեռներեցության աջակցության ոլորտի զարգացման ծրագիր, Ասիական զարգացման բանկ, 2013-2017թթ.:

<sup>44</sup> ՀՏՖ գենդերային անհավասարության ցուցիչ, 2014թ.: <http://reports.weforum.org/global-gender-gap-report-2014/economies/#economy=ARM>

<sup>45</sup> Հայաստան 2010. Գենդերային գնահատման նորացված տարբերակ, ԱՄՆ ՄԶԳ:

<sup>46</sup> Խորհուրդը վերաստեղծվել է ՀՀ վարչապետի 2014թ. նոյեմբերի 19-ի 1152-Ա որոշմամբ:

<sup>47</sup> «Պեկինի հռչակագրի» և «Գործողությունների պլանֆորմի» իրականացման մասին ՀՀ ազգային դիտարկում [http://www.unescapdd.org/files/documents/Beijing20\\_national\\_review\\_Armenia.pdf](http://www.unescapdd.org/files/documents/Beijing20_national_review_Armenia.pdf):

մեկաբանվել և թյուրըմբռնում էր առաջացրել հասարակության որոշակի սոցիալական խմբերի մոտ: ՀՀ վարչապետին առընթեր՝ Կանանց խորհուրդը և ՄԱԿ-ը, միջազգային այլ կազմակերպությունների հետ միասին, հանդես են եկել խնդրո առարկայի վերաբերյալ հայտարարություններով:

Դժվար է գնահատել Հայաստանում կանանց նկատմամբ բռնության դրսևորումների դեպքերի տարածվածությանը, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ քիչ դեպքեր են հաղորդվում, մասնավորապես՝ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, առկա տվյալները և հետազոտությունը ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը լուրջ խնդիր է, որն ազդում է Հայաստանի հասարակության բոլոր շերտերի վրա: Դեռևս գոյություն չունեն բռնության գրհերին պաշտպանելու և իրավախախտներին պատժելու համար նախատեսված համապատասխան իրավական մեխանիզմներ: 2013 թվականի փետրվարին Կառավարությունը հետագա մշակման նպատակով վերադարձրեց «Ընտանեկան բռնության մասին» օրենքի նախագիծը և ՀՀ արդարադատության նախարարությանը հանձնարարեց փոփոխություններ կատարել համապատասխան իրավական ակտերում: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեն, ի թիվս այլոց, առաջարկել է, որ Հայաստանն ընդունի առանձին օրենսդրություն՝ ընտանեկան բռնության դեմ պայքարելու համար և ստեղծի ուղղորդման մասնագիտացված համակարգ՝ ընտանիքում դաժան վերաբերմունքի գրհերի համար, որի շրջանակներում բռնությունը կհամարվի օրենքով հետապնդման ենթակա՝ քրեական և քաղաքացիական իրավախախտում<sup>48</sup>:

Այս խնդիրները հաղթահարելու նպատակով ՀՀ կառավարությունը և ՄԱԿ-ը կզարգացնեն ազգային ինստիտուտների կարողությունները՝ գենդերային հավասարությունը և կանանց հնարավորությունների ընդլայնումը խթանող քաղաքականությունների մշակման և իրականացման հարցում: Կիրառվելիք հիմնական ռազմավարությունները և ՄԱԿ-ի

ծրագրերի շրջանակներում ակնկալվող միջանկյալ արդյունքներն են՝

1. գենդերային անհավասարության կրճատում՝ որպես թիրախ ընտրելով սոցիալապես մեկուսացված և խոցելի խմբերին (ազգային մակարդակում սահմանված աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող մարդիկ, գյուղական վայրերում բնակվող կանայք՝ ներառյալ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները)։
2. ազգային և տեղական մակարդակում գերակա խնդիրների վերաբերյալ կանանց ձայնի լսելիության ապահովում և այդ խնդիրների լուծման հարցում նրանց մասնակցության ամրապնդում։
3. կին առաջնորդների նոր սերնդի ձևավորում և զարգացում բոլոր մակարդակներում, մասնավորապես՝ մեծացնելով ջանքերը տեղական մակարդակում կին ղեկավարների նվազագույն զանգված ապահովելու ուղղությամբ։
4. մարդու իրավունքների պաշտպանության և գենդերային հավասարության ոլորտում ելակետային ցուցանիշների հիման վրա համեմատական վերլուծությունների իրականացման, գնահատման շրջանակների և օգնության համակարգման հետ կապված աջակցության տրամադրում։
5. կանանց և աղջիկների վերարտադրողական առողջության, սոցիալական և տնտեսական մասնակցության վրա գենդերային հիմքով բռնության ազդեցությունների վերլուծություն։
6. գենդերային օրենսդրության բարելավման ու իրականացման սատարում և գենդերային հավասարությունը խթանող ու գենդերային հիմքով բռնությանն արձագանքող քաղաքականությունների և ծրագրերի ինստիտուցիոնալացման խթանում,
7. բազմաոլորտային կարողությունների զարգացում գենդերային հիմքով բռնությունները հաղթահարելու նպատակով, այդ թվում՝ տղամարդկանց և տղաների ներգրավմամբ:

<sup>48</sup> <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N09/229/31/PDF/N0922931.pdf?OpenElement>;

#### Արդյունք 4.

**Մինչև 2020 թվականը միգրացիայի, սահմանների և ապաստանի կառավարման համակարգերն ամրապնդվել են՝ միգրանտների և տեղահանված անձանց, հատկապես՝ կանանց ու աղջիկների իրավունքները խթանելու և պաշտպանելու նպատակով:**

Միգրացիան՝ ներառյալ հարկադիր միգրացիան, Հայաստանի բնակիչների վրա ազդող կարևոր սոցիալ-տնտեսական երևույթ է, որի համար անհրաժեշտ է համապարփակ և արդյունավետ միգրացիոն կառավարման համակարգի՝ ներառյալ փախստականների պաշտպանությանը ծառայող մեխանիզմների ստեղծում:

Հայաստանի ընտանիքների գրեթե կեսն առնչվում է միգրացիայի հետ: Տարեկան մինչև 35,000 մարդ է արտագաղթում Հայաստանից: Այս միգրանտներից 82%-ը տղամարդ են, իսկ 18%-ը՝ կին<sup>49</sup>: Այս արտագաղթողներից գրեթե 62%-ը արտագաղթելուց անմիջապես առաջ գործազուրկ է եղել: Հայաստանից արտագաղթողների համար հիմնական ուղղությունը Ռուսաստանի Դաշնությունն է (91%), ապա ԵՄ (4%), ԱՄՆ և Ուկրաինա: 2007-2013 թվականներին, արտագաղթողների 38%-ը վերադարձել է, որոնցից՝ յուրաքանչյուր 3-ից 2-ը՝ տղամարդ<sup>50</sup>: Վերադարձողները հատուկ ուշադրության կարիք ունեն և բարեհաջող վերաինտեգրման համար համապատասխան միջավայր է պահանջվում: Ի հավելումն, Հայաստանն ընդունում է տեղահանված բնակչություն՝ հիմնականում Սիրիայից, Ադրբեջանից, Իրաքից և Ուկրաինայից<sup>51</sup>: Մո-

տավորապես 15,000 մարդ, որոնք տեղահանվել են Սիրիայում հակամարտության պատճառով և ովքեր հիմնականում ունեն հայկական ծագում, պաշտպանություն են հայցել Հայաստանում՝ օգտվելով Կառավարության կողմից առաջարկվող մի շարք հնարավորություններից (օրինակ՝ հպատակագրման դյուրացում, ապաստանի և կացության կարգավիճակի ստացման արագացված ընթացակարգեր): ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի (մասնավորապես՝ ՄԱԿ ՓԳՀ-ի) ջանքերն այժմ փոխում են

իրենց ուղղությունը՝ անմիջական հրատապ աջակցությունից անցնելով հուսալի լուծումների, հիմնականում՝ տեղական ինտեգրման եղանակով: Հայաստանին շրջապատող երկրներում և տարածաշրջաններում առկա աշխարհաքաղաքական լարվածություններից և ընթացող հակամարտություններից ելնելով՝ պահանջվում է հետագա տեղահանման սցենարներին արդյունավետ կերպով արձագանքելու պատրաստվածության դրսևորում:

Թեև առկա է միգրացիայի և փախստականների պաշտպանությանն ուղղված հիմնական օրենսդրություն<sup>52</sup>, ՀՀ միգրացիոն պետական ծառայության (ՄՊԾ) կողմից պատրաստվել է «Ապաստանի և փախստականների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը դեռ պետք է հաստատվի Կառավարության կողմից, ապա ընդունվի ՀՀ Ազգային ժողովի կողմից: Ավելին, մշակման փուլում է գտնվում «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» բարելավված օրենքը:

Հայաստանում միգրացիայի և ապաստանի ոլորտներում ինստիտուցիոնալ շրջանակը բարդ է: Տարբեր նախարարությունների և իշխանությունների ներգրավվածությունը

<sup>49</sup> Կախված կրթության մակարդակից՝ ՀՀ-ից արտագաղթողները կարող են բաժանվել առնվազն չորս կատեգորիայի. 1) կրթված միգրանտներ՝ բուհական կրթությամբ, որոնք կազմում է միգրանտների ընդհանուր թվի 17.2%-ը, 2) բարձր որակավորում ունեցող միգրանտներ՝ բաղկացած հետբուհական կրթություն ունեցող անձանցից՝ կազմելով միգրանտների ընդհանուր թվի 0.6%-ը, 3) ցածր որակավորում ունեցող միգրանտներ՝ միջնակարգ ընդհանուր կրթությամբ՝ կազմելով միգրանտների ընդհանուր թվի 49.8%-ը և 4) արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անմիջա՝ (23.9%):

<sup>50</sup> [http://publications.iom.int/bookstore/index.php?main\\_page=product\\_info&cPath=41\\_7&products\\_id=1400](http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1400)

<sup>51</sup> Ըստ պաշտոնական աղբյուրների՝ 1988-ից 1992թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանն ընդունել է էթնիկական ծագումով հայ 360,000 փախստական Ադրբեջանից, որոնց մեծ մասը հպատակագրվել է, սակայն շատերը դեռևս դժվարություններ են

կրում՝ կապված իրենց սոցիալ-տնտեսական ինտեգրման հետ և տուժում են բնակարանային պայմանների երկարաժամկետ լուծումների բացակայության պատճառով: 2005-ից 2007թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանն ընդունել է մոտ հազար փախստական Իրաքից: Ներկայումս Հայաստանն ընդունել է նաև էթնիկական ծագումով մեծամասամբ հայ՝ շուրջ 15,000 փախստականների, որոնք տեղահանվել են Սիրիայում ընթացող հակամարտության հետևանքով և պաշտպանություն են հայցել Հայաստանում, ինչպես նաև փոքրաթիվ փախստականների՝ մի շարք այլ երկրներից:

<sup>52</sup> «Օտարերկրացիների մասին» 2006թ. ՀՀ օրենքը, «Սահմանապահ գործերի մասին» 2001թ. ՀՀ օրենքը, «Պետական սահմանի մասին» 2001թ. ՀՀ օրենքը, 2011թ. «ԵՄ-Հայաստան շարժունակության շուրջ գործընկերությունը» և «Միգրացիոն օրենսդրությունը ԵՄ և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար 2014-2016թթ. գործողությունների ծրագիրը»:

միգրացիոն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում, հաճախ համընկնող մանդատներով<sup>53</sup>, պահանջում է արդյունավետ և բարելավված համակարգման մեխանիզմներ: Հայաստանում միգրացիոն քաղաքականության ընդհանուր համակարգումը և մշակումն ընկած է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը կից գործող գերատեսչության՝ ՄՊԾ-ի վրա: Մինչև նույն ժամանակ, ՄՊԾ-ն պատասխանատու է ապաստանի դիմումներին ընթացք տալու<sup>54</sup> համար և վերջերս ստեղծել է ինտեգրման բաժին:

Վերջին տասնամյակի ընթացքում, երկրում հաջողությամբ լուծվել են թրաֆիքինգի հետ կապված խնդիրները: Հստակ թվերը շատ քիչ են՝ տարեկան կազմելով միջինում 15 դեպք: Հայաստանը սկզբնաղբյուր հանդիսացող երկիր է համարվում Հայաստանում նույնացված թրաֆիքինգի զոհերի (ԹԶ-եր) 85%-ի համար, այդ թվում՝ սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկված կանանց և աղջիկների (80%) և հարկադիր աշխատանքի կատարման նպատակով թրաֆիքինգի ենթարկված տղամարդկանց (20%) համար: 2002 թվականից ի վեր՝ Կառավարությունն ակնհայտ առաջընթաց է գրանցել թրաֆիքինգի դեմ պայքարում՝ ամրապնդելով հակազդման միջոցները, այդ թվում՝ իրավական դաշտի կատարելագործումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան, բարելավելով ինստիտուցիոնալ կառուցվածքները, հաստատելով և իրականացնելով գործողությունների չորս ազգային ծրագրերը (2004-2006 թթ., 2007-2009թթ., 2010-2012թթ. և 2013-2015թթ.), 2008 թվականին ստեղծելով թրաֆիքինգի ենթարկված անձանց Ազգային ուղղորդման մեխանիզմը (ԱՌԽՄ), և 2009 թվականին, առաջին անգամ, թրաֆիքինգի զոհերին աջակցություն տրամադրելու համար պետական ֆինանսավորում հատկացնելով: 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվեց «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնաց-

ման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, որը կփոխարինի գործող ԱՌԽ-ին:

Չափազանց կարևոր է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված միգրացիայի կառավարման գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների միջև համագործակցության ամրապնդմանը, ինչի արդյունքում կբարելավվի միգրանտների և տեղահանված բնակչության իրավունքների պաշտպանությունը: ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի համագործակցության շրջանակներում մեծ ուշադրություն կդարձվի լավ համակարգված, փաստերի վրա հիմնված միգրացիոն և ինտեգրման ազգային ռազմավարությունների կատարելագործմանը, ինչպես նաև տեխնիկական հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրման դրույթին՝ օրենսդրությունը, քաղաքականությունները, ինչպես նաև տվյալների հավաքման և վերլուծության համակարգերը միջազգային չափանիշներին հապատասխանեցնելու նպատակով: Առկա է տեղահանված բնակչությանը ամբողջ երկրի մակարդակով, տարածքային և ոլորտային զարգացման ռազմավարություններում, պլաններում և ծրագրերում լայնորեն ներառելու անհրաժեշտություն: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու շրջանակներում ևս Հայաստանը պետք է ջանքեր գործադրի՝ միգրացիայի և ապաստանի տրամադրման ոլորտում իրականացվող գործառնությունները նոր ձևավորվող Եվրասիական տնտեսական միության՝ գործող օրենքներին և կանոնակարգերին համապատասխանեցնելու ուղղությամբ:

ՄԱԿ-ը կշարունակի իր աշխատանքը Սահմանների ինտեգրված կառավարման (ՄԻԿ) հարցում՝ զարգացնելով «ՄԻԿ ազգային ռազմավարությունն ու գործողությունների ազգային ծրագիրը» և շարունակելով Վրաստանի հետ սահմանային երեք անցակետերի արդիականացումը՝ հաշվի առնելով այն, որ կառավարությունը դա սահմանել է որպես գերակա խնդիր: ՄԱԿ-ը կընդլայնի իր գործունեության շրջանակները և կփոխի դրանց ուղղվածությունը՝ ներգործության միջոցների կիրառմամբ համագործակցություն հաստատելով զարգացմանն ուղղված փոխկապակցված այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսին է տնտեսական զարգացման ապահովումը՝ խթանելով առևտրային միջանցքների կիրառումը որպես տնտեսական միջանցքներ,

<sup>53</sup> Ռոսսի-Լոնգի Պ., Գալստյան Կ., Լինդստրոմ Ս., ՀՀ-ում միգրացիայի կառավարման դիտարկում, էջ 57, Գնահատման առաքելության զեկույց, ՄԱԿ, 2008թ. մարտ, հասանելի է՝ [http://publications.iom.int/bookstore/index.php?main\\_page=product\\_info&cPath=41\\_7&products\\_id=808](http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=808):

<sup>54</sup> ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայություն, հասանելի է՝ [http://www.smsmta.am/?menu\\_id=1](http://www.smsmta.am/?menu_id=1) (մատչելի է դարձել 2013թ. մայիսի 20-ին):

և դա ուղղակիորեն կապելով համայնքային զարգացմանն ուղղված գործունեության հետ:

Կիրառվելիք հիմնական ռազմավարությունները և ՄԱԿ-ի ծրագրերի շրջանակներում ակնկալվող միջանկյալ արդյունքներն են՝

1. տեխնիկական խորհրդատվություն՝ միտված միգրանտների և փախստականների նկատմամբ վերաբերմունքը կարգավորող պետական օրենսդրությունը միջազգային, եվրոպական և տարածաշրջանային չափանիշներին համապատասխանեցնելուն.
2. աշխատանքային/գործողությունների ծրագրերի կազմում, որոնք կծառայեն վերանայված օրենսդրության կիրարկման նպատակին.
3. շարունակական աջակցություն և համակարգում՝ «ՀՀ և ԵՄ միջև շարժունակության շուրջ գործընկերության մասին» համատեղ հոչակագրի իրականացման համար.
4. շարունակական աջակցություն՝ «ՀՀ և ԵՄ միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի իրականացման և վերահսկման (նաև՝ կատարման վերահսկման) համար.
5. միգրանտների ռեսուրսային և ուղղորդման կենտրոնների համակարգի ընդլայնում.
6. համայնքային տնտեսության զարգացման ծրագրեր երկրի արտագաղթյալ տարածքներում, աջակցություն փախստականներին և տեղահանված բնակչությանը՝ ինտեգրման, իսկ վերադարձող քաղաքացիներին՝ վերաինտեգրման հարցում.
7. կատարելագործված մեխանիզմներ՝ ուղղված միգրանտների և տեղահանված բնակչության ամենախոցելի խմբերը որոշելուն.
8. լավ համակարգված ուղղորդման մեխանիզմների մշակում՝ ուղղված վերադարձող միգրանտներին, ապաստան հայցողներին և փախստականներին որակյալ ծառայություններով ապահովելուն.
9. աջակցություն՝ Ինտեգրման ազգային ռազմավարությունը մշակելու և իրագործելու համար.

10. գորացնել օրինապահ մարմինների և դատական իշխանության կարողությունները՝ Հայաստանում թրաֆիքինգի վերաբերյալ գործերով քրեական հետապնդում իրականացնելու համար.

11. աջակցություն Թրաֆիքինգի դեմ պայքարի գնահատման գործիքի մշակման և ընդունման հարցում՝ ՀՀ կառավարության և ոչ կառավարական կառույցների շահագրգիռ կողմերի օգտագործման համար:

### 3-րդ սյուն. Սոցիալական ծառայություններ և ներառում

#### Արդյունք 5.

**Մինչև 2020 թվականը խոցելի խմբերն ունեն տարրական կրթությունից և սոցիալական պաշտպանության ծառայություններից օգտվելու ավելի մեծ հնարավորություններ և մասնակցում են իրենց համայնքների կյանքին:**

#### Կրթությունը

2008 թվականից ի վեր՝ պետությունը մեծապես աջակցում է նախադպրոցական կրթության զարգացմանը՝ բացելով նոր մանկապարտեզներ և մասամբ հոգալով մեկ տարի տևողությամբ նախադպրոցական հաստատությունների պահպանման ծախսերը: Զգալիորեն տարբեր է քաղաքային և գյուղական համայնքներում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների՝ նախադպրոցական ծրագրերում ներգրավվածության մակարդակը: Համայնքները հաճախ ի վիճակի չեն կամ չեն ցանկանում ֆինանսավորել և պահպանել նախադպրոցական հաստատությունները:

Հաշմանդամություն ունեցող երեխաները պատկանում են ամենամեկուսացած խմբերին, որոնք բազմաթիվ զրկանքներ են կրում. նրանց 71%-ը չի հաճախում նախադպրոցական հաստատություն, 18%-ը չի հաճախում դպրոց, 12%-ը հաճախում է հատուկ դպրոցներ, 13%-ն ապրում է հաստատություններում (հատուկ դպրոցներում և մանկատներում),

34%-ը համայնքային ոչ մի միջոցառման չի մասնակցում և 73%-ը չի օգտվում վերականգնողական ծառայություններից: Որպեսզի երեխաները մեծանան ընտանեկան միջավայրում, 2007 թվականից ի վեր Կառավարության կողմից նշված հաստատություններում խնամք ստացող երեխաների թիվը կրճատվել է 4,000-ով: Այդուհանդերձ, ևս 4,000 երեխա դեռևս ապրում է 40 տարբեր հաստատություններում:

Կենսական հմտությունների և առողջ ապրելակերպի դասավանդումը կազմում են այնպիսի որակյալ կրթության անբաժանելի մասը, որը կարող է բավարարել երեխաների հիմնական կրթական պահանջմունքները և նրանց տալիս է կյանքում առողջ ընտրություն կատարելու, մարդու իրավունքները հարգելու և որևէ հիմքով խտրականության դրսևորումներից խուսափելու համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և խթան: Թեպետ կենսական հմտությունների դասավանդումը պարտադիր է միջնակարգ դպրոցում (8-11-րդ դասարաններ), դրա մատուցման որակը զիջում է՝ պայմանավորված ուսուցիչների համար նախատեսված պարբերական նախապատրաստական դասընթացների և նրանց աշխատանքի կանոնավոր մոնիտորինգի ու գնահատման բացակայությամբ:

Վերջին հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ 24-30 տարեկան երիտասարդներից առնվազն ամեն 4-րդը ձգտում է շարունակել իր հետագա կրթությունը<sup>55</sup>: Այնուամենայնիվ, եթե կրթության որակը չփոխվի, Հայաստանի երիտասարդները կշարունակեն թերահավատ վերաբերմունք ցուցաբերել իրենց կրթական հեռանկարների նկատմամբ:

ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի ջանքերը նպատակաուղղված կլինեն ներառական կրթություն տրամադրող նախադպրոցական ուսումնական հաստատությունների թվի ավելացմանը, այդ թվում՝ հեռավոր վայրերում բնակվող համայնքների համար հարմարեցվող մոդելների մշակմանը և նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական կրթության հետ կապված խնդիրների հաղթահարման

քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրմանը: ՄԱԿ-ի օգնությամբ՝ ՀՀ կառավարությունը կկարողանա իրականացնել միջոցառումներ, որոնց արդյունքում հնարավոր կլինի խուսափել ծնողական խնամքից անհարկի գրկվելու դեպքերից և նպաստել այն երեխաների համախմբմանը, ովքեր, լինելով պետական խնամքի տակ, ապրում են իրենց կենսաբանական ընտանիքներում կամ գտնվում են այլընտրանքային խնամքի ներքո, ինչպես օրինակ՝ հանձնվել են որդեգրման: Առողջ ապրելակերպի խթանումը պահանջում է առավել արդյունավետորեն համակարգված համագործակցություն Կառավարության և քաղաքացիական հասարակության միջև:

### Սոցիալական պաշտպանությունը

Հայաստանն ազգային և ենթաազգային համակարգերում բարեփոխումներ իրականացնելիս շարունակական առաջընթաց է արձանագրել: Այն միտված է եղել սոցիալական մեկուսացումը կանխելուն և խոցելի երեխաների շահերը խթանելուն: Կառավարությունը մշակել և իրականացրել է բազմապիսի սոցիալական պաշտպանության համակարգ, որի շրջանակներում հնարավոր է դարձել բավականին արդյունավետ լուծումներ գտնել լուրջ սպառնալիք դարձած ծայրահեղ աղքատությունը հաղթահարելու համար: Մասնավորապես, «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում» աղքատության մակարդակի կրճատումը համարվել է գերակա ուղղություն:

Երկիրը շարունակում է առնչվել երեխաների՝ սոցիալապես պաշտպանված լինելու իրավունքների իրացման և ամենախոցելի ու ամենամեկուսացած խմբերի խնդիրները լուծելու մարտահրավերներին: 2013 թվականի «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության» (SSԿԱՀ) տվյալների համաձայն՝ աղքատության մակարդակը կազմել է 32%, մինչդեռ մանկական աղքատության մակարդակը՝ 37%, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր երրորդ երեխան աղքատ է և յուրաքանչյուր երեսուներորդ երեխան՝ ծայրահեղ աղքատ<sup>56</sup>: Գոյություն չունեն համապարփակ վիճակագրական տվյալներ Հայաստանում երեխաների նկատմամբ գործադրվող բռնության

<sup>55</sup> «Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» զեկույց, 2012թ.: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր [http://www.am.undp.org/content/dam/armenia/docs/National%20youth%20aspirations%20survey%20report\\_ENG\\_edited%20final.pdf](http://www.am.undp.org/content/dam/armenia/docs/National%20youth%20aspirations%20survey%20report_ENG_edited%20final.pdf):

<sup>56</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Ազգային վիճակագրական ծառայություն, 2014թ. (SSԿԱՀ 2013թ.):

վերաբերյալ, թեև այդպիսի բռնության գործադրման հետ կապված, կարծես թե, առկա է մտահոգություն, հատկապես՝ հաստատություններում և ամենադժար ընտանիքներում ապրող երեխաների պարագայում:

Հայաստանում երեխաների և նրանց ընտանիքների առջև ծառայած բազմաթիվ և բարդ խնդիրներն առավել արդյունավետորեն հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է որդեգրել ընդգրկուն մոտեցում և ներդրումներ կատարել կայուն համակարգերի ստեղծման ուղղությամբ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Կառավարությունը, ընտանիքների և երեխաների խոցելիությունը նվազեցնելու նպատակով, 2010 թվականից ի վեր սկսել է բարեփոխումներ իրականացնել Ինտեգրացված սոցիալական ծառայությունների համակարգում՝ ներդնելով մեկ պատուհան մոտեցումը, միասնականացնելով սոցիալական աջակցության տեղեկատվական բազաները, կիրառելով բարեփոխիչ սոցիալական աշխատանքի, տեղական սոցիալական պլանավորման գաղափարները, ամրապնդելով ծառայությունների միջև համագործակցությունը: Անհրաժեշտ է ստեղծել հոգեբանական և այլ տեսակի աջակցության ծառայություններ՝ ընտանիքում դաժան վերաբերմունքի և բռնության ենթարկվող երեխաների համար:

Կիրառվելիք հիմնական ռազմավարությունները և ՄԱԿ-ի ծրագրերի շրջանակներում ակնկալվող միջանկյալ արդյունքներն են՝

1. վաղ տարիքի երեխաների ուսուցման առավել հասանելիություն հիմնական խոցելի խմբերի շրջանում, մասնավորապես՝ մշակութային և ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ շրկային և սթրեսային իրավիճակներում:
2. միջոցառումներ այնպիսի մեխանիզմներ և ռազմավարություններ, որոնք հնարավորություն կտան հայտնաբերել և աջակցել դպրոց չհաճախող և ռիսկային խմբում ընդգրկված երեխաներին:
3. ներառական կրթության առավել ամրապնդված համակարգ, որը բավարարում է ԲՈԼՈՐ երեխաների պահանջմունքները:
4. առողջապահական, կրթական և սոցիալական ապահովության առավել ամրապնդված համակարգ, որը կան-

խարգելում կամ մեղմում է մանկական հաշմանդամությունը՝ դրա վաղ հայտնաբերման, կանխարգելման, վերականգնողական օգնության և սոցիալական աջակցության տրամադրման միջոցով:

5. բարելավված սոցիալական նորմեր, որոնք առավել նպաստում են հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառմանը:
6. երեխաների պաշտպանության ծառայություններ, որոնք արդյունավետ կերպով կանխում են ընտանիքի անդամների առանձին բնակությունը և արձագանքում են երեխաների նկատմամբ բռնության ու դաժան վերաբերմունքի դրսևորման դեպքերին:
7. սոցիալական պաշտպանության ինտեգրված համակարգ, որը հնարավորություն է տալիս հայտնաբերել եկամտի ցածր մակարդակով պայմանավորված աղքատությունը և խոցելի խմբերին պատկանող երեխաների և նրանց ընտանիքների կրած բազմաթիվ զրկանքները և արձագանքել դրանց:
8. աշխատանքի վայրում իրականացվող վերապատրաստման ուսումնական ծրագիր՝ «Կենսական հմտություններ» դասընթացը դասավանդող ուսուցիչների վերապատրաստման համար և համապատասխան ուսումնական ռեսուրսներ վերապատրաստում անցնող ուսուցիչների և վերապատրաստողների համար: Ուսումնական ծրագիրն աստիճանաբար կներառվի ուսուցիչների վերապատրաստում իրականացնող բոլոր հաստատություններում, ինչպես նաև կկիրառվի աշխատավայրում գիտելիքների և հմտությունների թարմացման և որակի հավաստման համար անցկացվող դասընթացների ընթացքում:
9. «Դպրոցական սնունդ» ազգային ծրագրի ամրապնդում՝ որպես կարևորագույն հանրային ծառայություն, որն ապահովում է կրթության ընդհանուր որակի և մատչելիության հասանելիությունը: Այն կնպաստի երեխաների կարևորագույն՝ սննդի իրավունքի իրականացմանը և նրանց նորմալ ֆի-



գիակական աճին, ինչպես նաև նրանց հնարավորություն կընձեռի լիարժեք կերպով իրացնել իրենց կրթական ներուժը:

**Արդյունք 6**  
**Մինչև 2020 թվականը որակյալ առողջապահական ծառայությունները հասանելի են դարձել բոլորի, այդ թվում՝ առանձնապես խոցելի խմբերի համար:**

Որակյալ և մատչելի առողջապահական ծառայությունների հասանելիությունը զարգացման ազգային նպատակների իրականացման կարևորագույն բաղադրիչներից է: Առողջապահության ոլորտում ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի առաջնահերթություններն են՝

- ▶ վերարտադրողական առողջություն՝ ներառյալ մոր առողջությունը,
- ▶ երեխաների և դեռահասների առողջությունը,
- ▶ ՄԻԱՎ-ի վարակի՝ մորից երեխային փոխանցման դեպքերի վերացումը, և
- ▶ ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը:

**Վերարտադրողական առողջություն՝ ներառյալ մոր առողջություն**

Վերարտադրողական և մոր առողջությունը այն 5 առաջնահերթություններից է, որոնք ընդգծվել են Հայաստանի 2013-2018 թվականների նախագահական ընտրությունների նախընտրական ծրագրում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014-2017 թվականների ծրագրում: 2005-ից մինչև 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում **մայրական մահացության ցուցանիշը** (ՄՄՑ)<sup>57</sup> 100 000 ծնունդի հաշվով 37-ից նվազել է՝ մինչև 18.5 մահացության դեպք<sup>57</sup>: Այս դրական տե-

ղաշարժը պայմանավորված է մոր և վերարտադրողական առողջությանն ուղղված պետական ծախսերի աճով և ձկուն գինեկորգիական ու շտապ մանկաբարձական բուժօգնության (ՇՄԲ) թիմերի աշխատանքով: Թեպետ Հայաստանի՝ ներկայումս գրանցված մայրական մահացության ցուցանիշը շատ ԱՊՀ երկրների ցուցանիշներից առավել դրական է, այնուամենայնիվ, այն դեռևս ետ է մնում ԵՄ-ի միջին ցուցանիշից, որը կազմում է 5՝ մահացություն 100 000 ծնունդի հաշվով: Կառավարությունը նախատեսում էր մինչև 2015 թվականը մայրական մահացության ցուցանիշը հասցնել 10.3-ի՝ 100 000 ծնունդի հաշվով, որը մոտ է ՀԶՆ-ներով սահմանված համապատասխան թիրախին:

Մասնագիտացված առողջապահական ծառայություններ տրամադրող բուժհաստատություններում ծննդաբերող կանանց թիվը կազմում է մոտավորապես 99%-ը: Հայաստանում **ծնելիության գումարային գործակիցը** 2000 թվականից ի վեր անփոփոխ է մնացել և կազմում է 1.7 երեխա՝ յուրաքանչյուր կնոջ հաշվարկով: Ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների կիրառումը 2000-2010 թվականներին 20%-ից աճել է՝ հասնելով 27%-ի, բայց դա դեռևս համարվում է ցածր ցուցանիշ: **Հղիության արհեստական ընդհատումների գումարային գործակիցը** (ՀԱԸԳԳ) 2000 թվականից ի վեր կտրուկ նվազել է և կազմում է 0.8 վիժում՝ յուրաքանչյուր կնոջ հաշվարկով<sup>58</sup>: Ընտանիքի պլանավորման որակյալ ծառայությունների պակասի արդյունքում խիստ կախվածություն է առաջանում հղիության արհեստական ընդհատումներ կատարելու հնարավորությունից, որն էլ, հետևաբար, հանգեցնում է երկրորդային անպտղության բարձր մակարդակի: Մյուս պատճառներից կարելի է նշել սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և, հղիության արհեստական ընդհատումների բարձր մակարդակները, ինչպես նաև վերարտադրողական առողջության մասին գիտելիքի և իրազեկվածության ցածր մակարդակը երիտասար-

<sup>57</sup> Մայրական մահացության գործակիցը սահմանվում է՝ որպես տրված ժամանակահատվածում մայրերի մահվան դեպքերի թիվը՝ նույն ժամանակահատվածում վերարտադրողական տարիքում գտնվող կանանց կամ ռիսկի ենթարկվելու տարիքում գտնվող կանանց հարաբերությամբ՝ յուրաքանչյուր 100,000 կնոջ հաշվարկով: Մայրական մահացության ցուցանիշը տրված ժամանակահատվածում մայրերի շրջանում մահվան դեպքերի թիվն է՝ նույն ժամանակահատվածում յուրաքանչյուր 100 000 կենդանի ծնունդի հաշվարկով: Մայրական մահացության ՀԶՆ-ների ցուցանիշները չափվում են մայրական մահացության ցուցանիշով: Մայրական մահացության միտումները՝ 1990-2013թթ.: Գնահատումը՝ քստ ԱՀԿ-ի, ՄԱՄՀ-ի, ՄԱԲՀ-ի, Համաշխարհային բանկի և Միավորված ազգերի կազմակերպության բնակչության բաժանմունքի: <http://www.who.int/reproductivehealth/publications/monitoring/maternal-mortality-2013/en/>:

<sup>58</sup> ՀՎՀՀ-2005թ., 2010թ.:

դության շրջանում: Վերջին գնահատումները ցույց են տալիս, որ ամեն տարի արգանդի վզիկի քաղցկեղ է հայտնաբերվում 272 կանանց մոտ, որոնցից 115-ը մահանում են այդ հիվանդությունից: Արգանդի վզիկի քաղցկեղը Հայաստանում քաղցկեղի 5-րդ ամենատարածված տեսակն է կանանց շրջանում, և 2-րդ ամենատարածվածը՝ 15-44 տարիքային խմբի կանանց շրջանում<sup>59</sup>: Անհրաժեշտ է մեծացնել ընտանիքի պլանավորման մատչելիությունը և ավելացնել դրա պահանջարկը, ինչը կհանգեցնի մոր առողջության և անպտղության իրավիճակի բարելավման: Զանքեր կգործադրվեն՝ գոյություն ունեցող համակարգում կենսական հմտությունների դասավանդումը (ԿՀԴ) զարգացնելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա ապահովելու, որ կրթության համակարգում հաշվի առնվեն կարիքներն ու գիտելիքը, վերաբերմունքներն ու հմտությունները:

### **Երեխաների և դեռահասների առողջություն**

Հայաստանը բարելավել է մանկական և մինչև հինգ տարեկան երեխաների մահացության ցուցանիշները՝ գրեթե կիսով չափ պակասեցնելով մահվան դեպքերի քանակը սկսած 1990 թվականից<sup>60</sup>: Այնուամենայնիվ, Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ վերջին 5 տարիների ընթացքում մանկական մահացության կրճատման ցուցանիշը մնացել է նույնը՝ գրանցելով չնչին առաջընթաց. 2013 թվականին այն կազմել է մահվան 9.7 դեպք՝ յուրաքանչյուր 1000 կենդանի ծննդի հաշվարկով<sup>61</sup>: «Երեխաների մահացության հաշվարկներ» միջգերատեսչական խմբի տվյալների համաձայն՝ մանկական մահացության ցուցանիշն ավելի բարձր է և 2013 թվականին կազմել է 14 մահվան դեպք՝ 1,000 կենդանի ծննդի հաշվարկով: Փաստերը վկայում են, այն մասին, որ այն երեխաների պարագայում, ովքեր աղքատ ընտանիքներից են, ովքեր ապրում են գյուղական տարածքներում կամ, ում մայրերը կրթության ցածր մակար-

դակ ունեն, մահվան ռիսկը բավականին մեծ է մինչև նրանց 1 տարեկան դառնալը<sup>62</sup>: Թե-րաժողովները և թերսնման այլ ձևերը հանրային առողջապահության կարևորագույն խնդիրներից են և երեխաների մահացության, հիվանդությունների և հաշմանդամության պատճառներից են: ԺԱՀ-ի 2010 թվականի տվյալներով<sup>63</sup> թերաժողովյալ ցուցանիշը մինչև 5 տարեկան երեխաների շրջանում հասել է 19%-ի՝ 26% առավելագույն ցուցանիշ գրանցելով 36-47 ամսական երեխաների շրջանում, ինչը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանած չափորոշիչի համաձայն, համարվում է հանրային առողջապահության ոլորտի նորահայտ խնդիրը: 2010 թվականի «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության» (ՀԺԱՀ) մեջ ընդգծվում է սխալ սնման կրկնակի բեռը՝ նշելով, որ Հայաստանում 0-5 տարեկան երեխաների 15 %-ը գերքաշ են: Վերը նշված սնման ցուցանիշները գրեթե հասել են այնպիսի շեմի, որ դրանք կարող են դիտարկվել որպես հանրային առողջապահության ոլորտի նորահայտ խնդիրներից մեկը: Բացառապես կրճքով սնուցման ցուցանիշը միայն չնչին աճ է գրանցել՝ 33%-ից դառնալով 35%: Նաև առկա է սակավարյունության (անեմիա) էական տարածվածություն նախադպրոցական տարիքի երեխաների (37%) և վերարտադրողական տարիքի կանանց (25%) շրջանում<sup>64</sup>:

Դպրոցահասակ երեխաների շուրջ 40%-ն ունի առողջական բազմաթիվ գանգատներ, իսկ 15 տարեկան աղջիկների և գյուղական բնակավայրերի երեխաների ավելի, քան 25%-ի մոտ նկատվում են լուրջ ընկճվածության (դեպրեսիայի) ախտանշաններ: Առողջապահության համակարգի հետ դեռահասների ունեցած շփումները սահմանափակ են. 11 տարեկան տղաների շուրջ 55%-ը երբեք չի այցելել ընտանեկան բժշկին կամ մանկաբույժին, իսկ գյուղական բնակավայրերում այս ցուցանիշն անգամ ավելի

<sup>59</sup> ICO տեղեկատվական թերթիկ մարդու պապիրումս վիրուսի և քաղցկեղի վերաբերյալ, 2014թ. հունվար:

<sup>60</sup> «Երեխաների վիճակն աշխարհում» զեկույցում հաշվարկված ցուցանիշը կազմում է 15 մահ՝ յուրաքանչյուր 1,000 կենդանի ծննդի հաշվարկով 2012թ. համար:

<sup>61</sup> Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Հայաստան, Երևան, Ազգային վիճակագրական ծառայություն, 2013թ. և [http://childmortality.org/index.php?r=site/graph#ID=ARM\\_Armenia](http://childmortality.org/index.php?r=site/graph#ID=ARM_Armenia), մինչև 2013-ի «Երեխաների վիճակն աշխարհում» 2014թ. զեկույցում հաշվարկվում է առավել բարձր ցուցանիշ, որը կազմում է 15 մահ՝ յուրաքանչյուր 1,000 կենդանի ծննդի հաշվարկով:

<sup>62</sup> ՀՀ առողջապահության նախարարություն և Ֆոնկլինայության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգում (ICF International), Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, Երևան, Ազգային վիճակագրական ծառայություն, 2010թ., 2012թ.:

<sup>63</sup> Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2010թ.: <http://dhsprogram.com/pubs/pdf/FR252/FR252.pdf>:

<sup>64</sup> Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2005 (2010-ին անցկացված նմանատիպ հետազոտությունում ներառված չէ սակավարյունության (անեմիա) որոշումը կենսաչափական եղանակով):

բարձր է<sup>65</sup>: Վերջին մի քանի տարիների ընթացքում առողջապահության, կրթության և երեխայի պաշտպանության ոլորտներն ավելի ու ավելի շատ ուշադրություն են դարձնում դպրոցահասակ երեխաների առողջության հետ կապված խնդիրներին: Դպրոցահասակ երեխաների կարիքները բավարարելուն նպատակաուղղված՝ ինտեգրված ծառայությունների և առողջապահության խթանման, ինչպես նաև առողջապահության ոլորտում նորարարության առավել մեծ շեշտադրման արդյունքում, վերջ ի վերջո, կհաղթարարվեն դեռահասների հիմնական իրավունքների իրականացմանն առնչվող խնդիրները: Մասնավորապես, կվերանայվի կանոնավոր սկրինինգների անցկացման հաճախությունը, շրջանակը և մեխանիզմները, և հիմնական առողջապահական սկրինինգների անցկացումը կտեղափոխվի դպրոցներ՝ ներառելով վաղ հայտնաբերումը, ուղղորդումը, սկրինինգները և տեղեկատվության տրամադրումը ու հիմնական հարցերի շուրջ խորհրդատվությունը: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման ոլորտում բարեփոխումների լույսի ներքո՝ դպրոցներին կկցվեն հոգեբաններ և առողջապահության ոլորտի համապատասխան մասնագետներ՝ դպրոցահասակ երեխաներին և դեռահասներին առնչվող հարցերի շուրջ աշխատելու նպատակով:

Անհրաժեշտ է ցուցաբերել երեխայակենտրոն մոտեցում, հատկապես՝ 0-6 տարեկան խոցելի խմբին պատկանող երեխաների նկատմամբ՝ առողջապահական համակարգում անհավասարությունների վերացման և դրանով իսկ առողջապահական ծառայությունների հասանելիության ապահովման նպատակով: Այս մոտեցումը թույլ կտա անդրադառնալ ընտանեկան այնպիսի պայմանների խնդրին, որոնք հանգեցնում են թերսնման, զարգացման հապաղման, հաշմանդամության, բռնության, վատ վերաբերմունքի և արհամարհանքի: Ամենախոցելի ընտանիքներում մահացության ցուցանիշը կրճատելու նպատակով՝ նախապատվություն կտրվի մանկաբուժական ծառայության որակը տարածաշրջանային մակարդակով բարձրացնելու նպատակով և ուղեգրերի տրամադրման մեխանիզմների բարելավմա-

նը: Կգործադրվեն ջանքեր՝ ուղղված ընտանիքներին համապատասխան աջակցության տրամադրմանը, այդ թվում՝ բարելավված քաղաքականությունների և մեխանիզմների ապահովումը, որոնք կխթանեն երեխաների որակյալ խնամքն ու առողջ մնուցումը և նրանց մոտ միկրոէլեմենտների անբավարության կանխումը, ինչպես նաև արդյունավետ խորհրդատվական ծառայությունների տրամադրումը: ՄԱԿ-ը կաջակցի առողջապահական համակարգ ավելի մեծ ծավալով ֆինանսական միջոցներ ներգրավելուն ուղղված քարոզչության իրականացմանը և կընձեռի հնարավորություն՝ զարգացնելու միջոցառումները համագործակցությունը, առավել արդյունավետ դարձնելու տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացը, բարելավելու նախապատրաստական և աշխատավայրում իրականացվող դասընթացները՝ ծառայություն տրամադրողների համար, և ապահովելու բարձր որակ: Կընդլայնվեն աջակցության տրամադրման շրջանակները՝ նաև նպատակ ունենալով հզորացնել բուժօգնություն տրամադրողների կարողությունները վաղ տարիքում հայտնաբերման և միջամտության միջոցով զարգացման հապաղումները և հաշմանդամությունը կանխելու և ժամանակակից դաստիարակչական հմտությունների հարցում ծնողներին կողմնորոշելու նպատակով:

Դեռահասների առողջության և զարգացման հետ կապված խնդիրները լուծելու համար պահանջվում է հավասարությանը միտված և առողջապահության համակարգի վրա հիմնված ինտեգրված մոտեցում, որի օգնությամբ հնարավոր կլինի ապահովել, որ դեռահասների առողջապահական կարիքները բավարարվեն ժամանակին և համակողմանիորեն: Անհրաժեշտ է զարգացնել առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության ոլորտների համար մշակված բոլոր քաղաքականությունները՝ դրանք երեխաների համար առավել բարենպաստ դարձնելու նպատակով:

**ՄԻԱՎ**

1988 թվականից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը երկրում գրանցվել է ՄԻԱՎ-ի վարակի 1,953 դեպք՝ ՀՀ քաղաքացիների շրջանում, այդ թվում՝ վարակի 334 նոր դեպք՝ 2014 թվականի ընթացքում: Երկրում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց թիվը կազ-

<sup>65</sup> Արաբկիր թժշկական կենտրոն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ և ԱՀԿ, «Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագիծ», 2010թ.:

մում է շուրջ 4,000: Տղամարդիկ կազմում են 69%-ը, իսկ կանայք՝ 31%: ՄԻԱՎ-ի վարակի 36 դեպք գրանցվել է երեխաների շրջանում (2%): Հետազոտության ժամանակ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շուրջ 54%-ը գտնվել է 25-39 տարիքային միջակայքում: Վերջին տաս տարիների ընթացքում փոխվել է ՄԻԱՎ-ի վարակի փոխանցման հիմնական ուղին՝ ներերակային ճանապարհով թմրամիջոցների օգտագործումը: Այժմ այդ վարակն հիմնականում փոխանցվում է հետերոսեքսուալ ճանապարհով: Հաշվարկվել է, որ վարակի գրանցման դեպքերի մոտ 4-ից 3-ը կապված է միգրացիայի հետ: Պաշտոնական տվյալների համաձայն՝ հղի կանանց մինչև 95%-ը ՄԻԱՎ-ի ստուգման հետազոտություն են անցել, սակայն վերջին գնահատումները ցույց են տալիս, որ գնահատման գործընթացում ներգրավված կանանց կեսից ավելին տեղյակ չէին, որ իրենք ենթարկվել են նման հետազոտության: Ընդհանուր առմամբ՝ ՄԻԱՎ-ի վարակի և դրա՝ մորից երեխային փոխանցման կանխարգելման խորհրդատվական ծառայությունները թույլ են, և շատ ընտանիքներ բավարար չափով տեղեկացված չեն այդ հետազոտությունն անցնելու առավելությունների մասին: Առկա է նաև ծառայությունների ինտեգրման, ինչպես նաև ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակների (ՍՃՓՎ) կանխարգելման և բուժման ծառայությունները կանոնավոր կերպով մատուցելու կարողությունների պակաս, մասնավորապես՝ միգրանտների, նրանց սեռական գույքակերների և երիտասարդների համար: 2014 թվականի «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտության» արդյունքների համաձայն՝ ՄԻԱՎ վարակի կանխարգելման մասին իմացության մակարդակը երիտասարդության շրջանում կազմում է 22.4%: Յուրաքանչյուր 3 երիտասարդից գրեթե 1-ը դրսևորել է բարձր ռիսկային սեռական վարքագիծ և նախորդ 12 ամիսների ընթացքում հարցմանը մասնակցած երիտասարդների միայն 4.2%-ն են անցել ՄԻԱՎ վարակի ստուգման հետազոտություն:

ՄԻԱՎ վարակի մասին ուսուցումը երիտասարդության համար նախատեսված՝ «Առողջ ապրելակերպ» դասընթացի բաղադրիչներից է և պետք է իրականացվի և տարածվի համալսարաններում և քոլեջներում: ՄԻԱՎ-ի վարակի հետազոտման հասանելիություն

նր պետք է աճի նաև բնակչության այլ, այդ թվում՝ բարձր ռիսկային խմբերի համար: ՄԻԱՎ վարակի խարանով ապրող մարդկանց համաթիվն օգտագործելու միջոցով խարանի և խտրականության աստիճանը գնահատելուց հետո՝ «համաճարակի մասին տեղյակ լինելու» համար՝ խարանի և խտրականության տարածվածության, ինչպես նաև ՄԻԱՎ վարակին արձագանքի վրա դրանց ազդեցության առումով, նաև կարևոր է հանրային իրազեկման միջոցառումների իրականացումը: Սկսած 2005 թվականից՝ միջամտությունների կիրառման շրջանակներն ընդլայնվել են և Կառավարությունը բարելավել է ՄԻԱՎ-ի վարակի կանխարգելման և ՁԻԱՀ-ին հակազդման արձագանքման իր ինստիտուցիոնալ կարողությունները:

ՁԻԱՀ-ի ազգային ծրագրի նպատակներն են՝ ՄԻԱՎ-ի վարակի փոխանցման դեպքերի կրճատումը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պայմանավորված հիվանդացության և մահացության դեպքերի կրճատումը: ՄԻԱՎ-ի վարակի կանխումը, ՁԻԱՀ-ի բուժումը, խնամքը և աջակցությունը տրամադրվում է՝ համաձայն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման և խնամքի վերաբերյալ ազգային արձանագրությունների: Սակայն ազգային ծրագրի իրականացման համար ֆինանսավորումը կազմում է ավելի քիչ, քան պահանջվող բյուջեի 20%-ը: Կտրամադրվի աջակցություն՝ ուղղված այն համակարգերի ամրապնդմանը, որոնց միջոցով հնարավոր է կանխել և վերահսկել ՄԻԱՎ-ի և դրանով պայմանավորված վարակների տարածումը կանանց և երեխաների շրջանում, ինչի արդյունքում հնարավոր կլինի երեխաների շրջանում ապահովել ՄԻԱՎ-ի վարակի դեպքերի զրոյական ցուցանիշ և պահպանել մայրերի կյանքը: Համագործակցության շրջանակներում կընդլայնվի նաև դինամիկ բժշկական թիմի մոդելը՝ միգրանտներին և նրանց ընտանիքի անդամներին խորհրդատվություն տրամադրելու և ՄԻԱՎ-ի ու ՍՃՓՎ-ների կանխարգելման ծառայություններ մատուցելու, ինչպես նաև վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ծառայություններ տրամադրելու նպատակով:

### **Ոչ վարակիչ հիվանդություններ**

Հայաստանում գրանցված մահացության դեպքերի ավելի քան 85%-ը վերագրվում են ոչ վարակիչ հիվանդություններին: Վաղ մա-

հացության հիմնական պատճառներն են արյան շրջանառության համակարգի հիվանդությունները, քաղցկեղը, արտաքին վնասվածքները և թունավորումները: 2007-2012 թվականներին արյան շրջանառության համակարգի հիվանդություններից և քաղցկեղից մահացության ցուցանիշներն աճել են՝ համապատասխանաբար 13%-ով և 15%-ով: Սա կապված է բնակչության ծերացման հետ, ինչը պայմանավորված է բնակչության 11%-ի՝ 65 և ավելի բարձր տարիքով: 2014 թվականին Հայաստանի կառավարությունը հաստատեց «Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագիրը» և առողջապահության նախարարությունը մշակեց նմանատիպ ծրագիր և գործողությունների պլան՝ ամենատարածված ոչ վարակիչ հիվանդությունները վերահսկելու նպատակով: Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագրի թիրախներից մեկն է մինչև 2020 թվականը սրտանոթային, ուռուցքային, թոքային հիվանդություններով և շաքարային դիաբետով պայմանավորված մահացության դեպքերը նվազեցնել 5%-ով\*:

Ոչ վարակիչ հիվանդությունների կանխումը և դրանց նկատմամբ հսկողությունը բարելավելու համար տարբեր ոլորտներում պետք է իրականացվեն համակարգված միջոցառումներ: Գերակա խնդիր է հիմնական բնակչության իրազեկումը, հատկապես նրանց, ովքեր անառողջ կենսակերպի հետևանքով հայտնվել են ռիսկային իրավիճակում: Կտրուկ բարձրացել է ծխախոտի օգտագործման մակարդակը երիտասարդության շրջանում:

Ալկոհոլի չարաշահումը դեռևս հիմնախնդիր չէ, սակայն գրանցվել է ալկոհոլի օգտագործման ցուցանիշի աճ ամենաերիտասարդ տարիքային խմբին (16-24) պատկանող անձանց շրջանում<sup>66</sup>: Առողջ ապրելակերպը խթանելու համար անհրաժեշտ է առավել սերտ համագործակցության ամրապնդում Կառավարության և քաղաքացիական հասարակության միջև: ՀՀ կառավարությունը և ՄԱԿ-ը կաջակցեն առողջության պահպանման և առողջ ապրելակերպի դասավանդմանը դպրոցներում, ինչպես նաև կխթանեն մենդամթերքի անվտանգությունը՝ միջազգային գործիքների, մասնավորապես՝ «Կենսաբազմազանության մասին» կոն-

վենցիայի «Կենսաանվտանգության մասին» կարթագենյան արձանագրության միջոցով<sup>67</sup>: Կենսական հմտությունների և առողջության պահպանման վերաբերյալ դասավանդման որակը բարելավելու նպատակով՝ կմշակվեն վերապատրաստման ուսումնական ծրագիր և համապատասխան ռեսուրսներ, որոնք հետագայում կներառվեն ուսուցիչների վերապատրաստում իրականացնող հաստատությունների ծրագրերում:

Կիրառվելիք հիմնական ռազմավարությունները և ՄԱԿ-ի ծրագրերի շրջանակներում ակնկալվող միջանկյալ արդյունքներն են՝

1. առավել ամրապնդված կարողություններ պետական հաստատությունների համար՝ փաստերի վրա հիմնված քաղաքականություն մշակելու և սեռական ու վերարտադրողական առողջապահական որակյալ, ինտեգրված ծառայություններ մատուցելու նպատակով.
2. առավել ամրապնդված ազգային կարողություններ՝ անբարենպաստ իրավիճակում հայտնված և մեկուսացված անձանց մոր և մանկան առողջության որակյալ ծառայությունների մատուցման նպատակով.
3. ընտանիքներին աջակցելուն և իրազեկելուն նպատակաուղղված՝ ավելի բարելավված և արդարության սկզբունքի պահպանմամբ տրամադրվող ծառայություններ՝ հանուն մանկահասակ երեխաների առողջության և բարեկեցության.
4. առավել կատարելագործված համակարգեր՝ նպատակաուղղված միգրանտների, կանանց և երեխաների շրջանում ՄԻԱՎ-ի և դրանով պայմանավորված վարակները կանխարգելելուն և վերահսկելուն.
5. պետական առավել կատարելագործված քաղաքականություն և առողջապահական պլանավորման գործընթացներ՝ ուղղված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու վերահսկմանը.

<sup>66</sup> «Հայաստանի բնակչության շրջանում թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի տարածվածության վերաբերյալ հարցման արդյունքների մասին» զեկոյց, 2005թ.:

<sup>67</sup> Դա միջազգային համաձայնագիր է, որի նպատակն է ապահովել ժամանակակից կենսատեխնոլոգիայից, որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ կենսաբանական բազմազանության վրա, ստացված կենդանի վերափոխված օրգանիզմների անվտանգ փոխանցման, մշակման և օգտագործման ոլորտում պաշտպանության համապատասխան մակարդակ՝ հաշվի առնելով նաև մարդկանց առողջությանը սպառնացող վտանգը:

6. աշխատանքի վայրում իրականացվող «Կենսական հմտություններ» դասընթացի ուսումնական ծրագիր և ուսումնական ռեսուրսներ, որոնք ներառված են ուսուցիչների վերապատրաստում իրականացնող բոլոր հաստատությունների ծրագրերում:

#### 4-րդ սյուն. Շրջակա միջավայրի կայունություն և դիմակայունության ձևավորում

##### Արդյունք 7.

**Մինչև 2020 թվականը ներդրվել և կիրառվում են կայուն զարգացման սկզբունքները, շրջակա միջավայրի կայունության, դիմակայունության ձևավորման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, ինչպես նաև կանաչ տնտեսության լավագույն գործելակերպերը:**

ՀՀ 2007 թվականի ազգային անվտանգության ռազմավարությամբ բնական պաշարների ոչ արդյունավետ կառավարումն ու ոչ ռացիոնալ օգտագործումը ճանաչվել են որպես հիմնական ներքին սպառնալիքներ: ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում կարևորվել են կայուն ու ներառական աճի ապահովման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ կայուն զարգացման սկզբունքներին համահունչ՝ ընդլայնված տնտեսական հնարավորությունների մատչելիությունը և էկոլոգիապես հիմնավորված տեխնոլոգիաների խթանումը և բնական պաշարների արդյունավետ կառավարումը: Աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ ՄԱԿ-ի Երրորդ համաշխարհային համաժողովի ընթացքում Կառավարությունն իր համաձայնությունն է տվել 2015-2030 թվականների համար Աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված՝ Սենդայի ծրագրի վերաբերյալ: Դրա նպատակն է զգալիորեն կրճատել աղետների ռիսկերը և կորուստները՝ կյանքերի, ապրուստի միջոցների և առողջության առումներով և

ապահովել, որ ԱՌՆ-ի սկզբունքները կիրառվեն՝ նպաստելով երկրում կայուն զարգացման ոլորտում ձեռքբերումների գրանցմանը: 2012 թվականին մարտին Կառավարության կողմից հաստատված՝ ԱՌՆ ազգային ռազմավարությունը (ԱՌՆԱՌ) մշակվել էր Հյուսիսային գործողությունների ծրագրի (ՀԳԾ) և դրա գերակա ուղղությունների հիման վրա: Սենդայի ծրագիրն արտացոլելու նպատակով նորացվելուց հետո այն կծառայի՝ որպես հիմնական ուղղորդող ռազմավարական փաստաթուղթ՝ զարգացման բոլոր ոլորտներում իրականացվող՝ ԱՌՆ-ին ուղղված նախաձեռնություններում: 2016-2020 թվականների՝ ԱՌՆԱՌ-ի իրականացման պլանի մշակումը և դրա իրագործումը, այդ թվում՝ կանոնավոր մոնիտորինգը և գնահատումը համարվում են ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի միջև համագործակցության գերակա ոլորտներից: Նաև շատ կարևոր է նշել, որ ԱՌՆԱՌ-ն արդեն իր ազդեցությունն ունեցել է ազգային օրենսդրության և քաղաքականությունների վրա: Օրինակ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ փոփոխված օրենքով ԱՌՆ-ն ընդգրկվել է պլանավորման ծրագրերում ու նմուշներում և ներկայումս գտնվում է

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունման փուլում:

Վերջին տասնամյակում կայուն զարգացում ապահովելու նպատակով երկրում ընդունվեցին մի շարք քաղաքականություններ, կանոնակարգեր և ծրագրեր՝ հատուկ ուշադրություն դարձնելով շրջակա միջավայրի բարելավված կառավարմանը: 2014 թվականին բնապահպանական ցուցանիշների համաթվում Հայաստանի վարկանիշը բարելավվել է 2 տեղով՝ դառնալով 48: Սա նշանակում է, որ 2009 թվականից ի վեր գրանցվել է աճ՝ 14 կետով: Ամենանշանակալից բարելավումները գրանցվել են օդի որակի, խմելու ջրի մատակարարման և մաքրման ոլորտներում (խմելու ջրի հասանելիության ապահովում): Միայն 2014 թվականին հաստատվել է 5 օրենք և երեսուն ենթաօրենսդրական ակտ՝ այդ թվում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների և բնապահպանական փորձագիտության վերաբերյալ: Էներգետիկ անվտանգության միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատվել է հուլիս ամսին՝ սահմանելով կոնկրետ

Ժամկետներ և պարտականությունների բաժանում՝ Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի խթանման համար: Հունվար ամսին փոփոխվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ ընդգրկելով Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը: Հաշվի առնելով գազի գնի շարունակական աճը՝ անտառների պաշտպանության և էներգաարդյունավետության (ԷԱ) հետ կապված հարցերը գերակա խնդիրներ են Կառավարության և հանրության համար: Հայաստանում բնակարանային ապահովման ոլորտի համար մշակվեց առաջին «Ազգային համատեքստին համապատասխան մեղմման գործողությունների ծրագիրը»: «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը փոփոխվել է՝ ներառելով դրույթներ, որոնք անդրադառնում են էներգատար ոլորտների համար իրականացվող էներգետիկական աուդիտին, ինչպես նաև պետական գնումների բնագավառում նվազագույն էներգետիկ արդյունավետության համար սահմանված պարտադիր նորմերին: Մշակվել են ՄԱԿ ԿՓՇԿ Երրորդ ազգային հաղորդագրությունը և Հայաստանի առաջին երկամյա նորացված զեկույցը, ինչի միջոցով ապահովվում է Հայաստանի հանձնառությունը՝ նորացնելու ջերմոցային գազերի իր ազգային կադաստրը, տրամադրելու տեղեկություններ ջերմոցային գազերի նվազեցման քաղաքականությունների և միջոցառումների իրականացման առաջընթացի վերաբերյալ և բացահայտելու համապատասխան կարիքները: Հայաստանում պահպանվող տարածքների ցանցն ավելացվել է ավելի քան 6,000 հեկտարով՝ համայնքի կողմից կառավարվող, նոր տեսակի «Գնի-շիկ» համայնքային պահպանվող տարածքի ներդրմամբ:

Միևնույն ժամանակ, ռեսուրսախնտենսիվ հատվածների և արդյունաբերության ճյուղերի արագ զարգացումը կարևոր ռազմավարություն էր, որի նպատակն էր մեղմել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը: Թեև որդեգրված մոտեցմամբ հնարավոր եղավ ապահովել կարճաժամկետ եկամուտներ, այնուամենայնիվ, այն նախատեսված չէր և չէր իրականացվում շրջակա միջավայրի ու սոցիալական փաստացի կորուստները հաղթահարելու նպատակով: Սահմանափակ են կանաչ տնտեսության ծրագրերի խթանման համար մշակված

քաղաքականություններն ու միջոցառումները, դեռևս սահմանափակ են էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգետիկային առնչվող գործողությունները:

Հայաստանի տնտեսությունը կարելի է բնութագրել էներգետիկ արդյունավետության և էներգասպառման բարձր ցուցանիշներով: Երկիրը մեծ կախվածություն ունի ածխաջրածիններից<sup>68</sup>, այդ թվում՝ տրանսպորտային փոխադրամիջոցների համար օգտագործվող վառելիքի բոլոր տեսակների, ինչպես նաև կոմունալ-կենցաղային և արդյունաբերական նպատակներով օգտագործվող բնական գազի ներմուծումից, ընդ որում՝ ներմուծված ածխաջրածիններից է արտադրվում երկրի էլեկտրաէներգիայի մեկ երրորդը: Բնական պաշարների օգտագործման հարցում դրսևորած ոչ կայուն գործելակերպը, այդ թվում՝ անտառահատումը, հողօգտագործման և գյուղատնտեսության ոլորտներում կիրառվող սխալ գործելակերպերը հանգեցնում են հողի էռոզիային և բնական միջավայրերի, կենսաբանական տեսակների անհետացմանը: Դեռևս չլուծված են մնում ջրի որակի, ջրամատակարարման, արդյունաբերական գործընթացների հետևանքով արտանետվող վտանգավոր քիմիական նյութերով աղտոտման հետ կապված լուրջ խնդիրները: Ամբողջ երկրում դեռևս կան մոտավորապես 8,000 տոննա ժամկետանց կայուն օրգանական աղտոտիչներ պարունակող թափոններ և աղտոտված հող: Բոլոր նշված գործոնները լուրջ վտանգ են ներկայացնում մարդու առողջության և շրջակա միջավայրի համար:

Բնական վտանգները նույնպես լուրջ մարտահրավեր են երկրի համար: «Աղետների ռիսկի նվազեցման միջազգային ռազմավարությամբ» Հայաստանն ընդգրկված է այն երկրների խմբում, որտեղ արձանագրվել են համեմատաբար բարձր տնտեսական կորուստներ և բնական վտանգների նկատմամբ տնտեսական վատ դիմակայունություն: Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ Հայաստանն աշխարհի այն 60 երկրների ցանկում է, որոնք գտնվում են աղետների ռիսկային գոտում և որին հատուկ են շուրջ 110 տեսակի տարբեր վտանգներ: Բնակչության 80 տոկոսից ավելին ենթակա է աղետների ռիսկի, և երեք երեխայից երկուսը դպ-

<sup>68</sup> ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (2014թ.):

րոց է հաճախում սեյսմիկ ռիսկի գոտում<sup>69</sup>, որտեղ դպրոցի շենքերը չեն համապատասխանում սեյսմակայուն շինարարության նորմերին:

Մաքուր շրջակա միջավայրը, բնական պաշարների պահպանումը, օպտիմալ օգտագործումն ու վերականգնումը, վտանգավոր թափոնների պատշաճ կերպով հեռացումը, աղետների ռիսկի կառավարումն ու դիմակայունության ձևավորումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումն ու ուսուցումը՝ բոլորը կայուն զարգացման կարևոր բաղադրիչներն են: ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի համագործակցության շրջանակներում հատուկ ուշադրություն կդարձվի շրջակա միջավայրի տեսանկյունից անվտանգ գործելակերպեր ներմուծելուն ուղղված միջոցառումներին մոտեցում որդեգրելուն և բնակչության՝ վտանգներին դիմակայելու կարողության բարձրացման վրա:

Կիրառվելիք հիմնական ռազմավարությունները և ՄԱԿ-ի ծրագրերի շրջանակներում ակնկալվող միջանկյալ արդյունքներն են՝

- ▶ շրջակա միջավայրի կայունության, աղետների ռիսկի կառավարման ու տնտեսության զարգացման միջև կապերի ամրապնդման նպատակով քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրում և քարոզչության իրականացում, ինչպես նաև վավերացված բազմակողմ բնապահպանական համաձայնագրերով (ԲԲՀ-եր) ստանձնած պարտավորությունների կատարման համար պետության կարողությունների ընդլայնում.
- ▶ կանաչ տնտեսության քաղաքականության ներդրման և իրականացման համար ազգային ծրագրի մշակմանը, տնտեսական նոր գործիքների ու պետություն-մասնավոր հատված համագործակցության նորարարական ծրագրերի ներդրմանն ուղղված աջակցության տրամադրում.
- ▶ կանոնավոր կերպով վիճակագրական տվյալներ ստանալու և տարածելու կա-

րողությունների ամրապնդում՝ ՄԱԿ-ի Բնապահպանատնտեսական հաշվառման համակարգի (ԲՏՀՀ) համաձայն.

- ▶ բնակարանաշինության և քաղաքաշինության կայուն զարգացման համար Ազգային միջոցառումների ծրագրի մշակման և իրականացման ազգային կարողությունների ամրապնդում՝ ՄԱԿ ԵՏՀ կողմից մշակված՝ երկրի հիմնական առանձնահատկությունների հիման վրա.
- ▶ ՓՄՁ-ների համար նորարարական, մաքուր էներգետիկ տեխնոլոգիաների խթանում և ձեռնարկատերերի ու փոքր բիզնեսների իրազեկվածության մակարդակի բարձրացում և դրանց խրախուսում: Երկրում մասնավոր հատվածին հնարավորություն կընձեռվի՝ աջակցելու կայուն զարգացմանն ուղղված բիզնես պլանների մշակմանը և ընդլայնելու երկրում մաքուր էներգետիկ տեխնոլոգիաների ոլորտում ներդրումները.
- ▶ «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ծրագրի շրջանակներում որդեգրված մոտեցումների կիրառման ընդլայնում՝ ի օգուտ ռեսուրսների բարելավված արտադրողականության (ներառյալ նվազեցված արտադրողական ծախսերի և նյութերի, էներգիայի ու ջրի օգտագործման), նվազեցված բնապահպանական ազդեցության և բարելավված հանրային առողջության ու անվտանգության.
- ▶ ՀՀ կառավարության կարողությունների ամրապնդում՝ «Ձուր և առողջություն» Արձանագրությամբ սահմանված դրույթներին համապատասխանությունն ապահովելու, Արձանագրության վավերացման համար ճանապարհային քարտեզի նախապատրաստման գործընթացում աջակցություն տրամադրելու, ինչպես նաև Արձանագրության պահանջները կատարելու հարցում Հայաստանի իշխանություններին օժանդակելու համար թիրախներ և միջոցներն մշակելու նպատակով՝ այդպիսով ազգային մակարդակում հանրության կյանքի և առողջության պահպանու-

<sup>69</sup> Աղետների ռիսկի նվազեցումը և արտակարգ իրավիճակների կառավարումը Հայաստանում. Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ մեխանիզմ «Հայաստան՝ Աղետների ռիսկի կառավարման և նվազեցման ինստիտուցիոնալ կառուցվածքները», Համաշխարհային բանկ, 2009թ.:



մը թե՛ անհատական, և թե՛ կոլեկտիվ հայեցակետերի առումներով խթանելու, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարումը և օգտագործումը, այդ թվում՝ Էկոհամակարգերի պահպանությունը բարելավելու, անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները բարելավելու, ինչպես նաև ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների թիվը վերահսկելու և կրճատելու նպատակով:

- ▶ երկրին աջակցության տրամադրում այնպիսի կարողությունների ամրապնդման հարցում, որոնք հնարավորություն կտան մշակելու կանաչ տնտեսության անտառային ոլորտում ազգային միջոցառումների ծրագիր, կայուն կառավարման համար ազգային հաշվետվողականության համակարգ՝ անտառների կառավարման գնահատման համակարգի (SEMAFOR) միջոցով. Կառավարությանը՝ կլիմայի փոփոխության և էներգետիկ արդյունավետության հետ կապված խնդիրների հաղթահարման հարցում աջակցության տրամադրում հետևյալի միջոցով՝ ա) կլիմայի փոփոխության մեղմման քաղաքականության մշակում և փոփոխությունների մեղմման գնահատման, հաշվետվությունների ներկայացման և ստուգման համակարգի ստեղծում, բ) էներգետիկ արդյունավետության խթանում և ներպետական օրենսդրության մեջ էներգետիկ արդյունավետության նվազագույն չափանիշների ներմուծում, գ) համայնքային էներգետիկ պլանավորման համար ցածր ածխածնային զարգացման սկզբունքների և գործելակերպերի ներմուծում և նորարարական մեխանիզմների կիրառման համար պատշաճ միջավայրի խթանում, դ) Հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի մշակման և գյուղական համայնքներում հարմարվողականության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման հարցում օժանդակության տրամադրում, ե) էներգաարդյունավետության և պաշարների օգտագործման արդյունավետության խթանում բնակելի տնտեսություններում, հանրային և ար-

դյունաբերական ոլորտներում, ինչպես նաև աջակցության տրամադրում վերականգնվող էներգետիկայի խթանման հարցում:

- ▶ Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) քաղաքականության ծրագրի իրականացմանը և աղետների ու կլիմայի փոփոխությունների հետ կապված ռիսկերի կառավարման ու դրանց նկատմամբ դիմակայունության ձևավորման սկզբունքների ու գործելակերպերի՝ ազգային և տեղական մակարդակներում զարգացման օրակարգում ներառելուն ուղղված աջակցության տրամադրում:
- ▶ Էկոհամակարգերի վրա հիմնված (այդ թվում՝ ինտեգրված ջրային պաշարների կառավարման) մոտեցումների կիրառմամբ պաշարների կայուն կառավարման գործելակերպերի ներմուծում և վտանգավոր քիմիական նյութերի ու դրանցով աղտոտված տեղանքների կառավարման հզորացում. երկրի մակարդակով փրկարար ծառայությունների կարողությունների զարգացում՝ տարատեսակ վտանգների հետ կապված ռիսկերի գնահատում կատարելու, համայնքների քարտեզագրում իրականացնելու և արտակարգ իրավիճակներում գործողություններ իրականացնելու համար:
- ▶ սեյսմիկ տեսանկյունից անվտանգ, էներգաարդյունավետ և ռեսուրսաարդյունավետ և ներառական ձկուն դպրոցների և երեխաների խնամք իրականացնող հաստատությունների ծախսարդյունավետ համակարգի ստեղծման հարցում օժանդակության տրամադրում, երեխաների կարիքները բավարարելու նպատակով կրթական միջավայրերի հարմարեցման հարցում աջակցության ցուցաբերում:
- ▶ աջակցության տրամադրում ազգային ծրագրերի մշակման հարցում՝ Հայաստանի հատուկ պահպանվող տարածքներում կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունները մեղմելու համար:

### 3. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՄԻՋՈՑ-ՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

#### Պահանջվող միջոցներ

ՄԱԿԶԱԾ-ի բյուջեն ՀՀ կառավարությանը, ՄԱԿ-ի հայաստանյան թիմին և զարգացման ոլորտում գործող երկկողմ և բազմակողմ գործընկերներին և դոնորներին ներկայացնում է նախատեսված արդյունքների իրականացմանն օժանդակելու, ինչպես նաև ֆինանսավորման հետ կապված պակասորդը լրացնելու համար պահանջվող և առկա միջոցների ընդհանուր նկարագրությունը: Այն հանդիսանում է միջոցների ընդհանուր հավաքագրման հիմքը և նպաստում է ՀՀ կառավարությանը և ՄԱԿ-ի համակարգին աջակցություն տրամադրելու գործընթացին: ՄԱԿ-ի գործակալությունների կողմից տրամադրվող ֆինանսավորումը ներառում է սովորական աղբյուրներից ստացված կամ հիմնական միջոցները և այլ, կամ ոչ հիմնական միջոցները, որոնք ՄԱԿ-ի գործակալությունները կարող են հավաքագրել՝ ակնկալվող արդյունքների կատարումը և ռազմավարությունների իրականացումն ապահովելու նպատակով: Բյուջեի ծավալները մոտավոր են և ենթակա են փոփոխության՝ ՄԱԿ-ի գործակալությունների ղեկավար մարմինների կամ ներքին ղեկավարության որոշումների համաձայն: «Սովորական աղբյուրներից ստացված միջոցներ» և «Այլ միջոցներ» տողերը չեն ներառում արտակարգ իրավիճակներում օգնության կոչերին ի պատասխան ստացված ֆինանսավորումը:

ՄԱԿԶԱԾ-ի ամբողջական իրագործման համար պահանջվող հաշվարկված ընդհանուր գումարը կազմելու է **119,245,000 ԱՄՆ դոլար**, որից 16,575,000 ԱՄՆ դոլարը կազմում են սովորական աղբյուրներից ստացված կամ հիմնական միջոցները և 28,270,000 ԱՄՆ դոլարը՝ մյուս ոչ հիմնական միջոցները: Ֆինանսավորման հաշվարկված ընդհանուր պակասորդը կազմում է 74,400,000 ԱՄՆ դոլար, որն անհրաժեշտ կլինի հավաքագրել ՄԱԿԶԱԾ-ի իրագործման ժամանակահատվածի ընթացքում: Պահանջվող միջոցների ընդհանուր համառոտ նկարագրությունն ամփոփված է ստորև ներկայացված աղյուսակում:

#### Միջոցների հավաքագրում

ՄԱԿ-ը Հայաստանում, ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ, մշակելու է միջոցների հավաքագրման ռազմավարություն՝ ՄԱԿ-ի Զարգացման խմբի ուղեցույցներին համապատասխան՝ ՄԱԿԶԱԾ-ի ֆինանսավորման պակասորդը, այդ թվում՝ Կառավարության համաֆինանսավորման և (կամ) ոչ դրամական ներդրումների տեսքով տրամադրվող աջակցության միջոցով, լրացնելու նպատակով: Որպես հիմք ընդունելով Հայաստանում ՄԱԿ-ի հայաստանյան թիմի ներգրավվածության ընդհանուր տեսլականը՝ միջոցների համատեղ հավաքագրման ռազմավարությունը պետք է՝

- ներառի զարգացման արտաքին միջավայրի և Հայաստանում զարգացման ոլորտում գործող գործընկերների առաջնահերթությունների վերլուծությունը.
- բացահայտի այն հնարավոր ոլորտները, որոնք, հաշվի առնելով դրանց զարգացման առաջնահերթությունները և համեմատական առավելությունները, ՄԱԿ-ի հայաստանյան թիմին հնարավորություն կտան առավելագույնս հաջողելու միջոցների համատեղ հավաքագրման գործում.
- ամրապնդի ՄԱԿ-ի հայաստանյան թիմի՝ միջոցների հավաքագրման կարողությունները՝ խորացնելով հարաբերությունների կառավարման և ֆինանսական միջոցների ներգրավման վերաբերյալ նրանց գիտելիքները:

Ռազմավարությունը կսահմանի ֆինանսական միջոցների համատեղ ներգրավմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակը և կհամալրվի յուրաքանչյուր գործակալության համար մշակված՝ միջոցների հավաքագրման ռազմավարություններով: Այս ռազմավարությամբ կսահմանվեն պարտականությունների շրջանակը և ղեկավար սկզբունքները, ֆինանսական միջոցների ներգրավման մեխանիզմները, ցուցանիշները և հաշվետվությունների ներկայացման հետ կապված պայմանավորվածությունները:

**Աղյուսակ. Պահանջվող միջոցները՝ ըստ ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների (2016-2020թթ.)<sup>70</sup>**

Ոլորտներ և արդյունքներ		Բյուջեի մոտավոր ծավալներ (ԱՄՆ դոլար)			
		Սովորական աղբյուրներից ստացված միջոցներ (ապահովված)	Այլ միջոցներ (ապահովված)	Հավաքագրման ենթակա միջոցներ	Ընդամենը
<b>1-ին սյուն. Արդարացի, կայուն տնտեսական զարգացում և աղքատության կրճատում</b>					
Արդյունք 1	ՄԱԶԾ	500,000	6,500,000	6,500,000	13,500,000
	ՊԳԿ	1,400,000	2,600,000	1,000,000	5,000,000
	ՄԱԱԶԿ	0	1,210,000	4,000,000	5,210,000
	ՄՄԿ	0	2,000,000	1,000,000	3,000,000
	ՄԱԿ ՓԳՀ	700,000	100,000	2,000,000	2,800,000
	ՊՀԾ	0	2,000,000	4,000,000	6,000,000
	ՄԱԿ ԵՏՀ	20,000	0	350,000	370,000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>2,620,000</b>	<b>14,410,000</b>	<b>18,850,000</b>	<b>35,880,000</b>
<b>2-րդ սյուն. Ժողովրդավարական կառավարում</b>					
Արդյունք 2	ՄԱԶԾ	400,000	0	6,000,000	6,400,000
	ՄԱԲՀ	450,000	0	300,000	750,000
	ՄՄԿ	0	0	300,000	300,000
	ՄԱՄՀ	250,000	0	400,000	650,000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1,100,000</b>	<b>0</b>	<b>7,000,000</b>	<b>8,100,000</b>
Արդյունք 3	ՄԱԲՀ	400,000	0	500,000	900,000
	ՄԱԶԾ	200,000	300,000	2,200,000	2,700,000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>600,000</b>	<b>300,000</b>	<b>2,700,000</b>	<b>3,600,000</b>
Արդյունք 4	ՄՄԿ	0	0	3,500,000	3,500,000
	ՄԱԿ ՓԳՀ	500,000	100,000	10,000,000	10,600,000
	ՄԱԶԾ	100,000	0	3,500,000	3,600,000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>600,000</b>	<b>100,000</b>	<b>17,000,000</b>	<b>17,700,000</b>
<b>3-րդ սյուն. Սոցիալական ծառայություններ և ներառում</b>					
Արդյունք 5	ՄԱՄՀ	500,000	0	500,000	1,000,000
	ՄԱԲՀ	300,000	0	300,000	600,000
	ՊՀԾ	6,000,000	0	12,000,000	18,000,000
	ՄԱԿ ՓԳՀ	300,000	150,000	2,000,000	2,450,000
	ՄԱԿԳՄԿ	0	0	100,000	100,000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>7,100,000</b>	<b>150,000</b>	<b>14,900,000</b>	<b>22,150,000</b>
Արդյունք 6	ՄԱՄՀ	400,000	200,000	800,000	1,400,000
	ՄԱԲՀ	550,000	0	500,000	1,050,000
	ԱՀԿ	250,000	0	0	250,000
	ՄԱԶԻԱՀ	80,000	0	200,000	280,000
	ՄԱԿ ՓԳՀ	200,000	0	500,000	700,000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1,480,000</b>	<b>200,000</b>	<b>2,000,000</b>	<b>3,680,000</b>
<b>4-րդ սյուն. Շրջակա միջավայրի կայունություն և դիմակայունության ձևավորում</b>					

<sup>70</sup> Թվերը ներկայացնում են պահանջվող միջոցների միայն մոտավոր ծավալը: Դրանք 2015թ. հունվարի դրությամբ կատարված հաշվարկներ են և կախված կլինեն ՄԱԿ-ի գործակալությունների կողմից տրամադրվող սովորական աղբյուրներից ստացված և այլ միջոցների, ինչպես նաև դոնորների կողմից կատարվող նվիրատվությունների առկայությունից:

Ոլորտներ և արդյունքներ		Բյուջեի մոտավոր ծավալներ (ԱՄՆ դոլար)			
		Սովորական աղբյուրներից ստացված միջոցներ (ապահովված)	Այլ միջոցներ (ապահովված)	Հավաքագրման ենթակա միջոցներ	Ընդամենը
Արդյունք 7	ՄԱԶԾ	650,000	12,000,000	5,000,000	17,650,000
	ՄԱՄՀ	500,000	0	3,000,000	3,500,000
	ՄԱԱԶԿ	0	1,010,000	4,100,000	5,110,000
	ՊԳԿ	600,000	100,000	300,000	1,000,000
	ՄԳՀԳ	500,000	0	0	500,000
	ՄԱԿ ԵՏՀ	160,000	0	315,000	475,000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>2,410,000</b>	<b>13,110,000</b>	<b>12,715,000</b>	<b>28,235,000</b>
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ՝</b>				<b>119,245,000</b>	

#### 4. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

ՀՀ վարչապետի և ՄԱԿ-ի մշտական համակարգողի ղեկավարության ներքո ռազմավարական մակարդակում կստեղծվի **ՄԱԿԶԱԾ-ի համատեղ ազգային համակարգող խորհուրդ** (ՀԽ): ՀԽ-ը կիրականացնի ՄԱԿԶԱԾ-ի իրագործմանն ուղղված համակարգման, ուղղորդման գործառնություններ և կաջակցի ՄԱԿԶԱԾ-ի իրագործման գործընթացին: ՄԱԿ-ի գործակալությունները, հիմնադրամները և ծրագրերը երկրի համար կմշակեն այնպիսի ծրագրեր, նախագծեր և միջոցառումներ, որոնք կհամապատասխանեն սույն փաստաթղթում ամրագրված արդյունքներին և ռազմավարություններին: Խարսխված լինելով ՄԱԿ-ի համեմատական առավելությունների վրա, ծրագրերը կմշակվեն՝ կիրառելով համաշխարհային լավագույն գործելակերպերը՝ գործողությունների շրջանակն ամբողջ պետության տարածքում աստիճանաբար ընդլայնելու նպատակով, ինչպես նաև նորարար մոտեցումների փորձնական կիրառմամբ: Ծրագրի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու և զարգացման արդյունքների կատարմանն աջակցելու նպատակով ՄԱԿ-ի հայաստանյան թիմը, նպատակահարմարության դեպքում, կաշխատի համատեղ ծրագրերի շրջանակներում՝ կրկնությունները և գործառնական

ծախսերը կրճատելու, համատեղ սերտ գործունեությունն ամրապնդելու և մանդատների ու ծախսարդյունավետության փոխլրացում կատարելու համար: Ստորև նկարագրված համակարգման և իրականացման մեխանիզմների օգնությամբ ՀՀ կառավարությունը և ՄԱԿ-ի գործակալությունների ղեկավարները կվերահսկեն ՄԱԿԶԱԾ-ի իրագործման բոլոր ռազմավարական և գործառնական հայեցակետերը և մոնիտորինգի կենթարկեն ՄԱԿԶԱԾ-ի առաջընթացը: ՄԱԿԶԱԾ-ի արդյունավետ պլանավորումը, համակարգումը, ժամանակին իրագործումը, զարգացման արդյունքների մոնիտորինգը և գնահատումն ապահովելու նպատակով յուրաքանչյուր սյունի շրջանակում ՄԱԿ-ի աջակցող գործակալությունների կողմից կստեղծվեն ՄԱԿԶԱԾ-ի **արդյունքի խմբեր**, որոնց կազմում կընդգրկվեն ներկայացուցիչներ Հայաստանի կառավարությունից և քաղաքացիական հասարակության գործընկերներից: Նրանք հաշվետու կլինեն ՄԱԿԶԱԾ-ի Համակարգող խորհրդին և կապահովեն համակարգման և համաձայնեցված գործողությունների իրականացման բարձր մակարդակ ՀՀ կառավարության, քաղաքացիական հասարակության գործընկերների և ՄԱԿ-ի գործակալությունների կողմից տրամադրվող օժանդակության շրջանակներում:

## ՄԱԿԶԱԾ-ի համակարգող խորհուրդ

ՄԱԿԶԱԾ-ի համակարգող խորհուրդը (ՀԽ) ՄԱԿԶԱԾ-ի իրագործման ընթացքում կիրականացնի ընդհանուր ռազմավարական ուղղորդում, այդ թվում՝ մոնիտորինգի, հաշվետվությունների ներկայացման և գնահատման հարցերում: Այն կիրականացնի խորհրդատվական գործառնայթ և կհաստատի ՄԱԿԶԱԾ-ի իրագործման վերաբերյալ ընդունված ռազմավարական որոշումները:

ՀԽ-ի համանախագահները կլինեն ՀՀ վարչապետի գրասենյակի համապատասխան ներկայացուցիչը և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողը: Խորհրդի կազմում ընդգրկված կլինեն նաև ներկայացուցիչներ Կառավարության հիմնական գործընկերներից, այդ թվում՝ 2016-2020 թվականների ՄԱԿԶԱԾ-ում ներգրավված ճյուղային նախարարություններից, ՄԱԿ-ի հայաստանյան թիմի անդամներից և, անհրաժեշտության դեպքում, նաև ՄԱԿ-ի այլ գործակալություններից: Խորհուրդը կապահովի քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի գործընկերների ներկայացուցիչների մասնակցությունը՝ ելնելով ՀԽ-ի օրակարգային անհրաժեշտությունից:

ՀԽ-ը կգործի ՄԱԿԶԱԾ-ի իրականացման ամբողջ շրջափուլի ընթացքում և կկազմակերպի հանդիպումներ՝ համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան՝ ստորև ներկայացված առանցքային գործառնայթների իրականացումն ապահովելու նպատակով. այդպիսով, պետք է՝

- ▶ վերանայել ՄԱԿԶԱԾ-ի ընդհանուր իրագործման արդյունավետությունը և գնահատել արդյունքները՝ որոշելով դրանց համապատասխանության աստիճանը ազգային առաջնահերթությունների իրականացմանը նպաստելու առումով.
- ▶ ուսումնասիրել լուրջ խոչընդոտները և ծրագրի իրագործման ընթացքում քաղաճ դասերը, հետագա ռիսկերը և այն լավագույն գործելակերպերը, որոնց կիրառության շրջանակը կարելի է աստիճանաբար ընդլայնել, նաև կայացնել որոշումներ դրանց վերաբերյալ.
- ▶ ուսումնասիրել և հաստատել ակնկալվող արդյունքներում, ռազմա-

վարություններում և ռեսուրսներում ճշգրտումներ կատարելու անհրաժեշտությունը՝ ՄԱԿ-ի և ՀՀ կառավարության ռեսուրսներն առավել արդյունավետ կերպով համադրելու արդյունքում ավելի մեծ ազդեցություն ապահովելու համար.

- ▶ սատարել և ուղղորդել Հայաստանում ՄԱԿԶԱԾ-ի իրագործմանն ուղղված միջոցների հավաքագրման հարցում.
- ▶ համաձայնության գալ ՄԱԿԶԱԾ-ի վերջնական գնահատման շուրջ և վերահսկել դրա իրականացումը ՀԽ-ի անդամների կողմից համաձայնեցված ժամկետներում:

ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակը կօժանդակի ՀԽ-ի աշխատանքների իրականացմանը՝ գործելով որպես քարտուղարություն:

## Արդյունքի խմբեր

Արդյունքի խմբերը (ԱԽ) առանցքային դերակատարում ունեն որպես ՄԱԿԶԱԾ-ի արդյունավետ իրագործման աջակցող մեխանիզմ և դա ապահովում են ակնկալվող արդյունքների հետ կապված համատեղ մոնիտորինգի իրականացման և առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման միջոցով: ԱԽ-երը կապահովեն տեղեկությունների փոխանակումը, կհետազոտեն նախատեսված գործողությունների ու արդյունքների կատարման առումով գրանցված առաջընթաց և հաշվետվություններ կներկայացնեն դրանց վերաբերյալ, ինչպես նաև կառանձնացնեն քաղված դասերը, լավագույն գործելակերպերը, ինչպես նաև ընդհանուր արդյունքների, ռազմավարությունների ու ռեսուրսների բաշխման հարցում պահանջվող ճշգրտումները:

ԱԽ-երը ձևավորվելու են յուրաքանչյուր սյունի շրջանակում ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի միջև ձեռք բերված համաձայնությամբ՝ արդյունավետ պլանավորման և համակարգման, ինչպես նաև զարգացման արդյունքների ժամանակին կատարումն ապահովելու նպատակով: Դրանց համանախագահները կլինեն ՄԱԿ-ի համապատասխան գործակալության ղեկա-

վարը կամ նրա պատվիրակված տեղակալը և ՀՀ կառավարության համապատասխան նախարարությունը ներկայացնող որևէ բարձրաստիճան պաշտոնատար անձ: ԱԽ-երի կազմում ընդգրկված կլինեն նախարարությունների, դրանց վարչությունների և պետական գործակալությունների աշխատակազմերի անդամներ, ներկայացուցիչներ ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և ծրագրի տվյալ արդյունքի կատարմանն աջակցող՝ ՄԱԿ-ի գործակալություններից: ՄԱԿ-ի համապատասխան գործակալությունը ներկայացնող համանախագահը պատասխանատու կլինի տվյալ արդյունքի խմբին քարտուղարությանն առնչվող հարցերում աջակցություն տրամադրելու համար: ԱԽ-երը կանոնավոր կերպով անցկացնելու են հանդիպումներ և գործելու են տարեսկզբին ՄԱԿ-ի հայաստանյան թիմի և ՀԽ-ի կողմից հաստատվող ամենամյա աշխատանքային ծրագրերի հիման վրա: Ծրագրի իրականացման ընթացքում ԱԽ-ի հանդիպումներն անցկացվելու են տարեկան առնվազն երկու անգամ՝ ՀԽ-ի հանդիպումներից առաջ: Անհրաժեշտության դեպքում, համանախագահները կարող են ավելի հաճախ կազմակերպել իրենց հանդիպումները: ԱԽ-երն իրենց պարտականությունների շրջանակներում պետք է՝

- ▶ վերահսկեն ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների կատարման առումով գրանցված առաջընթացը համաձայնեցված ցուցանիշների միջոցով և հետագծեն այդ արդյունքների համապատասխանության աստիճանը ազգային առաջնահերթությունների իրականացմանը նպաստելու առումով.
- ▶ արդյունքերի ցուցանիշների համար հավաքեն տվյալներ և գտնեն ու առաջարկեն լուծումներ տվյալների հետ կապված բացը լրացնելու համար.
- ▶ ուսումնասիրեն լուրջ խոչընդոտները և ծրագրի իրագործման ընթացքում քաղաճ դասերը, հետագա ռիսկերը և այն լավագույն գործելակերպերը, որոնց կիրառության շրջանակը կարելի է աստիճանաբար ընդլայնել, նաև կայացնեն որոշումներ դրանց վերաբերյալ՝ դրանք այնուհետև ներկայացնելով ՀԽ.
- ▶ ուսումնասիրեն ակնկալվող արդյունք-

ներում, ռազմավարություններում և ռեսուրսներում ճշգրտումներ կատարելու անհրաժեշտությունը և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնեն ՀԽ:

- ▶ ուսումնասիրեն ծրագրի իրագործման առաջընթացը և գրանցված առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններ կայացնեն ՀԽ:

Տարվա վերջում արդյունքի խմբերն իրականացնելու են տարեկան առաջընթացի վերանայում՝ ըստ ՄԱԿԶԱԾ-ի համապատասխան սյունի: Ելակետային տվյալների նկատմամբ գրանցված առաջընթացը հետագծելու/վերահսկելու նպատակով կօգտագործվի ՄԱԿ ՄՀ-ի գրասենյակի կողմից մշակված՝ ինտերնետային տեխնոլոգիաների վրա հիմնված՝ ՄԱԿԶԱԾ-ի մոնիտորինգի և գնահատման գործիքը: ՄԱԿ ՄՀ-ի գրասենյակը կպատրաստի համատեղ կազմված՝ տարեկան առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը, որում կընդգրկվեն նաև ԱԽ-երի վերանայումները: Տարեկան առաջընթացի վերանայումները կմիավորվեն տարեկան առաջընթացի վերաբերյալ հաշվետվության մեջ, որն էլ կարտացոլվի ՄԱԿ ՄՀ-ի և ՄԱԿԶԱԾ-ի տարեկան առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններում: Տարեկան առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը կներկայացվի, կքննարկվի և վերլուծության կենթարկվի ՀԽ-ի հանդիպման ժամանակ՝ ՄԱԿԶԱԾ-ի արդյունավետ իրագործման վերաբերյալ հետագա ուղղորդում տրամադրելու նպատակով:

ՄԱԿԶԱԾ-ի արդյունքի խմբերի գործողությունները, հնարավորության դեպքում, համակարգվելու/համաձայնեցվելու են ազգային համակարգման մեխանիզմների կողմից իրականացվող աշխատանքների հետ<sup>71</sup> ազգային տնօրենների ինստիտուցիոնալ կառուցվածքի և համապատասխան նախարարության առանցքային պատասխանատուների՝ որպես ՄԱԿԶԱԾ-ի թեմատիկ խմբերի համանախագահներ հանդես գալու միջոցով:

<sup>71</sup> Հիմնական ազգային մեխանիզմները ներառում են՝ ՀՀ վարչապետին կից գործող՝ կայուն զարգացման ազգային խորհուրդը, Աղետների ռիսկի նվազեցման ազգային պատճիորմը, ՀՀ-ում տղամարդկանց և կանանց հավասարության հիմնահարցերով խորհուրդը, ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդը, ՀՀ վարչապետին առընթեր՝ ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը, Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհուրդը, ՀՀ վարչապետին կից գործող՝ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, Հայաստանում ՄԻԱԿ/ՉԻԱՀ-ի, տուրեքլոյզի և մայարիայի դեմ պայքարի միջոցառումները համակարգող հանձնաժողովը և այլ մեխանիզմներ:

## Գործառնությունների կառավարման թիմ

ՄԱԿ-ի գործակալությունների միջև համագործակցությունը գործառնությունների մակարդակում կիրականացվի գործառնությունների կառավարման թիմի (ԳԿԹ) կողմից ընդհանուր բնույթի ծառայությունների տրամադրման շրջանակներում: Այդ ծառայությունները նպատակաուղղված են՝ խթանելու ՄԱԿ-ի գնումների համակարգի արդյունավետությունը, ֆինանսական միջոցների առավելագույնս օգտագործումը՝ ի նպաստ գործակալությունների մանրատների և կատարած աշխատանքների տարբերակմանը, ինչպես նաև համագործակցության միջոցով ավելի արդյունավետ և ծախսարդյունավետ կերպով տեղական շուկայից գնված ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելուն՝ դրանով կրճատելով գործառնական ծախսերը և բարելավելով գին-որակ հարաբերակցությունը:

ԳԿԹ-ը ՄԱԿ-ի հայաստանյան թիմին աջակցություն և խորհրդատվություն է տրամադրում բիզնես գործարքները ներդաշնակեցնելուն և ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների կատարման օժանդակելուն ուղղված ջանքերում: Թիմն ընդհանուր բնույթի ծառայություններ կտրամադրի գնումների, մարդկային ռեսուրսների, ՏՀՏ-ի, նյութատեխնիկական սպասարկման և տրանսպորտային ոլորտներում՝ հետամուտ լինելով դրանց բարձր որակի, արդյունավետության և ծախսարդյունավետության ապահովմանը: Սա նպատակ ունի ամրապնդելու ընդհանուր բնույթի ծառայությունների տրամադրումը՝ համախմբելով երկրում գործող ՄԱԿ-ի գործակալությունների տարբեր ռեսուրսները, կարողությունները և հնարավորությունները: Այս ընդհանուր ոլորտներում համատեղ նախաձեռնությունների իրականացումը հնարավորություն կտա զգալի խնայողություններ անել ներդրումներում, ինչպես նաև շահագործման հետ կապված ծախսերի և ժամանակի առումով, նաև կհանգեցնի տվյալ ծառայությունների արդյունավետության և մատուցման մակարդակի բարելավմանը: Ընդհանուր գնումների իրականացման արդյունքում առաջատար գործակալությունների կողմից կկնքվեն մի շարք երկարաժամկետ պայմանագրեր (ԵԺՊ-եր), որոնք հետագայում կարող են օգտագործվել բոլորի կողմից՝ ընդհանուր առմամբ շահավետ

պայմաններ ապահովելով գնումների վրա ծախսվող ժամանակի, ծառայության արժեքի և կառավարման արդյունավետության տեսանկյունից: ԳԿԹ-ը գործում է ՄԱԿ-ի հայաստանյան թիմի ղեկավարության ներքո, դրա նախագահն է ՄԱԶԾ-ի գործառնությունների ղեկավարը և կազմում ընդգրկված են ՄԱԿ-ի յուրաքանչյուր գործակալության՝ գործառնությունների կամ վարչական գծով պատասխանատու պաշտոններ զբաղեցնող անձինք: ԳԿԹ-ն իր պարտականությունների շրջանակներում պետք է՝

- ▶ իրագործի այնպիսի ընդհանուր բիզնես լուծումներ, ինչպիսիք են մրցույթների և հայտերի ներկայացման ընդհանուր գնումների համակարգերը, համատեղ գնումների ԵԺՊ-երը, ՏՀՏ-ի ընդհանուր պլատֆորմները, բանկային մեխանիզմները, գրասենյակի անվտանգության և մարքրման ծառայությունները.
- ▶ կկատարի գնահատումներ և ՄԱԿ-ի հայաստանյան թիմին կներկայացնի առաջարկություններ համատեղ նախաձեռնությունների համար իրենց հաստատումը պահանջող ցանկացած գործողության վերաբերյալ, որը նպատակաուղղված կլինի առկա ընդհանուր ծառայությունների և շինությունների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, իրականացնի մոնիտորինգ և ՄԱԿ-ի հայաստանյան թիմին հաշվետվություններ ներկայացնի առաջընթացի վերաբերյալ՝ բիզնեսի աջակցման ուղղված ծառայությունների ավելի բարձր որակը, արդյունավետությունն և ծախսարդյունավետությունն ապահովելու համար: ԳԿԹ-ի կողմից կստեղծվի մոնիտորինգի համակարգ, որը կներառի ելակետային տեղեկություններ ընդհանուր ծառայությունների/բիզնես գործարքների ընթացիկ վիճակի վերաբերյալ՝ դրանց ցուցիչների և սահմանված թիրախների հետ միասին: Մոնիտորինգի համակարգի օգնությամբ հնարավոր կլինի գնահատել գրանցված առաջընթացը՝ ծախսերի խնայողության և արդյունավետության առումով ձեռքբերումների տեսանկյունից և զեկուցել դրանց վերաբերյալ.
- ▶ ընդհանուր բիզնես լուծումների նպա-

տակների և ակնկալվող արդյունքների մասին արդյունավետ կերպով հաղորդի ՄԱԿ-ի անձնակազմի բոլոր անդամներին և երկրի շահագրհիռ գործընկերներին:

### Հաղորդակցության խումբ

ՄԱԿ-ի հաղորդակցության խումբը (ՄԱԿՀԽ) շարունակելու է գործել՝ հաշվի առնելով հասարակության հետ կապերի և քարոզչության անհրաժեշտությունը, կարևորությունը և այն զգալի դերակատարությունը, որ դրանք կարող են ունենալ ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների կատարումն ապահովելու և Հայաստանում ՄԱԿ-ի ուժեղ և միասնական համակարգի հեղինակության ամրապնդմանը նպաստելու հարցում: ՄԱԿՀԽ-ը կխթանի ՄԱԿ-ի արժեքները, չափանիշները ու նորմերը և կբարձրացնի դրանց մասին իրազեկվածության մակարդակը, կամրապնդի միջգերատեսչական համագործակցությունը հաղորդակցության տեսանկյունից, ինչպես նաև երկրի մասկարդակով կբարձրացնի ՄԱԿ-ի դրական հեղինակությունը և կխթանի զանգվածային լրատվամիջոցներում ՄԱԿ-ի գործունեության առավել լայն լուսաբանումը: Այս ամենն իրականացնելու համար ՄԱԿՀԽ-ը հանդես կգա միասնական հաղորդագրություններով՝ խթանելով ՄԱԿԶԱԾ-ի միջոցով ազգային զարգացման գործընթացում ՄԱԿ-ի ունեցած ներդրման մասին իրազեկվածությունը և ընկալումը, ինչպես նաև նպաստելով հիմնական շահագրգիռ կողմերի հետ գործընկերության ամրապնդմանը: ՄԱԿՀԽ-ի հիմնական նպատակներն են՝

- ▶ առաջատար դիրքեր ապահովել ՄԱԿ-ի հայաստանյան թիմի անունից հաղորդակցության ապահովման և քարոզչության իրականացման հարցերում.
- ▶ հայտնաբերել նոր և ստեղծագործական մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան ներկայացնելու, թե ինչպես են ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերը հետամուտ լինում արդյունքների կատարմանը՝ հիմնական շեշտադրումը դնելով միջգերատեսչական համագործակցության վրա, և

- ▶ նպաստել Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության հեղինակության հետևողական ամրապնդմանը:

ՄԱԿՀԽ-ի նախագահը ՄԱԿ-ի մշտական համակարգողն է: Հաղորդակցության խմբում ընգրկված են հաղորդակցության ոլորտի մասնագետներ և ներկայացուցիչներ երկրի մակարդակով ՄԱԿ-ի գործակալությունների, հիմնադրամների և ծրագրերի՝ զանգվածային լրատվամիջոցների հետ կապերի համար առանցքային պատասխանատուներից: ՄԱԿ-ի տեղեկատվության վարչությունը հանդես է գալիս որպես խմբի քարտուղարություն:

ՄԱԿՀԽ-ը, հետամուտ լինելով իր նպատակների իրականացմանը, կկազմի տարեկան աշխատանքային ծրագիր՝ ՄԱԿ-ի հայաստանյան թիմի կողմից սահմանված առաջնահերթությունների հիման վրա միասնական հաղորդակցության ապահովման և քարոզչության իրականացման համար: ՄԱԿՀԽ-ը նաև կմշակի ՄԱԿ-ի հաղորդակցությունների և քարոզչության միասնական ռազմավարություն՝ 2016-2020 թվականների ՄԱԿԶԱԾ-ի թեմատիկ և ծրագրային առաջնահերթություններին համապատասխան և որպես օժանդակություն՝ երկրում ԿԶՆ-ների կիրառման և իրականացման հարցում: Միասնական հաղորդակցությունների իրականացմանն ուղղված միջոցառումների համար անհրաժեշտ միջոցները կտրամադրվեն՝ ՄԱԿ-ի հայաստանյան թիմի համաֆինասավորմամբ:

## 5. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սույն ՄԱԶԱԾ-ով նախատեսված արդյունքների և ռազմավարությունների համապատասխանությունը և բարեհաջող իրագործումն ապահովելու նպատակով ստեղծվելու է մոնիտորինգի և գնահատման արդյունավետ համակարգ: Այն հիմնված է լինելու վերոնշյալ ՄԱԿԶԱԾ-ի իրագործման կառուց-



վածքի վրա և հետամուտ է լինելու հետևյալ նպատակների իրականացմանը՝ ա) թափանցիկ և շարունակական մեխանիզմների միջոցով աջակցության տրամադրում ՄԱԿ-ի գործակալություններին, և նպատակահարմարության դեպքում, նաև զարգացման ոլորտի մյուս գործընկերներին՝ իրենց աջակցող ծրագրերի և նախագծերի միջոցով արդյունքների կատարումը հետագծելու հարցում, բ) մոնիտորինգի իրականացման և գնահատման կարողությունների հզորացում ազգային գործընկերների շրջանում: ՄԱԿԶԱԾ-ի շրջանակներում մոնիտորինգի և գնահատման համակարգը ներառում է ՄԱԿԶԱԾ-ի մոնիտորինգի և գնահատման շրջանակը, ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների աղյուսակը, ՄԱԿԶԱԾ-ի տարեկան/երկամյա աշխատանքային ծրագրերը ու վերանայումները և գնահատումը: Մոնիտորինգը և գնահատումն իրականացվելու է՝ ստուգելով դրանց համապատասխանությունը ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների աղյուսակում արդյունքների և ցուցանիշների համար ներկայացված ելակետային տվյալներին: ՄԱԿ-ի հայաստանյան թիմը նաև պարտավորվում է էլ ավելի բարելավել և օգտագործել ազգային տվյալները և հաշվետվությունների ներկայացման համակարգերը:

Մոնիտորինգի և գնահատման համակարգում ներառված յուրաքանչյուր փուլում ՀՀ կառավարության ներգրավվածությունն ու կառավարման գործառնությունների իրականացումը էական նշանակություն ունեն՝ ՄԱԿԶԱԾ-ի արդյունավետ իրականացման վերաբերյալ տեղեկությունների պահանջարկը պահպանելու և արդյունավետ իրականացման վերաբերյալ այդ տեղեկություններից դասեր քաղելու, դրանց հիման վրա ռազմավարությունում և ռեսուրսներում համապատասխան ձգբրտումներ կատարելու առումով՝ ավելի մեծ ազդեցություն ապահովելու նպատակով:

## **ՄԱԿԶԱԾ-ի տարեկան վերանայում**

Կանցկացվի ՄԱԿԶԱԾ-ի վերանայման ամենամյա հանդիպում և կներկայացվի համատեղ կազմված՝ տարեկան առաջընթացի վերաբերյալ համատեղ հաշվետվությունը:

Դրանում կամփոփվեն ՄԱԿԶԱԾ-ի յուրաքանչյուր արդյունքի խմբի կողմից Տարեկան առաջընթացի վերանայումների միջոցով կազմված՝ առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունները՝ համատեղ աշխատանքային ծրագրերին համապատասխան: Տարեկան առաջընթացի վերանայումներում և համատեղ կազմված՝ տարեկան առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններում<sup>72</sup> կատարողականի վերաբերյալ ներկայացված տեղեկությունները կարտացոլվեն ՄԱԿ ՄՀ-ի, ինչպես նաև ՄԱԿ-ի աջակցող գործակալությունների տարեկան հաշվետվություններում: Համատեղ կազմված՝ տարեկան առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը կներկայացվի, կքննարկվի ՄԱԿԶԱԾ-ի ՀԽ-ի հանդիպման ժամանակ՝ ՄԱԿԶԱԾ-ի արդյունավետ իրագործման վերաբերյալ հետագա ուղղորդում տրամադրելու նպատակով:

## **ՄԱԿԶԱԾ-ի գնահատում**

Ծրագրի իրագործման շրջափուլի նախավերջին տարում կիրականացվի ՄԱԿԶԱԾ-ի անկախ գնահատում՝ ՄԱԿ-ի Գնահատման խմբի (ՄԱԿԳԽ) սահմանած չափանիշներին և ուղենշային փաստաթղթերին համապատասխան: Գնահատումը կիրականացվի ակնկալվող՝ ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների հետ համեմատությամբ գրանցված առաջընթացի և ազդեցության վերաբերյալ ՄԱԿԶԱԾ-ի գործընկերներից բովանդակային արձագանքներ ստանալու նպատակով: Ձեռքբերումներից զատ, գնահատման մեջ կներկայացվեն նաև այն խոչընդոտները, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել ՄԱԿԶԱԾ-ի իրագործման վրա: ՄԱԿԶԱԾ-ի իրագործման գործընթացի լավագույն գործելակերպերը և քաղված դասերը լայնորեն կտարածվեն թե՛ Հայաստանում և թե՛ ՄԱԿ-ի համաշխարհային ցանցում: Գնահատումը կիրականացվի ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հանձնարարությամբ և կքննարկվի ՄԱԿԶԱԾ-ի ՀԽ-ի հանդիպման ընթացքում: ՄԱԿ-ի հայաստանյան թիմը նախատեսում է և ստանձնում է գործակալությունների միջև ծախսերը բաշխելու պարտավորություն՝ մինչև 30,000

<sup>72</sup> Առաջընթացի վերաբերյալ տեղեկությունները կթարմացվեն՝ ՄԱԿ-ի զարգացման խմբի ստանդարտ գործառնական ձևաչափին և ՄԱԿԶԱԾ-ի առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ուղեցույցներին համապատասխան:

ԱՄՆ դոլար գումար չափով, ինչը հնարավորություն կտա գնահատումն իրականացնել միջազգային խորհրդատուի կողմից: Անհրաժեշտության դեպքում, կտրամադրվի լրացուցիչ ֆինանսավորում ՄԱԿ ՄՀ-ի բյուջեի միջոցներից: Գնահատման ընթացիկ կառավարումը և համակարգումը կիրականացվի ՄԱԿ ՄՀ-ի գրասենյակի կողմից՝ գործակալությունների առանցքային պատասխանատուների օժանդակությամբ:

## **Ռիսկեր և Ենթադրություններ**

Մոնիտորինգի գործընթացում առանձնակի ուշադրություն կդարձվի այն էական ռիսկերին և ենթադրություններին, որոնք կարող են վտանգել ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների կատարումը, այդ թվում՝ ա) ՄԱԿԶԱԾ-ի իրագործման ժամանակահատվածում համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը տնտեսության վրա, բ) ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարության շարունակական նպատակահարմարությունը՝ «Հեռ-2015» Զարգացման նոր օրակարգի /ԿԶՆ-ների շարունակական իրականացման առումով, գ) Լեռնային Ղարաբաղի հակամարտության հնարավոր խորացումը, դ) բնական աղետների ռիսկը և դրանց հնարավոր ծանր հետևանքները՝ կլիմայի փոփոխության կամ բնական պաշարների ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով, ե) պարտականություններ ստանձնած անձանց կողմից իրենց գործառույթներն իրականացնելու անկարողությունը, զ) ազգային ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ բարձրակարգ ծրագրեր և նախագծեր իրագործելու կարողությունների կամ հանձնառության պակասը, է) ՄԱԿԶԱԾ-ի իրագործման համար անհրաժեշտ միջոցների, այդ թվում՝ դոնորների հանձնառության պակասը, ը) ՄԱԿ-ի գործակալությունների միջև ոչ բավարար համագործակցությունը, և թ) մեծ թվով փաստականների, ներքին տեղահանման ենթարկված անձանց, միգրանտ աշխատողների չնախատեսված ներհոսքը՝ որպես տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակի վատթարացման հետևանք:

# ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ 2016-2020 ԹԹ. ՄԱԿԶԱԾ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

## Հայաստանի 2016-2020թթ. ՄԱԿԶԱԾ-ի արդյունքների արդյուսակ

### 1-ին սյուն. Արդարացի, կայուն տնտեսական զարգացում և աղքատության կրճատում

**Ազգային զարգացման նպատակներ**՝ Զբաղվածության ընդլայնում<sup>1</sup>: որակյալ և լավ վարձարվող աշխատատեղերի ստեղծման միջոցով զբաղվածության ավելացումը հռչակված է որպես ՀՅՈՒ-ի հիմնական նպատակը: Մինչև 2021թ.-ը կառավարությունը պլանավորում է ապահովել զբաղվածության ընդլայնում՝ շուրջ 135,000 աշխատատեղերով:

**ԿԶՆ-ներ**<sup>2</sup>: 8. Խթանել տնտեսական, ներքառնական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արդյունավետ գաղվածություն, ինչպես նաև արժանապատիվ աշխատանք բոլորի համար, 8.5. մինչև 2030թ.-ը ապահովել լիարժեք և արդյունավետ գաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլոր կանանց և տղամարդկանց, այդ թվում՝ երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև ապահովել հավասարաստի վարձարվողություն համարժեք աշխատանքի դիմաց, 8.6. մինչև 2020թ.ը զգալիորեն նվազեցնել զբաղվածության, կրթության կամ ուսման ոլորտում չընդգրկված երիտասարդների համամասնությունը՝ բոլոր մակարդակներում:

Արդյունքներ	Ցուցանիշներ, ելակետեր, թիրախներ	Ստուգման միջոցներ	Ենթադրություններ և ռիսկեր	ՄԱԿ-ի աջակցող գործակալություններ և գործընկերներ	Միջոցների մոտավոր ծավալներ՝ 2016-2020թթ. (ԱՄՆ դոլար) <sup>3</sup>
